

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԱՐԴԵ- ՄԵՔԵՆԱ

612
9-93

ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ.
ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1929

20 JUL 20

612
F-93
num

Մ. ԳՐԵՄԱՑԿԻՅ

ՄԱՐԴԸ-ՄԵՔԵՆԱ

324

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՄՊՍԿՎ, 1928

ՄԱՐԴԸ—ՄԵՔԵՆԱ

Թարգմ. Հ. Սարգսյան



43

Կարդալով այս գրքույկի վերնագիրը՝ յերեկի վոմանք կասեն։ «Ի՞նչ անմիտ, անհեթեթ բան, մեզ՝ կենդանի մարդկանց» ակսել են արդեն անվանել մեքենաներ։ Բայց չե՞ վոր մենք յերկաթից չենք շինված։ մենք ուտում, խմում ենք, քայլում ենք, զգում ենք, ցանկանում ենք, մի խոսքով ապրում ենք, իսկ մեզ ուղում են համեմատել մեռած մեքենաների հետ։ Այդ մինչեւ անդամ վիրավորական ե»։ Սակայն այդպես ասողները, յեթե կարդան այս գրքույկը և մտածեն նրա մեջ շոշափված հարցերի մասին, կտեսնեն, վոր այդ անունը բոլորովին չի վիրավորում մարդկային արժանապատվությունը։ Ի՞նչ ամաչելու բան կա, վոր մեր մարմինն իր կառուցվածքով և աշխատանքով նման լինի մի հրաշալի մեքենայի։ Ընդհակառակը, դա պետք է մեզ միայն ուրախություն պատճառի։ Իսկ թե ի՞նչու, դրա պատասխանը կտաք ինքներդ, յերբ կկարդաք այս գրքույկի մի քանի յերեսները։

«Ի՞նչո՞վ ե հապա մարդը նման մեքենային» — կհարցնեք դուք։ Իսկ յես կպատասխանեմ նույնպես մի հարցով։ «Ի՞նչո՞վ են ամենից շատ գնահատում մարդուն»։ — Նրա կատարած աշխատանքով։ «Իսկ ի՞նչու համար են մեքենաները»։ — Աշխատանքի համար։ Անա դուք ինքներդ եք տալիս ձեր հարցի պատասխանը։ մարդը նման է մեքենային ամենից առաջ իր աշխատանքով։ Թե՛ մարդը և թե մեքենան աշխատում են, և հենց դրա մեջ ե նրանց գլխավոր եյտթյունը, նրանց գլխավոր նմանությունը։

Գուցե լնթերցողը համաձայն չե ինձ հետ և առարկում
ե. «Թող այդպես լինի. աշխատում ե թե մարդը և թե մե-
քենան, բայց չե վոր նրանց աշխատանքը տարբեր ձեռվ
ե կատարվում: Մեքենան, որինակ վերցնենք հենց շոգե-
մեքենան, աշխատում ե, վորովհետև նրան շարժման մեջ
ե դնում գոլորշին (կամ մի այլ արտաքին ույժ). այդ
գոլորշին ստացվում ե ջուրը տաքացնելով կաթսայի մեջ,
իսկ զբա համար վառում են վառարանը, վորտեղ այր-
վում ե փայտ կամ քարածուխ: Նշանակում ե, մեքենայի
աշխատանքը կատարվում ե ի հաշիվ գողծաղրվող վա-
ռելանյութի: Այդպես ե մեքենան, իսկ մարդը: Մարդը
բոլորովին այլ ե. նա աշխատում ե ինքը, իր ներքին
ցանկությամբ և վոչ մի վառելանյութ չի պահանջում:
Վերջապես, մարդս կարող ե իր ամբողջ կյանքը ապրել
առանց վորեե բան անելու. նրա փոխարեն կարող են
աշխատել ուրիշները. այդպիսի մարդուն կարելի յե միթե
համեմատել մեքենայի հետ:

Պատասխանելու համար նախ և առաջ քննության առնենք
վերջին առարկությունը. չե վոր մեքենաների և մեքենա-
յիկների մեջ կան այնպիսիները, վորոնք յերբեք չեն կա-
տարում վորեե ոգտակար աշխատանք: Այդպես են, որինակ,
խաղալիքները: Անա այդպես մարդկանց մեջ ևս կան այն-
պիսիները, վորոնք վոչինչ չեն անում, ապրում են միայն
զվարճության համար. զրանք ել խաղալիքանման մարդիկ
են: Դրանց մասին չարժե լուրջ կերպով խոսել, բայց պետք ե
ասենք, վոր զրանք ինչքան ել ծույլ լինեն, այնուամենայնիվ
կատարում են վորոշ աշխատանք: Վոչ վոք չի կարող խու-
սափել աշխատանքից. չե վոր նույնիսկ այն ժամանակը
յերբ մարդ քնած ե, դարձյալ վորոշ աշխատանք ե կատա-
րում. այսպես, որինակ, նրա սիրտը գործում ե, շնչառական
շարժումները շարունակում են իրենց գործը, մարսողական
գործարանների մեջ մարսվում ե ներս ընդունած կերա-
կուրը, արյունը շարժվում ե ամբողջ մարմի մեջ, իսկ յե-
րազելու ժամանակ՝ աշխատում ե ուղեղը:

ԹԵ ԻՆՉ ՈՒՅԺ Ե ԱՇԽԱՏՈՒՄ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԵԶ

Մեր մարմնի մեջ, քանի ապրում ենք մենք, կատարվում ե
յեռուն աշխատանք: Այդ աշխատանքն անհրաժեշտ ե մեր
կյանքի պահպանման համար. քանի ամեն ինչ կարգին ե
գնում, մենք այդ աշխատանքը գրեթե չենք նկատում: Սա-
կայն, բացի այդ ներքին աշխատանքից, մեր մարմինը կա-
տարում ե և արտաքին աշխատանք. մենք շարժում ենք
մեր ձեռքերն ու վոտները, փոխում ենք մեր զիրքը տա-
րածության մեջ, գործի մեջ ենք մտցնում մկանները,
նյարդերը, ուղեղը և այլն: Զետ մեր մարմնի մեջ այնպիսի
մի աշխատանք, վորի կատարման վրա չգործազրվեր նյութ
և ույժ: Այդ տեսակետից մարդու մարմինը միանգամայն
նման է մեքենային:

Վերցնենք վորեե շարժիչ՝ մեքենա, լինի գա ջրաղաց,
հողմաղաց, թե շոգեմեքենա, վոր գործի մեջ և գնում մի
ամրող գործարան, այդ միևնույն ե, միշտ կտեսնենք, վոր
նրան աշխատանքի մեջ մտցնելու համար անհրաժեշտորեն
պիտի ծախսվի վորեե ընական ույժ: Այդպես, որինակ, հող-
մաղացն աշխատում ե միայն այն ժամանակ, յերբ նրա վրա
ներգործում ե հողմը: Իսկ թշչից ե առաջանում հողմը:
Նրանից, վոր մեր յեր կը ի զանազան մաս եր ը տար-
բեր չափով են տաքանում արեգակից: Նշանա-
կում ե, հողմաղացն աշխատում ե վերջիվերջը արե-
գակի ուժով: Նույնը կարող ենք ասել և ջրաղացի մասին,
նրա անիվը պատվում ե, յերբ նրա վրա թափվում ե վե-
րեկից գեղի ցած հոսող ջուրը: Իսկ ինչի՞ շնորհիվ են առա-
ջանում գետերը: Ինարկե, դարձյալ արեգակի: Նա իր ճա-
ռագայթների ջերմությամբ գոլորշիացնում ե ջուրը, ամպերի
ձեռվ բարձրացնում գեղի վեր, ապա հողմերի միջոցով
մղում գեղի հեռավոր յերկրներ, վորտեղ ամպերից տեղում
են արդեն անձրեւ ու ձյուն: Զյունը նստում ե բարձր լեռ-
ների վրա և հետո հետզետե հալվելով՝ առաջ ե բերում

լուսային հեղեղատներ: Նշանակում ե, գետերի աշխատանքի մեջ աշտանքի մեջ ես առաջին շարժիչը արեգակն ե:

Իսկ ի՞նչ ե տեղի ունենում շոգեմեքենաների մեջ: Յերբ շոգեշարժը ձգում ե իր յետերց բեռնված վագոնների մի ամբողջ շարան, ինչ եք կարծում, ի՞նչ ույժ ե այդտեղ դեր կատարում: Վո՞րտեղից ե այդ ույժը: Պատասխանը, թվում ե, պարզ ե: Այդ ույժն առաջ ե ընկում այն փայտը, քարածուխը և կամ նավթը, վոր այրվում ե շոգեշարժի հնոցի մեջ: Բայց ի՞նչ ույժ ե դա: Գիտանականներն անվանում են նրան քիմիական ույժ: Փայտը կամ քարածուխը գրեթե ամբողջովին բաղկացած ե մի նյութից, վոր կոչվում ե ածխածին: Այդ նյութը շատ լավ այրվում ե: Բայց ի՞նչ ե նշանակում այրումն: Այրման եյությունը անհրաժեշտ է բացարել: Դրա համար պետք ե կատարենք մենք մի փոքր շեղումն, վորը շատ բան կպարզի մեզ համար հետագայում: Տեսնենք այժմ, թե ի՞նչ ե նշանակում այրումն:

Յեթե այդ հարցը տանք մենք զիտանական քիմիկոսին, նա առանց մտածելու կպատասխանե իսկույն, այլումը նշանակում ե վորեւ նյութի միացումը թթվածնի հետ: Յեթե սեղանի վրա այրվում ե նավթի ճրագը, այդ նշանակում ե, վոր ճրագի մեջ գտնված նավթը միանում ե շրջապատող ողի մեջ գտնվող թթվածնի հետ: Յեկ իսկապես, յեթե մենք թույլ չտանք, վոր ողի հոսանք գնա դեպի ճրագի բոցը, վերջինս իսկույն կհանգչի: Յեթե վառված մոմը ծածկենք լամպի ապակով, մոմը շուտով կհանգչի: Ի՞նչու: Վորովհետև դեպի մոմի բոցն այլևս ողի հոսանք չի գնում:

Ասենք առանց զիտանական քիմիկոս լինելու յել ամենքս զիտենք, վոր առանց ողի չի կարող այրումն լինել և վոր ինչքան ուժեղ ե ողային հոսանքն, այնքան կը ավելի լավ ե այրվում: Վառարանի մեջ գտնված փայտը, վոր պեսզի լավ վառվի, մենք բացում ենք խողովակը, ողն այդ ժամանակ ուժեղ հոսանքով մտնում ե վառարանի մեջ և փայտն այրվում ե մեծ ուժով: Վորպեսզի ինքնայելը շուտ

յեփ գա, մենք նրա վրա դնում ենք մի յերկար խողովակ և զրանով ուժեղացնում ողային հոսանքը: Իսկ յերբ պետք ե զարգարեցնել այրումն, աշխատառ ենք խանգարել ողային հոսանքը դեպի այրվող մարմինը: Յեթե դժբախտաբար նավթի ճրագն ընկնում ե ցած և հատակի վրա թափած նավթը բանկում ե, ի՞նչ պետք ե անել նրան շուտ հանգնելու համար: Հարկավոր ե, իհարկե, թույլ չտալ, վոր ողի հոսանք գնա դեպի վառվող նավթը, այսինքն պետք ե ծածկել նրան մի ծանր փալասով, վերմակով և կամ նման մի բանով: Յեթե վորեւ մեկի վրա շորերը վառվում են, դարձյալ այդպես պետք ե հանգնել:

Այս բոլորը պարզ կերպով ցույց են տալիս, վոր այրման համար անհրաժեշտ է թարմ ող: Այս բանը գիտեն, իհարկե, բոլորը և առանց քիմիկոս լինելու: Բայց քիմիկոսը բացարում ե մեզ, վոր այրման համար անհրաժեշտ չի ամբողջ ողը, այլ նրա միայն մի մասը, վոր կոչվում ե թթվածին. Նշանակում ե, ողը բաղկացած ե յերկու մասից, մի մասը այրման գործում մասնակցություն չունի, դա կոչվում ե ազոտ կամ բորակածին, իսկ մյուսն արդեն թթվածինն եւ Յերբ թթվածինը միանում ե փայտի հետ, մենք ասում ենք, թե փայտն այրվում ե: Այդ միացության ժամանակ, այսինքն փայտի, քարածուխի և առնասարակ ամեն մի լավ վառելանյութի մեջ այնքան մեծ չափերով գտնվող ածխածնի այրման ժամանակ յերեան և գալիս ահապին քիմիական ույժ: Այդ ույժը մենք զգում ենք ջերմության ձևով: Իսկ ինքը ածխածինը, միանալով թթվածնի հետ, փոխարկվում ե ածխաթթու կոչվող անտեսանելի մի գազի, վոր ցնողում ե ծիր հետ միասին: Դրանով կարծէք թե ամեն ինչ վերջանում ե, բայց իսկապես դա վերջ չի նշանակում: Ածխածինն այրվեց, բայց չան հետացաւ: Նա այժմ գտնվում ե ստացված ածխաթթու գազի մեջ: Յեթե մենք հավաքենք այդ գազը և կը անք, կտեսնենք, վոր նա ավելի շատ ե, քան այրված ածխածինը: Դժվար չի հասկանալ թե ի՞նչպես և առաջացել քաշի այդ ավելացումը, չե՞ վոր ածխածինը

միացել եր թթվածնի հետ: Յեզ հենց այդ և պատճառը, վոր ածխաթթուն կշռում ե միշտ այնքան, վորչափ այդ գաղն առաջ բերող ածխածինն ու թթվածինը միասին վերցրած: Թեպետ ծանր ածխաթթու գալը թափանցիկ և միանգամայն և իր ձեռվ վոչնչով չի տարբերվում սովորական ողից, այնուամենայնիվ գիտնականները գտել են մի շատ հեշտ միջոց ցույց տալու նրա գոյությունը: Բավական և կրաջրի միջով անցկացնել այդ գաղը, և կրաջուրը կրկնի հետզհետե պղտորվել, մինչդեռ սովորական ոդը կրաջրի միջով անցկացրած ժամանակ պղտորումն համարյա թե չի առաջնում:

Այժմ գիտենք արդեն, թե ինչ բան է այլումն, ինչպես և նա տեղի ունենում, գիտենք նաև, թե վարտեղից և այն քիմիական ույժը, այսինքն ջերմությունը, վորի համար մենք այնքան մեծ արժեք ենք տալիս վառելանցութերին: Դառնանք շոգեշարժին: Նրա հնոցում վառվում է կրակը և առաջ և բերում ահագին ջերմություն: Այդ ջերմությունից տաքանում է ջուրը, յեռ և գալիս և փոխարկվում գոյրշու: Բայց այդ գոյրշին փակված է կաթսայի մեջ, նա գուրս գալու տեղ չունի, և ահա, կուտակվելով այնտեղ, սկսում է ճնշում գործել մխոցների վրա: Վերջիններս այդ ճնշման տակ շարժվում են իրենց տեղից և հալորդում իրենց շարժումը անիմսերը շարժու լծակներին: շոգեշարժը բրանից սկսում է շարժվել և իր յետեից քաշել վագոնների շարանը: Շոգեշարժի շարժումն այնունակ հետզհետե արագանում և և ինչքան շատ փայտ կամ քարածուխ և վառվում հնոցում, այնքան շարժումն ավելի մեծ թափ և ստանում:

Այժմ արդեն պարզ ե, թե մարդ բնական ինչ ույժ և հարկադրել ծառայել իրեն շոգեմեքենայի մեջ, վոր տանում և նրան իր ցանկացած ժամանակն այնտեղ, ուր վոր կամենում ե: Նա նվաճել և այդտեղ այրման քիմիական ույժը:

Իմանալով այդ բոլորը՝ մեզ համար, իհարկե, շատ բան և պարզվում: Բայց գրանով կարել՞ յե միթե բավականանալ: Գիտենք, արդյոք, թե վո՞րտեղից և փայտի և կամ քարա-

ծուխի մեջ յեղած այդ քիմիական ույժը, վո՞րտեղից և հենց ինքը ածխածինը նրանց մեջ: Պետք և պատասխանել և այդ հարցերին: Պարզ ե, վոր թե փայտի և թե քարածուխի մեջ մտել և նա միենույն ձանապարհով. չե վոր քարածուխը մի ժամանակ, մեղնից միլիոնավոր տարիներ առաջ յեղել և իսկական կանաչ ծառերի վիճակում: Ահա հենց այն ժամանակ կանաչ ծառերի բնույթի մեջ հավաքվել ու հույսերի մեջ հավաքվել ու կուտակվել և այն ածխածինը, վոր այժմ այրում ենք մենք: Բայց գիտե, արդյոք, գիտությունը, թե ծառը և կամ առնասարակ բույսը ինչպես և ձեռք բերում ածխածինը յուր այդ գլխավոր բաղկացուցիչ մասը (բույսի չոր նյութի գրեթե կեսը բաղկացած և ածխածինից): Այն, գիտե: Թվում ե, թե գրա աղբյուրը պետք և վորոնել գետնի, հողի մեջ, վորտեղից վերցնում ե բույսն իր սնունդը: Բայց միանգամայն իզուր: Հողը յերբեք բույսին ածխածին չի տալիս: Բանից գուրս և գալիս, վոր ածխածնի առատ պաշար կա ողում, և բույսը հենց այնտեղից և վերցնում իրեն համար անհրաժեշտ ածխածինը: Մենք արդեն գիտենք, վոր ոդը բաղկացած և թթվածնից (մի նյութ, վոր այրման ժամանակ ագանորեն միանում և ածխածնի հետ) և մի այլ նյութից, վոր այրման գործում վոչ մի մասնակցություն ցույց չի տալիս, այն և ազուրից կամ բորակածնից: Վերջինիս քանակությունը ողի մեջ բավական մեծ ե. ըստ ծավալի նա կազմում ե ողի $80^{\circ}/_0$ այսինքն չորս հինգերորդական մասը: Մնացած $20^{\circ}/_0$ գրեթե ամբողջովին թթվածին ե: Կարծես թե ածխածնի համար այլիս տեղ չի մնում: Յեկ իսկապես, նա այնքան քիչ և ողում, վոր նրա քանակությունը չի կազմում վոչ միայն մի տոկոս, այլ և նույնիսկ մի տոկոսի մի տասներորդ մասը. նա կազմում ե ընդամենը այդ մի տասներորդ մասի միայն մի յերրորդական մասը, ասել ե, ողի տասը հազար մասից նրան բաժին ել ընկնում միայն յերեք մաս: Բայց այդ յերեք մասն ել մաքուր ածխածին չե, այլ այրված և թթվածնի հետ միացած մի միացություն ե, վոր, ինչպես գիտենք, կոչվում ե ածխածինը: Ահա հենց

այս ածխաթթու գաղն ե կազմում ողի մեջ յեղած ածխածնի պաշարը: Թվում ե, թե նա շատ չնշին բան պիտի լինի, քանի վոր, ինչպես տեսանք, կազմում ե ողի յերեք հարցուրերորդական տոկոսը: Բայց ողի հակայական ովկիանուսում նա չափազանց մեծ քանակություն ե կազմում. յեթե կարելի լիներ կշռել ապա կստանայինք միլիարդ միլիարդավոր կիլոգրամ ածխածն ողի մեջ:

Ահա ողի այդ ածխածնի պաշարից են վերցնում բույսերն իշենց մարմնի կառուցման համար անհրաժեշտ նյութը: Յերկար ժամանակ գիտնականների համար հանելուկ եր միանգամայն, թե բույսերն ինչպես են կարողանում ողի մեջ յեղած ածխաթթվից ածխածնը դուրս քաշել. չե՞ վոր նա չափազանց սերտ կերպով միացած ե նրա մեջ թթվածնի հետ: Պարզ ե, վոր այդ ամուր կապը քանդելու համար անհրաժեշտ ե մեծ ույժ, մեծ աշխատանք: Բայց վո՞րեղից և վերցնում բույսն այդ ույժը: Չե՞ ոգնում, արդյոք, մեկը նրան դրսից: Այս հարցի լուծումը գիտության խոշորագույն հայտնագործություններից մեկն ե համբիսանում: Յեկ իրոք, պարզվել ե, վոր բույսն ունի մի հավատարիմ ոգնական. և այդ արեգակն ե: Յուր ճառագայթների ուժով նա անընդհատ աշխատանք ե կատարում բույսի կանաչ մասերում, գլխավորապես տերեների մեջ: Այստեղ ածխաթթու գաղի մասնիկներն արեգակի ազդեցության տակ վեր են լուծվում իրենց բաղկացուցիչ մասերին. ածխածնը կլանում ե բույսն իր մեջ, իւկ ազատված թթվածնը հեռանում ե բույսից և մանում ողի մեջ: Մի խոսքով, արեգակը կատարում ե այդտեղ մեր վառարաններում այրման ժամանակ անդի ունեցող գործողության միանգամայն հակառակը: Վառարաններում ածխածնի մասնիկներն ամուր կերպով միանում են թթվածնի մասնիկների հետ և, կազմելով ածխաթթու գաղ, տարածվում են ողի մեջ, իսկ բույսի տերեների մեջ ածխաթթու գաղը վեր է լուծվում, և ածխածնը մանում ե նորից մաքուր գիտակի մեջ, վրապեսզի հետո կրկին այրվի և առաջ բերի ջերմություն և ույժ: Արեգակ-

նային ճառագայթի ույժը չի կորչում. նա, մանելով ածխածնի մեջ, թագնվում ե այնտեղ և արտահայտվում կրկին այրման գործողության ժամանակի: Սուստ ածխածնին պարունակող փայտն ու քարածուխը, ուրեմն, վոչ այլ ինչ են, բայց յեթե արեգակնային ճառագայթների կոնսերվատուր: Նշանակում ե, գնելով մի սայլ փայտ կամ մի փութ քարածուխ, մենք ձեռք ենք բերում արեգակնային ույժ: Յերբ մեր վառարաններում ճարճատյունով այրվում ե փայտը, այդ նշան ե, վոր այնտեղ առաջ ե գալիս արեգակի ճառագայթը և ջերմացնում մեզ: Յերբ շոգեշարժը քարշ ե տալիս իր յետեկոց վագոնների շարանը, դա ևս ցույց ե տալիս, վոր այնտեղ աշխատում ե արեգակնային ճառագայթը:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր ածխածնի քիմիական ուժի աղբյուրը հանդիսանում ե նույն արեգակը, վոր շարժում և ջրաղացը և հողմաղացը: Մեքենաները ոգտագործում են վառելանյութի, գլխավորապես, ածխածնի քիմիական ույժը: Նշանակում ե, կարող ենք ասել վոր մեր մեքենաների ույժի աղբյուրը նույնպես արեգակն ե: Նրա կենդանարար լույսն, ըսկենելով տերեկի կանաչ մակերնույթի վրա, իզուր տեղը չի կորչում, այլ փոխարկվում ե այնտեղ մի այլ ույժի՝ քիմիական ույժի: Այդ ույժից ոգտվում ե մարդը՝ փոխարկելով նրան սկզբում ջերմության, ապա ջրային գըլորշու լարման և, վերջապես, շարժման և աշխատանքի: Նշանակում ե, մեր մեքենաների աշխատանքի մեջ արտահայտվում և արեգակի ույժը, կամ ինչպես ասում են գիտնականները, արեգակի եներգիան:

ՄԱՐԴՍ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԾԱԽՍՈՒՄ Ե ԻՐ ՄԱՐՄՆԻ ՄԻ ՄԱՍԸ

Այժմ տեսնենք, թե վհրաեղից ե այն ույժը վոր գործում ե աշխատող մարդու մարմնի մեջ: Բայց նախ և առաջ մի հարց, յերբ մարդ աշխատում է, ծախսվում է, արդյոք, նրա մեջ վառելանյութի նման վորեն բան, թե վոչ: Գիտնական-

ներն այս հարցին պատասխանում են մի շատ համոզեցուցիչ փորձով։ Կղում են մարդուն ինչքան կարելի յեստույդ կերպով և թողնում են կենքի վրա կատարյալ հավասարակշռության մեջ։ Քիչ ժամանակից հետո այն նժարը, վորի վրա գտնվում ե մարդը, սկսում ե զանգաղորեն բարձրանալ. ասել ե, մարդ թեթևանում է։ Յեթե պահենք մարդուն կենքի վրա յերկու ժամ, ապա նրա քաշը բավական զգալի կերպով կպակսի մոսավորապես հարյուր գրամով։ Այս այն դեպքում, յերբ կշուրջը նստած ե միանգամայն անշարժ կերպով։ Իսկ յեթե նա այդ ժամանակվա ընթացքում աշխատեր, նրա քաշն ել ավելի կպակսեր. ուժեղ կերպով աշխատող մարդը յերկու ժամում կորցնում ե մոտ յերեք հարյուր գրամ։ Նշանակում ե աշխատանքի ժամանակ մարդ իսկապես ծախսում ե իր մարմնի մի ժառանգ։ Բայց ո՞ւր ե գնում այդ պակասող մասը և ինչպես ե տեղի ունենում այդ ծախսումը։ Փորձի յենթակա մարդը կենքի վրա յեղած ժամանակ չպետք ե ունենա և վոչ մի արտադրություն, վոչ պինդ և վոչ ել հեղուկ։ Ուրեմն, քաշի պակասելը չի կարելի վերադրել արտադրության։ Փորձի յենթակա մարդը արտադրում ե իրենից միայն ո՞չ շնչառության ժամանակ։ Բայց միթե արտաշնչվող ողի հետ մասնիկներ են հեռանում մեր մարմնից։ Ահա մի հարց, վորին պետք ե անմիջապես պատասխանել։ Բայց ինչպես Արտաշնչվող անտեսանելի ողի մեջ ինչպես առաջ տանք մեր մարմնից հեռացող մանրիկ մասնիկները։

Սուածին հայացքից թվում ե, թե զա միանգամայն անհնարին ե։ Բայց գիտությունն այնքան պարզ և համոզեցուցիչ կերպով ե բացատրել մեր շնչառության հանելուկը, վոր այսոր ամեն մի դպրոցական կարող ե արգեն նրա վերաբերյալ շատ փորձեր կատարել։ Նախ և առաջ գիտնականները ստույգ կերպով հաստատել են, վոր արտաշնչվող ողն ավելի ծանր ե, քան ներշնչվողը։ Այս հանգամանքն առիթ ե ծառայել մտածելու, վոր արտաշնչվող ողը չունի նույն կազմությունը, ինչ վոր—սովորկան մթնոլորտային

ողը։ Վերջինս, ինչպես գիտենք արդեն, բաղկացած ե յերկու գիտավոր նյութերից՝ բորածի ածնից և թթվածնից; Վորոնց հետ անհշան չափով խառնված ե և ածխաթթու գազ։ Իսկ արտաշնչվող ողի հետազոտությունը ցույց է տվել, վոր այդ ողի մեջ թթվածնի քանակությունը բավական քիչ ե, ինչպես յերկում է նրա մի մասը մնացել ե մեր մարմնի մեջ։ Թթվածնի փոխարեն նրա մեջ ավելացել է սակայն մի ուրիշ բան. այդ կարող ենք հաստատել մի շատ հասարակ փորձով. յեթե խողովակի միջով արտաշնչենք մենք կրածրով լցված մի բաժակի մեջ կտեսնենք, վոր կրածրովը շուտով սկսում ե պղտորվել. նշանակում ե, մենք արտաշնչում ենք բավական զգալի չափով ածխաթթու գազ։ Ուշադիր ընթերցողը յերեկի գլխի կընկնի, վոր անհետացած թթվածինը գտնվում է ածխաթթվի մեջ, վորտեղ նրա հետ միացել ե ածխաթթու գազը։ Ուշադիր ընթերցողը յերեկի գլխի կընկնի, վոր անհետացած թթվածինը գտնվում է ածխաթթվի մեջ, վորտեղ նրա հետ միացել ե ածխաթթու գազը։ Ածխաթթուն, բաղկացած լինելով ածխածնից, իհարկե, ավելի ծանր պետք ե լինի, քան թթվածինը միայնակ։ Ահա հենց զրանով ե բացատրվում և արտաշնչած ողի ծանր լինելը ներշնչածից։ Հետո նրա հետ խառնվել ե ծանրաքաշ ածխաթթու գազը։ Արտաշնչած ողի մի այլ կարեռը հատկությունը հայտնի յե արդեն ամենքին. այդ նրա խոնավ լինելն ե. նա պարունակում ե իր մեջ շատ ավելի ջրային գոլորշի, քան մեզ շրջապատող ողը. ո՞վ չի նկատել գոլորշու այն քուլաները, վոր ցուրտ ժամանակը գուրս հեն զալիս մեր բերանից։ Յեթե սառնամանիքը իիստ ե, ապա մեր թոքերից գուրս յեկող գոլորշին արագ կերպով սառում ե և յեղյամի ձևով նստում մեր հոնքերի, բեխերի ու միրուքի վրա, յերբեմն ել կազմում սառցի ամբողջ ծծակներ։ Այդ բոլորի առաջացման համար պահանջվող ջուրը դուրս ե գալիս, իհարկե, մեր մարմնից՝ թոքերի միջով։

Մենք արդեն կարող ենք պատասխանել այն հարցին, թե աշխատանքի ժամանակ մեր մարմնի մեջ վառելանյութի

նմանող նյութի և ծախսվում, թե վոչ: Դուք տեսաք, վոր այնտեղ ծախսվում և խոկական վառելանյութ, այն և ածխածին, վոր ձիջ նույնպիսի ածխածին և, ինչպիսին այրվում և շոգեշարժի հնոցում և մեր վառարաններում: Նա մեր մարմնի մեջ միանալով թթվածնի հետ, տալիս և ածխաթթու գաղ և հեռանում մեր մարմնից ձիջտ այնպես, ինչպես վոր հեռանում է նա վառարանների ծխնելույզներից:

ՄԱՐԴԸ ՅԵՎ ՇՈԳԵՄԵՔԵՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱԴՐՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑԻՑ ԶՐԱՅԻՆ ԳՈԼՈՐԾԻ

Բայց մարդը, բաբի ածխաթթու գաղից, արտադրում են առաջ Սրբյոք, դրանով հիմնական կերպով չի տարբերվում մեր շնչառությունը այրումից: Բանից դուրս և գալիս, վոր այդ տեսակետից ևս տարբերություն չկա, ընդհակառակը, մի ավելորդ անգամ այդտեղ ևս շեշտվում նրանց նմանությունը. չի վոր փայտի այրման ժամանակ ծխի հետ միասին հեռանում և և ջրային գոլորշի: Յեվ այդ զարմանալի չե ըոլորսվին. Չուրը նույնպես մի նյութի միացություն և թթվածնի հետ, այդ նյութը կոչվում և ջր ածին, վոր մի անգույն, թեթև գաղ և, այրվելով, տալիս և ջուր: Զրածին պարունակում են իրենց մեջ բուսական (նույնպես և կենդանական) նյութերը, գրա համար ել, յերբ այրվում են նրանք, ջրածինը ևս իր հերթին միանում և թթվածնի հետ: Ահա թե այրման ժամանակ ինչպես և առաջանում ջրային գոլորշին:

ԱՅՐՈՒՄԻՑ ՏԱՔԱՆՈՒՄ Ե ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ

Այրման և շնչառության գործողություններն, ինչպես տեսնում ենք, միանդամայն նման են իրար. յերկուսն ել վոչ այլ ինչ են, բայց յեթե միացումն թթվածնի հետ: Իրար նման գործողություններ լինելով՝ տալիս են նրանք և մի- ենույն արդյունքները. այն եւ առաջ են բերում ածխաթթու գաղ և ջրային գոլորշի: Նրանց մեջ յեղած միակ տարբե-

րությունն այն ե, վոր այրումն կատարվում է շատ մեծ թափով և արագությամբ, առաջ և բերում բոց և ուժեղ ջերմություն, իսկ շնչառության ժամանակ թթվածնի հետ միացումն (կամ ինչպես ասում են գիտնականները, ոքսիդացումն) տեղի յեւ ունենում աննկատելի կերպով, մոտավորապես այնպես, ինչպես յերբեմն այրվում և թուղթն առապես այնպես, ինչպես յերբեմն այրվում և թուղթն առապես այնպես, Սակայն շնչառության ժամանակ ևս առաջանում և ջերմությունը, այն «կենդանական» ջերմությունը, վոր յուրաքանչյուրը մեզանից զգում և իր մեջ և վորով կենդանի մարդը զանազանվում և գիտակց: Մահվան ժողով շնչառությունը թուղլանում ե, զրանից մարմնի ոքսիդացումն գանգաղում և և վոտներն ու ձեռներն սկսում են սառել, վորովհետեւ թթվածնի չի համնում մարմնի այդ ծայրամասերին: Այնուհետեւ հետզհետեւ սկսում են սառել և մարմնի մնացյալ մասերը: Նշանակում ե, հենց վոր գաղարում և ոքսիդացումն, գաղարում և և կյանքը:

Այժմ կարող ենք ասել, վոր մարդկային մարմնի կյանքն ու աշխատանքը պահպանելու համար անհրաժեշտ և անընդհատ կերպով այրել վառելանյութեր, ածխածնին և մի քանի այլ նյութեր, բայց զրանով մենք գեռ վերջնականապես չենք պարզում, թե բնական ինչ ուժերի հաշվին և կատարվում այդ աշխատանքը և թե վո՞րտեղից և մեր մարմնի մեջ ածխածնի այն պաշարը, վոր բավարարում և մեզ մեր ամբողջ կյանքի ընթացքում:

Սակայն այդ հարցին այժմ այլևս դժվար չի պատասխանել: Ածխածնին պարունակում են իրենց մեջ մեր մարմնի բոլոր մասերը՝ միսը, ուղեղը, արյունը, վոսկորները և այլն: Այրման ժամանակ ածխածնի քանակությունը չի պակասում այդ մասերում, վորովհետեւ պակասը շարունակ լրացվում է: Արյունը մեր մարմնի բոլոր անկյուններին մատակարարում և ածխածնի թարմ պաշար՝ միացած մի քանի նյութերի հետ (ածխածնային միացություններ): Բայց վո՞րտեղից և վերցնում նա այդ պաշարը: Արյունն ածխածնային միացությունների թարմ պաշարը վերցնում և աղիք-

ներից, վորակել պատրաստվում ե նա մեր ներս ընդունած կերակրից: Բանից գուրս ե գալիս, վոր մեր լոլոր կերակրանյութերը (բացառությամբ ջրի և աղի) պարունակում են իրենց մեջ ածխածին. հացը, միսը, տեսակ-տեսակ բանջարները, կաթը, ձուն—բոլորն ել բարդ ածխածնային միացություններ են: Վոր այդ բոլոր նյութերի մեջ ածխածին կա, յերկում ե հենց նրանից, վոր այդ նյութերն ուժեղ կերպով տաքացրած ժամանակ ածխանում են, փոխարկվում են ածխի փոքրիկ կտորների, իսկ ածուխը գոչ այլ ինչ ե, բայց յեթե ածխածին: Ուրեմն, կերակրի հետ միասին մենք ներս ենք ընդունում ածխածնային միացություններ և, գնելով սննդանյութեր, մենք զրամ ենք վճարում այն վառելանյութերի համար, վոր, այրվելով, պետք ե պահպանեն մեր մարմինի կյանքն ու աշխատանքը:

ՄԵՆՔ ԱՄՐՈՒՄ ԵՆՔ ԲՈՒՅՍԵՐԻ ՀԱՇՎԻՆ

Յեթե անպայման անհրաժեշտ ե տալ մեր մարմնին ածխածին, այն ժամանակ ավելի լավ չե՞ր լինի, արզյօք, վոր մենք իրեն կերակրուր գործ ածեյինք ածուխը, այդ անհամեմատ ավելի աժան նյութը: Սակայն, բանից գուրս ե գալիս, վոր պարենավորման հարցին այդպիսի պարզ լուծումն չենք կարող տալ, և այդ այն պատճառով, վոր մեր մարմինը կարիք ե զգում գոչ թե պարզ գրաւթյան մեջ գտնվող ածխածին, այլ ածխածնային միացությունների, վորոնց ուրիշ կերպ անվանում են որգանական (գործարանական) միացություններ: Այդպիսի միացություններ գտնում ենք կենդանիների և բույսերի մարմինների մեջ: Բույսերն այդ նյութերը, ինչպես զիտենք, պատրաստում են ողից, ջրից և հողի մեջ գտնվող հանքային նյութերից արևելակնային ճառագայթների ազդեցության տակ: Իսկ կենդանիները վերցնում են նրանց պատրաստի վիճակում կամ բույսերից և կամ կենդանիներից, վորոնց գործ են ածում իրեն կերակրուր: Գիշատիչ կենդանիները սնվում են սովորաբար

բուսակեր կենդանիներով, որինակ, գայլը սնվում է վոչխարով և այլն, նշանակում ե, այդ կենդանիները վերջիվերջո ստանում են իրենց ածխածնային միացությունները բույսերից: Առանց բույսերի չեյին կարող գոյություն ունենալ վոչ միայն այնպիսի բուսակերներ, ինչպիսիք են՝ կովը, ձին, վոչխարը և այլ սմբակավորները, այլև սովոր կմեռնեյին ամենակատաղի գիշատիչները՝ առյուծները, վագրները, գայլերը, ընձերը և այլն, վորոնք սնվում են համեստ բուսակեր կենդանիներով: Նշանակում ե, կենդանիների կյանքը կախված է բույսերից: Մրանք են, վոր սնունդ են հայթայթում բոլոր կյանք ունեցող մարմինների համար: Սակայն, մենք գիտենք, վոր բույսի մարմնի մեջ ածխածնային միացությունների հետ միասին, ամբարվում ե և նաև արեգակի ձառագայթներից առաջացող քիմիական ուժի պաշար: Յերբ կենդանին ուտում ե բույսը, այն ժամանակ նրա ստամոքսն է մտնում և այդ քիմիական ուժի պաշարը: Այդ քիմիական ուժը պետք է ոգտագործել, իրացնել, վորպեսզի այնուհետեւ հսարավոր լինի նրա հաշվին աշխատանք էտառ ել: Այստեղ կենդանական որգանիզմը կատարում է նույն գործը, ինչ վոր զոգեմեքենա բանեցնող տեխնիկը: Վերջինս վառելանյութի մեջ յեղած ուժի պաշարը փոխարկում է աշխատանքի: Պրա համար այրում ե նա վառելանյութը, զրանով քիմիական ույժը փոխարկվում է ջերմության և ապա վերջինս ել—շարժման: Մըթե նույն յերկույթը չի տեղի ունենում և կենդանու կամ մարմնի մեջ: Քիմիական ուժի պաշարը գտնվում է կերակրի մեջ, վորը վորոշ փոփոխությունների յենթարկվելուց հետո, մտնում է արյան մեջ և ապա տարածվում մարմնի բոլոր մասերում: Ապրելու համար մարմինը պետք է աշխատի, և ահա վառելանյութը, այսինքն կերակուրը, այրվում, միանում է թրթվածնի հետ և փոխարկվում ջերմության և ապա աշխատանքի: Նմանությունն, ինչպես տեսնում եք, կատարյալ և, ասել ե, մարդը մեքենաների մեջ բացառություն չի կազմում: Նա ապրում է աշխատում և ի հաշվի այն քիմիական ուժի,




վոր մթերել են իրենց մեջ բույսերը՝ վերցնելով այն արեգակից: Նշանակում է, մեր արյան, մեր մղանակը, մեր ուղեղի մեջ աշխատում և արեգակնային ճառագայթը, յերկրային մեքենաների այդ սկզբնական շարժիչը նյութերի շրջան առությունը կենդանիների և բույսերի միջև: Ոգտվելով արեգակի եներգիայից՝ բույսը (բանան) պատրաստում է ջրից, ածխածնից և հողից վերցված նյութերից բարդ գործարանական միացություններ: Կենդանիներն ուստեղով այդ միացությունները (բանանի ձյուղերը) ոգտագործում են նրանց եներգիան (կոտրվում են ձյուղերը շարժվում են) և արտադրում են իրենցից ածխաթթու և այլ նյութեր: Այս վերջինները հանդիսանում են հողի համար պարարտանյութ, փորը միկրոբների (բակտերիաների) շնորհիվ այնպիսի փոփոխության և յենթարկվում, վոր նրանցից այնուհետև կարողանում են ոգտվել բույսերը (տես նկ. 1).

Ուրեմն, մարդու և մեքենայի մեջ յեղած նմանությունը
վոչ թե մակերևույթային է, այլ եցական։ Կարճ ասած, այդ
նմանությունն արտահայտվում է նրա մեջ՝ վոր թե մարդը
և թե մեքենան գրսից ստանում են նյութեր, վոր պարու-
սակում են իրենց մեջ քիմիական ույժ, քիմիական լարումն։
Այդ նյութերն, այնուհետև միանալով թթվածնի հետ, այր-
վում են թե մեքենայի և թե մարդու մեջ։ Թե մեկի և թե
մյուսի մեջ նրանք հետզհետև անհետանում են, առաջ բերե-
լով ածխաթթու գազ և ջուր, ոքսիլացման կամ այրման
այդ վերջնական արդյունքները։ Միաժամանակ քիմիական
փոխարկումների հետևանքով առաջանում են ջերմություն
և աշխատանք։

ՆՅՈՒԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

Մեր մարմնի կյանքն անթիվ-անհամար թելերով կապված է արտաքին աշխարհի հետ: Այն սյութը, վորից կառուցված է մեր մարմինը, ստացվում է դրսի աշխարհից: Այսպես,



Задача 1. Установите, что для любых чисел x , y и z из условия $x+y+z=0$ вытекают следующие равенства:

$$\begin{aligned} & x^2 + y^2 + z^2 = xy + yz + zx, \\ & \frac{x}{y} + \frac{y}{x} = \frac{z}{x} + \frac{x}{z} = \frac{y}{z} + \frac{z}{y}, \\ & \frac{1}{x} + \frac{1}{y} + \frac{1}{z} = 0, \\ & \frac{1}{x+y} + \frac{1}{x+z} + \frac{1}{y+z} = 0, \\ & \frac{1}{x^2} + \frac{1}{y^2} + \frac{1}{z^2} = \frac{2}{xy} + \frac{2}{yz} + \frac{2}{zx}. \end{aligned}$$

որինակ, մեր մարմի մեջ կու ածխածին, այդ ածխածինը մտնում է մեր աղիքները մսեղին կերակրի ձևով: Բայց վո՞րաեղից և մսի մեջ այդ նյութը: Պարզ է, վոր մեզ միս տվող կենդանին ստացել է այն բույսից, իսկ բույսի մեջ մտել է նա ողի մեջ գտնվող ածխաթթու գաղից, վոր քաշքայման է յենթարկվում բույսի կանաչ տերեների մեջ: Ածխաթթու գաղն առաջցել է ողի մեջ զանազան ճանապարհներով: Կարող ե պատահել, վոր գուրս է վիժել նա յերկրի խորքից հրաբուխի ժամանակ, բայց կարող ե պատահել, վոր առաջ յեղել է նա մեր բարեկամների և կամ թշնամիների մեջ և ապա նրանցից անցել մեզ: Բայց մեր մեջ ևս ածխածինը չի հանգստանում: Վորտեղ ել լինի նա, մեր ուղեղում, միաններում, թե մաշկի մեջ, մինուույն ե, արյան հոսանքը գտնում է նրան և իր հետ բերած թթվածնով պյուռմ ու փոխարկում ածխաթթու գաղի: Ածխաթթու գաղն այնուհետև ընդունում է իր մեջ արյունը և, մի քանի ըստ պեյի ընթացքում հասցնելով թոքերը, գուրս և մղում այնտեղից դեպի շրջապատող ողը: Այստեղ նորից սկսվում է նույն պատմությունը: Բայց կարող ե քամին տանել նրան դեպի հեռուները, դեպի կապուտակ ծովը, վորտեղ ջրի ալիքքները կիլեն նրան ողից: Այդուղի ջրի մեջ ապրող բույսերը կլլանեն այդ գաղն իրենց մեջ, իրեն սնունդ, և կաձեն կմեծանան: Նրանց այնուհետև կուտեն ծովային խխունջները և կլառուցեն նրանց մեջ յեղած ածխածնից իրենց համար խեցիներ: Մի քանի առբիներից հետո այդ խխունջները կմեռնեն և նրանց խեցիները կնստեն ծովի հատակին: Այստեղ կմնան նրանք յերկար, շատ յերկար: Ժամանակի ընթացքում կնստեն նրանց վրա տղմի և ավագի շերտեր, և նրանք կթաղվեն խորը, ծովի անդամնդներում: Թղում է, թե դրանով ամեն բան վերջացավ: Սակայն, կանցնեն դարեր, հազարամյակներ, միլիոնավոր տարիներ և մեր յերկրի գեմքը կփոխվի բոլորովին: Ծովի հատակը, հետզհետե բարձրանալով, ցամաք կդառնա, և այն խեցիները, վորոնց մեջ հանգիստ եր առել ածխածինը, գուրս կպան գետնի յերեսը:

Նրանց վրա կտեղան հորդառատ անձրեներ, կդոյանան գետեր ու գետակներ և բնական ուժերը կսկսեն փորփրել ու քայլայի յերբեմնի ծովում առաջացած շերտերը. կրացվեն շերտերի տակ թաղված խեցիները, և ջուրն ողի հետ միասին կքայլայի այնուհետև նրանց. դրանից խեցիների մեջ յեղած ածխածինը կազմակի, բայց վոչ թե հանգստանալու, այլ նոր թափառումներ սկսելու համար: Հարց ե առաջանում. յերբ պետք ե դադարին այդ թափառումները: Գիտությունն այդ հարցին միայն մի պատասխան ունի տալու.—«Յերբեք»: Այն ածխածինը, վոր գտնվում է մեր մարմի մեջ, ինչ վիճակի յել յենթարկվելու լինի, միենույն ե, պետք ե մնա միշտ ածխածին և յերբեք չպետք ե անհետանա: Նրա առանձին-առանձին մասնիկները կցըվեն այս ու այն կողմը, կենթարկվեն զանազան աեսակի ուժերի աղղեցության, բայց յերբեք չեն վոչնչանա: Այս նույնը կարելի յե ասել և բոլոր մյուս նյութերի, որինակ, թթվածնի, բորսակածնի, յերկաթի, կայլցիումի (կրածին) և այլն մասին: Նյութերը կարող են միանալ միմյանց հետ, առաջացած միացությունները կարող են կրկին քայլայման յենթարկվել բայց այդ բոլորի ընթացքում նյութի քանակը կմնա նույնը: Նշանակում է, ինչքան նյութ կա այսոր, նույնքան նյութ յեղել և անցյալում, և պետք ե լինի ապագայում: Դա մի բնական որենք է, վորին զիտնականներն անվանում են «նյութի պահպանության որենք»: Այդ որենքին յենթարկվում են թե անկենդան և թե կենդանի բնության բոլոր մարմինները: Մեքենայի աշխատանքի ժամանակ նյութը գործադրվում է, բայց վոչ անհետանում. մի տեսակի միացություններ քայլայման են յենթարկվում, վորոնց վոխարեն առաջանում են նորերը, սակայն, յուրաքանչյուր տառանձին տեսակի նյութի քանակություն մնում է միանգամայն նույնը: Այդ նույնը տեսնում ենք և կենդանի մարդու մեջ: Կենսական յերևույթների մի այլ հատկությունն ել կազմում է ուժերի իրար փոխարկումները: Մենք տեսանք, վոր մեր մարմի եներգիան (ույժ) ստացվում է մեր ներս ըն-

դունած կերակրից. կերակրի եներգիան ել՝ արեգակից: Բայց ո՞ւր ե գնում այն եներգիան, վոր ոգտագործում ենք մենք աշխատանքի ժամանակ: Թվում ե թե նա կորչում է անհետ կերպով: Բայց իղուր: Ինչպես վոր մեքենայի եներգիան չի կորչում, այլ փոխարկվում է մի այլ ձևի, այնպես ել մարդկային մարմնի եներգիան: Շարժվող շոգեքարշի եներգիան կատարում է աշխատանք, բայց բնավ չի անհետանում. Նա փոխարկվում է ջերմության, վոր տաքացնում է շոգեքարշի զանազան մասերը և յերկաթագիծը: Սակայն սրանք բոլորը կրկին սպառում են, ուրեմն, եներգիան վերջիվերջո անհետանում է, հավանորեն կասեք դուք: Դարձյալ՝ վոչ: Եներգիան չի անհետանում և այդ գեպում: Նա միայն ցրվում, տարածվում է: Ցրվելով տարածության մեջ, տաքացնում է նա մեր յերկիցը տաքացնում ե, իհարկե, չափազանց անշան կերպով, բայց այդ նշանակություն չունի. Խնդիրը քանակության մեջ չի, այլ եյության:

Դառնանք այժմ մարդուն: Նա բնական մարմինների մեջ բացառություն չի կազմում և ապրում է շնորհիվ այն եներգիայի, վոր ստանում է զրասի աշխարհից: Նրա մարմնի մեջ ևս տեղի յե ունենում եներգիայի փոխարկումը մի ձևից մի այլ ձևի, բայց յերբեք չի կորչում անհետ կերպով, և յերբեք վոչնչից եներգիա չի ստեղծվում նրա մեջ: Նշանակում է, մեր կարիքների համար եներգիա ծախսելու համար, պետք ե այդ եներգիան ձեռք բերենք վորեւ տեղից: Յեվ մենք ձեռք ենք բերում այդ սննդանյութերի քիմիական լարման ձևով: Ի՞նչ է լինում այնունեան այդ եներգիան մեր մարմնի մեջ: Այստեղ տեղի յե ունենում գործոն աշխատանք, և քիմիական եներգիան փոխարկվում է այլ ձևերի: Մկանները և սիրտը շարժվում են ի հաշիվ այդ եներգիայի. հետեւապես նրանց մեջ փոխարկվում է նա շարժման: Սակայն, շարժման ժամանակ առաջանում է ջերմություն, վորի աղբյուրը, խոսք չկա, նույն քիմիական եներգիան ե: Մարմնի մեջ քիմիական նյութերը փոխարկվում են այլ նյութերի, առաջանում են, այսպես ասած, նոր նյութեր. և այդ ամրող աշխա-

տանքը կատարվում է շնորհիվ այն եներգիայի, վոր մարմինը ստանում է կերպակրից: Վերջապես, հաճախ մեր մարմնի մեջ այս ու այն տեղ կուտակվում է սև որվա համար պաշար՝ ճարպի և կամ այլ նյութերի ձևով, վոր պատրաստվում է մեր ներս ընդունած կերպակրից: Ինչ աշխատանք ուղղում է մարդ կատարի, միշտ փոխարկում է եներգիայի մի ձև մի այլ ձևի. առանց այդպիսի փոխարկումների չի կարող կյանք լինել: Մարդը ևս յենթակա յե բնության այն մեծ որենքին, վոր կոչվում է «եներգիայի պահպանության որենք» և վորը ղեկավարում է աշխարհի բոլոր յերկույթները: Մարդու ստացած եներգիայի պաշարը գործադրվում է գրեթե ամրողովին. այն նյութերը, վոր արտադրում է նա—ածխաթթու և ջուր, և եներգիայի պաշար չեն պարունակում իրենց մեջ: Նրա մյուս արտադրությունները՝ պինդ, թե հեղուկ, պարունակում են իրենց մեջ շատ անշան չափով եներգիայի պաշար: Նշանակում է, մարդու ստացած ամրող եներգիան գործադրվում է կյանքի պահպանման վրա. Նրա կենդանի մեքենայի անիվը շարժում է նույն այն ույժը, վորի ազդեցության տակ շարժվում է ամեն մի մեքենա: Յեվ այդ ո ժի աղբյուրը ինչպես տեսանք, արեգակն է:

ՄԱՐՄՆԻ ՅԵՎ ՆՐԱ ՄԱՍԻՐԻ ԿՅԱՆՔԸ

Պարզելով մարդու մեջ կատարվող նյութերի փոխանակման և մեքենայի մեջ գործադրվող վառելանյութի նմանությունը, մենք միայն մի քայլ ենք կատարում ղեպի առաջ: Որգանիզմի կյանքը շատ ավելի բարդ է քան մեքենայի մեխանիքական աշխատանքը, իսկ մենք գեն չենք ծանոթացել մինչև անդամ որգանիզմի կազմության հետ: Ինչքան յերկույթներ կան այդտեղ, վորոնք կարծես մի մեծ անջրպետ են բացում որգանիզմի կյանքի և մեքենայի աշխատանքի միջև: Չե վոր ինչքան ել մեքենան բարդ լինի, այնուամենայնիվ նրա բոլոր մասերը, բոլոր անիմանը ու

անվակները լծակներն ու պտուտակները բաղկացած են անկենդան նյութից, վոր գործում և միանգամմից և կենդանում և միայն ամբողջի աշխատանքի ժամանակ։ Այդպես չե մարդը, նրա մեջ ապրում է յուրաքանչյուր մաս առանձին, ինչպես սնվում, շնչում և աճում և մարդն ամբողջությամբ, այնպես ել սնվում, շնչում և աճում են նրա առանձին - առանձին մասերը՝ ձեռքերը, վոտները, սիրար, լյարդը, աչքերը, ուղեղը և այլն։ Այս բոլոր մասերն ու գործարաններն ունեն իրենց ինքնուրույն կյանքը, բայց որդանիզմի կազմությանն այնպես են հարմարված, վոր յուրաքանչյուր գործարան աշխատում է հոգուտ ամբողջության։ Ահա, յերբ մեր մարմնի զանազան մասերի գործնեյության և մեքենաների աշխատանքի մեջ կարողանանք նմանություն գտնել, այն ժամանակ մեր համեմատությունը կմոտենա ճշշմարտության։ Բայց վորպեսզի կարողանանք այդ անել առանձին մասերի կյանքի հետ:

ԹԵ ԻՆՉ Ե ԲԱՑ ԱՆՈՒՄ ՄԵՐ ԱՌԱՋ ՄԻԿՐՈՍԿՈՊԸ

Յեթե դիտենք մարդու և կամ վորեւ կենդանու առանձին-առանձին գործարանները, կտեսնենք, վոր նրանք իրենց արտաքինով իրարից շատ են տարբերվում։ Այսպես, որինակ, ուղեղը լյարդը, յերիկամունքները բոլորովին նման չեն իրար։ Բայց նրանք մարդու մարմնի մեջ ապրում են ընդհանուր կյանքով, հետեւապես՝ պետք և ունենան մի միանալիքն, ընդհանուր հիմք։ Ունեն, արդյոք, նրանք այդ հիմքը։ Այս հարցին պատասխանելու համար պետք է դիմենք արդեն խոշորացույց ապակիների և կամ նրանցից կառուցված մանրագիտակի (միկրոսկոպի) ոգնության, վորվիետ առանց այդ գործիքների մեր աչքը բայց չի կարող տեսնել։ Մանրագիտակը առարկաները մեծացնում և այնքան, վոր մենք կարողանում ենք տեսնել այնպիսի մանրիկների մեջ մեր գործիքների մեջ առանց մասին յերեքը չեցինք կարող գործակարակի մեջ մեր աչքի մեջ մեր առանձին մասերի մասնակիցներից այն կողմն անցնել, պետք և անպայման մանրամասն ծանոթանալ նրանցից։

Յեկ մանրագիտակը արգարացնում է մեր սպասելիքը։ Նա ցույց է տալիս, թե ինչով են նմանվում իրար մեր մարմնի զանազան մասերը և կամ առասարակը բոլոր կյանքը ունեցող կյաները, այսինքն կենդանիներն ու բույսերը։ Մենք պարզ կերպով նկատում ենք բոլոր կյանք ունեցող մարմինների մեջ մի ընդհանուր յերկույթ։ Պարզում ե, վոր ամեն մի կյանք ունեցող մարմին կառուցված և առանձին - առանձին փոքրիկ կենդանի մասնիկներից, ճիշտ այնպես, ինչպես տունը շինված ե ապյուսնելից և կամ քարի կտորներից։ Այդ փոքրիկ կենդանի մասնիկները կոչվում են բջիջներ։ Ահա հենց այդ բջիջներն են կազմում այն ընդհանուր հիմքը, վորի վրա հաստատված ե կյանքը։ Նրանք են կազմում այն ատաղձը, վորից կառուցված են կյանք ունեցող բազմազան եյակները։ Բնության մեջ բոլորը, սկսած ամենահաճարեղ մարդուց մինչև վերջին վորդը, մինչև հոգից հազիվ հաղ գլուխը հանած ծիլը, բոլորը բաղկացած են բջիջներից։ Յեթե կյանքի հիմքը կազմում են բջիջները, հասկանալի յե, վոր մենք պետք ե ծանոթանանք նրանց հետ, ինչքան կարելի յե, մոտիկից։ Գիտնականները անխոնչ ու համառ կերպով ուսումնասիրել են և այսոր ել շարունակում են ուսումնասիրել մանրամասն կերպով բջիջները, նրանց կազմությունն ու կյանքը։ Կյանքի մասին յեղած գիտության ամենակենտրոնական տեղն այսոր գրավում են արդեն այդ բջիջները։ Յեկ յեթե մենք ցանկանում ենք մեր սովորական աչքին մատչելի սահմաններից այն կողմն անցնել, պետք և անպայման մանրամասն ծանոթանանք նրանց հետ։

Հասունացած մարդու մարմինը բաղկացած է անթիվանհամար բջիջներից։ Յերեմի մարդու մարմինը համեմատում են պետության, իսկ առանձին - առանձին բջիջները՝ քաղաքացիների հետ։ Այդ համեմատությունը, ճիշտ ե, չի համապատասխանում իրականության, բայց մարմնի բջիջային կազմությունը պարզելու տեսակետից կարող ե մեզ համար ոգտակար լինել։ Պետության կանոնավոր


կյանքը, ինչպես հայտնի յե, պահանջում է աշխատանքի բաժանումն: Այսպես՝ մի մասը քաղաքացիներից պիտի արտադրի հում նյութեր, մյուս մասը պիտի մշակի այդ հում նյութերը, յերրորդ մասը՝ պաշտպանի պիտության սահմանական արտաքին թշնամիներից, չորրորդ մասը՝ զբաղվի յերկրի կառավարչական մարմինների մեջ, հինգերորդ մասը՝ պարապի մտավոր աշխատանքով և այլն: Շնորհիվ աշխատանքի բաժանման՝ գործը առաջ և տարրում հաջող ու արդյունավետ կերպով: Մի գործով զբաղվող մարդն իր աշխատանքը շատ ավելի լավ և արագ է կատարում, քան նա, վոր պատահականորեն է կատարում տվյալ գործը: Ամեն մեկը հարմարվում է իր վերցրած աշխատանքին և ձեռք և բերում նրա մեջ մեծ հմտություն: Այս հանգամանքը տնտեսության մեջ գնահատվել է գետ շատ վաղուց: Յեվ իգուր չե, վոր ձեռներեց գործատերերը մեծ վաստակ ստանալու համար գենես մինչև մեքենաների հնարելը իրենց արհեստանոցներում աշխատանքի զանազան մասերը հանձնարարում եյին կատարել տարրեր բանվորների: Այսպես, որինակ, մեկը խարտոցում եր ասելը, յերկրորդը անցը եր բաց անում նրա մեջ, յերրորդը սրում եր ծայրը և այլն: Աշխատանքի այլորինակ բաժանումը շատ ձեռնատու յեր գործատիրոջ համար, վորովհետև այդ յեղանակով հնարավոր և պատրաստել շատ ավելի մեծ թվով ասեղներ, քան յեթե ամբողջ ասեղը պատրաստեր միայն մի աշխատավոր: Աշխատանքի բաժանման ժամանակ մարդ ձեռք և բերում չափազանց մեծ արագություն ու ճարպիկություն: Յերբեմն մարդիկ այնպես են հարմարվում իրենց աշխատանքին, վոր մինչև անգամ նրանց արտաքինից կարելի յե իմանալ, թե նրանք ինչ գործով են զբաղվում:

Աշխատանքի բաժանումն կա և մեր մարմինը կազմող բջիջների մեջ: Նրանց մի մասը կազմում է մաշկը և միանգամայն հարմարված և մարմինը արտաքին զանազան վտանգներից պաշտպանելու գործին: Մաշկի բջիջները կպած են իրար շատ սերտ կերպով, նրանց արանքում չկան բաց տա-

բածություններ, վորոնցով կարող եյին մուտք գործել մարմնի մեջ փոշի, զանազան տեսակի հեղուկներ և ախտաբեր բակտերիաներ: Բացի զբանից, մաշկի բջիջները կազմում են մի քանի շերտեր, սրանցից վերինի շերտերի բջիջները զուրկ են զգայականությունից: (Տես նկ. 2.): Յեթե պատահամամբ ձեր ձեռքը կալչում է մի մեխի ծայրի և այնպես, վոր մաշկը չի պատում, դուք տեսնում եք, վոր ձեր ձեռքի վրա տուաջանում է մի թեթև սպիտակ քերվածք և դուք այդ գործում վոչ մի ցավ չեք զգում: Իսկ յերբ ձեր մաշկը պոկվում է, ինչպես այդ լինում ե այրվածքի տեղերում, դուք ամենաթեթև շփումների ժամանակ անգամ ցավ եք զգում: Նշանակում է, մարմնի անպաշտպան մասերում զգայականությունն ուժեղանում է: Սովորաբար մաշկի արտաքին շերտը բջիջները մեռած են լինում, դրա համար ել զուրկ են զգայականությունից: Լվացվելու ժամանակ մեզ համար աննկատելի կերպով ամեն անգամ մենք սրբում, հեռացնում ենք այդ մեռած բջիջները:


Բոլոր բջիջները կազմության տեսակետից նման են իրար, նրանք բոլորն ել բաղկացած են կիսահեղուկ մի նյութից, վոր կոչվում է պրոտոպլազմա, և մի միջուկից, վոր գլունվում և այդ պլոտոպլազմայի մեջ:

Բոլոր տեղերում բջիջները նույն ձևում ու դասավորությունը չունեն: Յեթե կարենք կրծիկից մի բարակ շերտիկ և դիտենք մանրաղիտակի տակ, կտեսնենք, վոր կրծիկային բջիջները նստած են մեկ - մեկ, զույգ - զույգ և կամ ավելի թվով մի տեսակ միջանկյալ նյութի մեջ, վոր հաղորդում է կրծիկին առաձգականություն և ամբողջուն: Յեթե կըրճիկի մեջ ևս բջիջները նստած լինելին իրար կողք - կողքի այնպես սերտ կերպով, ինչպես մաշկի մեջ, այն ժամանակ կրծիկը չեր ունենա իր հատկությունները, վորովհետև վեր-



նկ. 2. Մարդու մաշկի կտրվածքը: այդ գեղքում վոչ մի ցավ չեք զգում: Իսկ յերբ ձեր մաշկը պոկվում է, ինչպես այդ լինում ե այրվածքի տեղերում, դուք ամենաթեթև շփումների ժամանակ անգամ ցավ եք զգում: Նշանակում է, մարմնի անպաշտպան մասերում զգայականությունն ուժեղանում է: Սովորաբար մաշկի արտաքին շերտը բջիջները մեռած են լինում, դրա համար ել զուրկ են զգայականությունից: Լվացվելու ժամանակ մեզ համար աննկատելի կերպով ամեն անգամ մենք սրբում, հեռացնում ենք այդ մեռած բջիջները:

Ջիններս կառված են միայն միջանկյալ նյութի հետ: (Տես նկ. 3): Ել ավելի նոսր ձևով են դասավորված բջիջները վուկորների մեջ, այստեղ ևս տեսնում ենք առատ քանակությամբ միջանկյալ նյութ, վոր հաղորդում և վոսկորներին ամրություն ու առաձգականություն (նկ. 4):




Նկ. 3. Կրծիկի բջիջները:

Բոլորովին տարրեր ձևի բջիջներ ենք տեսնում մենք մսի կամ մկանների մեջ (նկ. 5): Այստեղ բջիջները ձգված են յերկար ու բարակ թելերի ձևով և կարող են արագությամբ փոխել իրենց ձևը: Նրանք կարող են կարճանակ ու հաստանալ վորի հետևանքով կծկվում են մկանները և շարժում այն վոսկորները, վորոնց հետ միացած են:

Վերջապես, յեթե դիտենք մանրադիտակի տակ ուզեղից վերցրած մի փոքրիկ կտոր, կտեսնենք, վոր ուղեղը ևս բաղկացած է բջիջներից, բայց բոլորովին այլ ձևի: Այս բջիջներն ունեն յերկար ու խիստ ճյուղավորված հավել-

վածներ, վորոնք տարածվում են զանազան կողմերի վրա և յերբեմն բավական հեռանում բջիջներից, այսպես, որինակի, վողնուղեղի մեջ գտնվող բջիջն արձակում է իրենից զեպի մաշկը մի հավելված, վորի յերկարությունը հասնում է մի քանի սանտիմետրի (նկ. 6):

Սակայն, ինչ ձևի յել լինի բջիջը, միենույն և, նա միշտ ունի նույն ընդհանուր կազմությունը: Նրա մարմինը բաղկացած է պլրոտոպլազմայից: Մի քանի բջիջների մեջ այդ պլրոտոպլազման հատիկալոր և, մյուսների մեջ՝ ձգված է



Նկ. 4. Վոսկորներին հյուսվածքը:

յերկար թելի ձևով (մկանների մեջ), բայց ընդհանուր հիմունքը մնում է նույնը: Պլրոտոպլազման հանդիսանում է կենդանի մարմնի գլխավոր նյութը. Նա յե շարժում, շնչում, մարսում կերակուրը և ընդունում արտաքին աշխարհից զանազան գրգիռներ:

Բջիջների մի այլ ընդհանուր առանձնահատկությունն ել այն է, վոր պլրոտոպլազման պարունակում է միշտ իր մեջ

միջուկ (մեկ, յերբեմն ել մի քանի հատ): Մեր դիտողության նյութ գարձած բջիջների մեծամասնության մեջ այդ միջուկը շատ լավ տեսանելի յէ, միայն մկանային բջիջների մեջ կարծես թե բացակայում ե նա: Բայց յեթե ուշադիր դիտենք, կնկատենք, վոր նրանք նույնպես զուրկ չեն




Նկ. 5. Մկանային բջիջները՝ խիստ մեծացրած:

միջուկից, միայն վերջինս նրանց մեջ տեղավորված ե վոչ թե բջիջի մեջ տեղում, այլ կողքին. ձևափոխված պրոտոպլազման հրել ե նրան դեպի բջիջի յեղը, վորովեսպի արագ կծկման ժամանակ չխանգարի իրեն: Միջուկը չափազանց կարեռ գեր ե կատարում բջիջի կյանքում: Բջիջը բազմա-


նում ե շնորհիվ միջուկի: Յերբ պետք ե բազմանանա, ամենից առաջ միջուկի մեջ են տեղի ունենում մի շարք բարդ փոփոխություններ, վորոնց մենք չենք նկարագրի այսաեղ: Սակայն, հաճախ միջուկը բջիջի բազմացման ժամանակ պարզապես փոխում ե իր ձևը, նա յերկարում, ձգվում ե, վորից հետո ծայրերը սկսում են հաստանալ, իսկ միջին մասը բարակել, և բարակել այնքան, վոր միջուկի յերկու մասերը միանում են միմյանց հետ միայն մի չափազանց բարակ թելով: Մի բողե ևս, և միջուկը բաժանվում է յերկու առանձին մասերի: Այսուհետեւ պրոտոպլազման հավաքվում ե այդ մասերի շուրջը, և ամեն մի մասում ստացվում ե այն ձևը, ինչ վոր ունեցել ե միջուկը մինչեւ բաժանվելը: Բջիջի յերկու մասերը, վորոնցից յուրաքանչյուրը պարունակում ե իր մեջ մի առանձին միջուկ, զեռևս միացած են միմյանց հետ պրոտոպլազմայի մի բարակ թելով: Շուտով կտրվում ե և այդ թելը և առաջիկ բջիջի փոխարեն ստացվում են յերկու հատ նոր բջիջներ: Բազմացման այս յեղանակը կոչվում է բաժանումն: Մեր մարմնի բոլոր բջիջները բազմանում են միեւնույն ընդհանուր սկզբունքով: այս հանգամանքը ևս ցույց է տալիս, վոր նրանց կյանքն ամենուրեք ընթանում ե նույն ձևով: (Տես նկ. 7):

Այժմ մենք գիտենք արգեն մեր մարմնու կազմող բջիջների կազմությունը: Սակայն, մանրաթիտակը ցույց է տալիս նաև, վոր նույն կազմությունն ունեն և մյուս բոլոր որգանիզմները: Յեվ իսկապես, բոլոր կենդանի եյակները բաղկացած են բջիջներից, իսկ բջիջները՝ միջուկից և պրոտո-



Նկ. 6. Նյարդային բջիջները՝ իր հավերածներով:

պլազմայից: Այսպես, ուրեմն, մեր մարմինի ամենաանհանգան մասնիկը՝ բջիջը՝ ունի միանդամայն վորոշ կազմություն. բայց, իհարկե, զա գեռևս վոչինչ չի ասում կենսական յերեւ վույթների եյության մասին: Մենք գեռևս բջիջի կյանքը չենք կարողանում մեզ բոլորովին պարզել. ճիշտ ե, այդ ուղղությամբ գիտությունը շատ բան ե արել, բայց շատ բան դեռ մնում ե մութի: Յեվ այդ զարմանալի չե. բջիջն այնքան փոքր ե, վոր անտեսանելի յե մեր աչքին, ուրեմն, ինչքան փոքր պիտի լինեն նրա կազմության մանրամասությունները, և միթե հեշտ ե այդ բոլորը իմանալ: Մարդկան բջիջը հիմնավորապես սկսել են ուսումնասիրել մեզնից ընդամենը մի հարյուր տարի առաջ: Իսկ հարյուր տարին գիտության համար մի առանձին մեծ ժամանակամիջոց չե:




Նկ. 7. Բջիջի բազմացումը:

Յեվ չպետք ե կարծել թե քիչ բան ե արված այդ ժամանակամիջոցում, ընդհակառակը, կատարված ե շատ մեծ աշխատանք. ինկատի ունեցեք, վոր բջիջի, կենսանի նյութի այդ չնչին մասնիկի մեջ գտնվում են հաղարավոր բարդ քիմիական նյութեր, վորոնց մի մասը փոխադարձաբար ներգործություն ե ունենում իրար վրա, իսկ մյուս մասը մնում ե անփոփոխ: Մի ամբողջ բարդ ու խճճված աշխարհ ե թագնված նրա մեջ. կյանքը յեռում ե, նյութերը մերժ քայլայվում են և մերթ վերականգնում: Յեվ այդ բոլորը—կենդանի նյութի մի չնչին մասնիկի մեջ: Բջիջը, ինչպես իմացել են գիտնականները, թթվածին ե ծծում իր մեջ, այրում նրանով իր մարմինը և ապա նորից վերականգնում այդ մարմինը դրսից ընդունած կերակրանյութերով: Բջիջը աճում ե, շարժվում, արտադրում իրենից զանազան նյու-

թեր ե, վերջապես, բազմանում: Խնչպես բացատրել այդ բուլորը, ինչպես թափանցել այդ յերեսույթների մեխանիկայի խորքը, յեթե իրոք այնտեղ ևս ամբազետում ե նույն մեխանիկան, ինչ վոր մեր ամբողջ մարմնի մեջ, բայց գուցե այդտեղ թագավորում է մի այլ խորհրդավոր ույժ:

Ահա մի գժվարին հարց. բայց գիտնականները գտել են այդ հարցին պատասխանելու ճանապարհը: Յերբ վորոշ չափով պարզվել ե բջիջի կյանքն ու կատարած աշխատանքը,



Նկ. 8. Ամիոբանման շարժումներ

գիտնականներին սկսել ե զբաղեցնել մի հարց, բջիջի մեջ նկատված յերեսույթները չեն կարող, արդյոք, տեղի ունենալ և անկենդան նյութի մեջ, յեթե վերջինս դրվի հարմարավոր պայմանների մեջ: Մտուզության համար պատրաստել են արհեստական բջիջ, այսպես, որինակ, կազմել են յուղի և սողայի մի առանձին իրանուրդ և նրա մի փոքրիկ մասնիկը զիտել մանրադիտակի տակ: Յեվ անա տեսել են, վոր կենդանի բջիջի մեջ տեղի ունեցող յերեսույթներից մեկը

նկատվում ե և արհեստական բջիջի մեջ: Այդ յերկույթը շարժումն է: Կենդանի բջիջը կարողանում է շարժվել: Նա արձակում է իր մարմնից հավելվածներ, (նկ. 8) վորոնք բաղկացած են նույն հասանուա պրոտոպլազմայից, ինչից վոր բաղկացած է ինքն ամբողջովին, ապա այդ հավելվածները կարծիք թե կաշում են այն մակերևույթին, վորի




Նկ. 9. Արհեստական կաթիների շարժումը և վոչ վոքի մտքով չի անցել, վոր իրենց գիտածը անկենդան նյութ է:


Ուրիշ գիտնականներ ել ուսումնասիրել են, թե ինչպես են սնվում կենդանի բջիջները (նկ. 10): Նրանք նկատել են, վոր բջիջները ներս են ընդունում միայն վորոց մասիները իսկ յուս մասնիկներին, վորոնք ուտելի լինել չեն կարող ձեռք չեն տալիս: Ի՞նչպես բացատրել այդ բնագույնը, բանականությամբ: Բնավ վոչ, դա մի ֆիզիքական յերկույթ

ե, վոր կարող ենք տեսնել և անկենդան նյութերի վրա: Յեվ գիտնականները պատրաստել են առանձին խառնուրդից կաթիներ, վորոնք կլանել են վորոց նյութեր, առանց ձեռք տալու մյուսներին: Այդ գեռ բավական չե, կենդանի բջիջների նման այդ արհեստական կաթիները ներս են ընդունում այնպիսի «սննդարար» մասնիկներ, վորոնք իրենցից ավելի մեծ են: Ելար 11-ը ցույց է տալիս, թե ինչպես կեն դանի բջիջը (գորտի արյան մեջ) կլանում է բարակ բակտերիան: Նա կլանում է աստիճանաբար, պրոտոպլազմայի մեջ այնուհետև բակտերիան վոլորվում է կծիկի ձևով և հետզհետև մարսվում: իսկ ինչ անմարսելի յե, հեռանում ե մարմնից: Յեվ ահա նրա կողքին նկարված ե արհեստական բջիջը, վոր ստեղծել է գիտնականի հանձնարք: Դուք տեսնում եք, թե ինչպես նա ձարպիկ կերպով ընդորինակում ե իր կենդանի հարկանին: Նա գործադրում ե միանդամայն նույն միջոցները իրեն հրամցրած բարակ թելիկը կլանելու ժամանակ, ինչ վոր կենդանի բջիջը, և այդ թելիկը կաթիկի մեջ նույնպես վոլորվում է կծիկի ձևով:

Նկ. 10. Կենդանի բջիջը կլանում է գիտակը մասնիկը



Այդ յերեսույթները, վորոնց մասին խոսեցինք, տեղի յեն ունենում նկատելի ձևով. մենք տեսնում ենք այդ յերեսույթները, զրա համար ել կարողանում ենք ընդորինակել նրանց: Բայց կարելի յե, արդյոք, վերաբարերել այն, ինչ վոր տեղի յե ունենում բջիջային մարմնի խորքում. որինակ կարելի յե վերաբարերել շնչառությունը: Կարո՞ղ ենք, արդյոք, հարկադրել վորեւ անկենդան մասնիկի, վոր իր շրջապատից թթվածին կլանի: Մի քանի աարի առաջ



Նկ. 12. «Արհեստական բջիջ» թերեւ կլանելը


(1923 թվին) հաջողությամբ լուծվել եւ այդ հարցը: Հաջողվել եւ վերաբարերել և շնչառական յերեսույթը: Այս գործում գիտության ողնության են հասել արյան ածուխի փոշու ձևով մանրած մասնիկները: Արյան ածուխի մասնիկները ջրի մեջ յերկան են հանել թթվածին կլանելու ընդունակությունը: Այդ գաղը մի տեսակ կպչում են նրանց

մակերեսույթին. և յեթե նման ածուխ պարունակող ջրի մեջ ածենք այնպիսի նյութեր, վոր գտնում ենք մենք բջիջների մեջ, այն ժամանակ այդ նյութերը ածուխի մակերեսույթի վրա արագ կերպով (մի քանի ըստեյում) ոքսիդացման կենթարկվեն և առաջ կրերեն ածխաթթու գաղ, ջուր և մեղի մեջ գտնվող նյութերը: Այդ յերեսույթի և շնչառության մեջ յեղած նմանությունն ել ավելի ակներև կդառնա, յեթե ասենք, վոր թույների, որինակ, կապտաթթվի ազդեցության տակ այդ «արհեստական շնչառությունը» դադարում ե, իսկ թմրեցուցիչ նյութերի, որինակ, յեթերի, քլորոֆորմի, ալկոհոլի ազդեցության տակ ժամանակավոր կերպով կանգ առնում: Բայց զրանից, նման փորձերի ժամանակ կարողացել են նկատել թե ինչպիսի «շնչառության» ժամանակ ազատված եներգիան փոխարկվում և աշխատանքի: Մադկիվ կաթիլը, վորի վրա կատարել են ոքսիդացման նման փորձեր, պիսել ե աշխույժ կերպով շարժումներ կատարել շրջապատող հեղուկի մեջ:

Իհարկե, դեռևս չի հաջողվել պատրաստել այնպիսի աըրհեստական բջիջ, վոր կարողանա միաժամանակ և շնչել, և կերակուր ընդունել, և մարմնի մեջ այրումն կատարել, և շարժվել, մի խոսքով գեռ չի հաջողվել կյանք ստեղծել անկենդան նյութից: Բայց այս, ինչ վոր արված ե մինչև այժմ, պարզ յերաշխիք ե հետագա հաջողությունների համար. և ով գիտե, թե ինչպիսի նվաճումներ պիտի կատարեն դեռ մարդկային հետախուզող միտքն ու տոկուն աշխատանքը: Յերեսույթների աշխարհը անսահման ե ու բարդ, բայց և շարունակ ածում ե մարդկային եներգիան, նվաճելով իրար յետեից նորանոր բնագավառներ և հայտնագործելով ամբողջ աշխարհներ այնտեղ, ուր առաջ մարդ տեսնում եր միայն «գատարկ տեղ»: Կասկած չկա, վոր մտքի և աշխատանքի միությունը կնվաճի նաև կյանքի այդ առեղծվածը:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԿՄԱԽՔԸ

Ամեն մի մեքենա, վորպեսզի կանոնավոր աշխատի, պետք է շինված լինի համապատասխան նյութից: Սա այնքան պարզ է, որ կարիք չկա նույնիսկ ապացուցելու: Յեթե մեծ ծանրություններ բարձրացնող մեքենան շինված լիներ փայտից և կամ բարակ առաձգական պողպատից, առաջին



Նկ. 18. Մարդու կմախքի համեմատությունը շինության
հարտարապետության հետ

իսկ փորձի ժամանակ կամ կկոտրվեր և կամ կծովեր: Բայց այդ գեղ բավական չե: լավ մեքենան պետք է լինի և հաստատուն, այլապես նրա շարժումը կանոնավոր չեր լինի: Վերցնենք հենց առորյա կյանքում այնքան մեծ գործածություն ունեցող կարի մեքենան: Յեթե նա հաստատուն լիներ, ապա անիմսերի շարժման ժամանակ կտորը կծխըլվեր, դուրս կպրծներ, կարը ծուռը կերթար: Բայց տեսեք,

թե ինչպիսի ուղիղ ու հարթ կար ե տալիս նա: Բոլոր մեքենաներն ել այդպես են: կանոնավոր աշխատելու համար պետք ե լինեն հաստատուն: Հարց ե առաջանում, ունի մրցյոք, և մարդկային մեքենան այդ հատկությունները: այսինքն նմ ևս շինված ե համապատասխան նյութից և հաստատուն ե բավարար չափով, թե վոչ: Դիտելով նրա աշխատանքը, պետք ե ասենք—այս: Յեկ իսկապես, համեմատեցնեք նկարի մեջ յեղած մարդու կմախքը կողքի շինության՝ աշտարակի հետ (նկ. 13): Մեր վոտները, վոր պահպանում են իրենց վրա մարմնի ամբողջ ծանրությունը, համապատասխանում են աշտարակի հենարան ծառայող մասին, վորի վրա հենված ե կամքը: Իրանը համապատասխանում ե աշտարակի միջին հարկին, վոր կազմում ե նրա գլխավոր ծանրությունը իսկ պարանոցի վրա հաստաված գլուխը, աշտարակի վերին մասին՝ գմբեթին: Յերկու դեպքում ել ծանրության բաշխման և ներգործության որենքը նույնն ե:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆ ՈՒՂԻՆ Ե ԱՇԽԱՏՈՒՄ

Ի՞նչպիսի ճիշտ շարժումներ պիտի կատարի նկարչի և կամ փորագրչի ճեռքը, վորոնցից առաջինը նկար և նկարում կտավի կամ թղթի վրա, իսկ մյուսը փորագրում ե նկարը փայտի և կամ մետաղի վրա: Զեռքի մի դողոց, մի անհաջող շարժում, և փորագրական այն պատկերը, վոր համարյա պատրաստ ե մետաղի և կամ փայտի վրա, կփչանա անպետք փորվածքներով: Վոչ միայն գեղարվեստի աշխարհում, այլ և ամեն տեղ, ամեն մի աշխատանքի ժամանակ, շարժումների ճշտությունը հաջողության նախապայմաններից մեկն ե: Ով վոր տեսել ե յերբեկցե, թե բանվորներն ինչպիս են գլանակները ծխախոտով լցնում, նա անպայման զարմացած կլինի նրանց շարժումների արագության վրա: Մեկ-յերկու շարժում... և ծխախոտով լցված գլանակը կարծես ինքն իրեն դուրս ե թուչում բանվորների ճեռքերից, նրան

հետեւում և նույն արագությամբ յերկրորդ գլանակը, ապա-
յերօրդը և այդպես շարունակի: Յեվ բոլոր գլանակներն ել
լցված են մաքուր ու հավասար կերպով. վոչ մեկից չի
թափում ծխախոտը և վոչ մեկի վրա չկա թղթի պատռ-
վածք: Ծխախոտ լցնելու աշխատանքն առաջները շատ վատ
եր վարձարպում (այդ աշխատանքը վորակավորյալ չի
համարվում), զրա համար ել ծխախոտ լցնողները, վորակեսզի
կարողանան պահպանել իրենց գոյությունը, ստիպված եյին
որվա ընթացքում ինչքան կարելի յե շատ գլանակներ լցնել:
Նրանք ստիպված եյին այնպես անել, վոր վոչ մի բոպե և
վոչ մի շարժում իրուր չկորչե: Յեվ նրանք կարողանում
եյին հասնել իրենց նպատակին:

Սակայն կա և աշխատանք, վորի ժամանակ հաճախ մարդ-
կային կյանքը կախված է լինում շարժման ճշտությունից:
Մտնենք հիվանդանոցի անդամահատական դահլիճը: Անա-
պյատեղ բժիշկը կատարում է մի գժվար անդամահատական
գործողություն: Անդամահատական սեղանի վրա պառկած և
մարդը քնացրած վիճակում. նրա մերկ մարմինը գտնվում
է ամբողջովին բժշկի իշխանության տակ: Կարված և նրա
մաշկը, մկանները, բացված և փորի խոռոչը: Բժշկի
մատները ինչ վոր բան են փնտում փորոտիքի արյունոտ-
ված գործարանների մեջ, և մոգական արագությամբ շարժ-
վող դանակն իր գործն և տեսնում այնտեղ: Յուրաքանչյուր
բոպե թանկ արժե: չե վոր հիվանդի սիրտը չի կարող յեր-
կար ժամանակ դիմանալ թմրութանն, չե վոր մարդկային
թոքերը չեն կարող անմիաս կերպով յերկար ժամանակ շնչել
քլորոֆորմի քաղցրահամ գոլորշիները: Յեվ դանակը կայ-
ծակի արագությամբ շարժվում է բժշկի ձեռքի մեջ. նա
միայն պլիսի շարժումով և յերբեմն ել միայն հատ ու կտոր
բառերով և հասկացնում փեյլզերունուն, թե ինչ գործիք
պետք է տալ իրեն: Նա ամբողջովին կլանված է իր գոր-

¹ Թմրություն և կոչվում այն արհեստական քունը և ցավի նկատմամբ
անդրա վիճակը, վոր առաջնում է քլորոֆորմի, յեթերի և այլ քլորե-
ցուցիչ նյութերի ազդեցության տակ:

ծով: Անհրաժեշտ է չափազանց մեծ ուշադրություն, աչա-
լրջություն, չե վոր ձեռքի մի սիալ շարժումն... և հանկարծ
կարող է կտրվել զարկերակը¹ և կամ նյարդը, վորից ան-
ուղղելի կերպով կարող է տուժել հիվանդը. իսկ այդպիսի
զարկերակների և նյարդերի մի ամբողջ ցանց կա գանակի
տակ: Թվում ե, թե անկարելի յե առանց վորեւ վասա
ցնելու կատարել այդ անդամահատական աշխատանքը:

Բայց վոչ, ահա անդամահատությունը վերջանում է բարե-
հաջող կերպով. հիվանդն ազատվում ե: Մարդկային մեքե-
նան՝ ձեռքը՝ կատարում է իր աշխատանքը փայլուն կերպով:

Տեսնենք այժմ, թե ինչ նյութից է կազմված հրաշալի
կերպով գործող այդ մեքենան, և ինչի շնորհիվ է ձեռքը բե-
րում նա այն կայունությունը, հաստատուն վիճակը, վոր
այնքան անհրաժեշտ ե՝ ձիշտ և հաշվով կատարվող շարժում-
ների համար:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎՈՍԿՈՐՆԵՐԻ ՄԱՏԵՐԻԱԼԸ

Այն նյութը, վորից բաղկացած են մեր վոսկորները, աչքի
յե ընկնում իր առանձնահատկություններով: Յեվ իսկապես,
յեթե ինկատի ունենանք այն աշխատանքները, վոր կա-
տարում են վոսկորները, պետք է ասենք, վոր նրանց բաղ-
կացնող նյութը պետք է ունենա մի շարք հատկություններ: Ամենից
առաջ այդ նյութը պետք է ունենա ամբություն,
պնդություն, վորեսզի վոսկորները կարողանան դիմանալ
մեծ ծանրությունների: Յեթե վորեւ ե առարկայով ձնշենք
մեր մարմնի փափուկ մասը, կտեսնենք, վոր նա ներս է
գնում, մինչև վոր ձնշող տուաբեկան մոտենում է վերջապես
վոսկորին: այստեղ արդեն կանգ և առնում նա, վորովհետև
հանդիպում է վոսկորանցութիւնը ուժեղ դիմադրության, վոր
իր ձեւ փոխելու վոչ մի նշան չի ցույց տալիս: Բայց ի դրա-

¹ Զարկերակ կոչվում է այն արյունատար անոթը, վորով արյունը հո-
ռում է սրաից դեպի մարմնի զանազան մասերը: Զարկերակի վաստվելու
պետքում արյունը գուշը և ցավացում շատրվանի ձևով:

նից, մեր մարմնի փափուկ մասերը պահպանում են իրենց տեսքը միայն շնորհիվ այն հանգամանքի, վոր վոսկորները ներսից պահպանում են նրանց: Շշանակում ե, վոսկորները պետք և ոժաված լինեն մեծ ամրությամբ:

Բայց միայն ամրությունը քիչ ե: Յեկ իրոք՝ աղյուսն, ինչպես գիտեք, բավական պինդ ե. տեսեք, թե նա ինչպիսի հսկայական ձնշման ե կարողանում դիմանալ մեծ տների հմքի մեջ: Բայց վայր գցեցեք աղյուսը մի քարի վրա և կտեսնեք, վոր նա փշրվում ե: Պատճառը պարզ ե. աղյուսը զուրկ ե առաձգականությունից: Վերցրեք այժմ ոեզինի գնտակը. նա ամուր չե, բայց յեթե զարկում եք պատահն, նա վայրկենապես սեղմլում ե և իսկույն մեծ ուժով դարձալ ընդունում իր նախկին ձեզ: Նա առաձգական ե: Յեկ ահա վոսկորների համար մեծ անհրաժեշտություն ե ունենալ բացի պնդությունից նաև առաձգականություն: Շնչառության ժամանակ մեր կողերը շարունակ բարձրանում, ցածրանում են. յեթե նրանք բաղկացած չինեյին առաձգական նյութից, ապա շատ վաղուց պետք ե փշրվեյին: Վերջապես, վոսկորները պետք ե լինեն և թեթև, այլապես ստիպված պիտի լինեյինք մեր ծանր վոսկորները շարժելու համար իզուր տեղը ահագին ույժ գործ դնել: Ուրեմն, մեր վոսկորների նյութը պետք ե ունենա մի շարք հատկություններ, այն ե՝ պնդություն, առաձգականություն, թեթևություն: Բնության մեջ այդ բոլոր հատկություններն ունեցող նյութեր շատ քիչ կարելի յե գտնել: Յեթե վերցնենք ամուր մետաղները, որինակ, պղինձը կամ յերկաթը, ապա նրանք շատ ծանր կլինեն, իսկ յեթե վերցնենք փայտը, վոր թեթև նյութ ե, սա ել զուրկ կլինի անհրաժեշտ ամրությունից:

ՎՈՍԿՐՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչպես ե հապա, վոր մեր վոսկորները համախմբում են իրենց մեջ բոլոր կարևոր առանձնահատկությունները: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է կատարել

յերկու պարզ փորձ: Վերցնենք յերկու հատ միանման վոսկորներ և նրանցից մեկը գցենք ջրիկ թթվի (որինակ, աղաթթվի) մեջ, իսկ մյուսը դնենք կրակի վրա: Առաջին վոսկորը պահենք թթվի մեջ մի քանի որ շարունակ, իսկ յերկրորդը հանենք կրակից, հենց վոր վերջանա նրա այրումը: Այս վերջին վոսկը կալանակնի իր նախկին ձեզ, բայց կզրկվի իր մի հատկությունից, առաձգականությունից, յեթե փորձնեք ծուել նրան, նա իսկույն կփշրվի: Մակայն նրա ամրությունը պահպանվում ե, նա կարող ե դիմանալ բավական մեծ ձնշման: Հարց ե առաջանում: Ինչո՞ւ յե կորցնում վոսկը իր առաձգականությունը: Պատճառը հասկանալի յե, նրան առաձգականություն տվող նյութը այրվում ե: Այդ նյութը կոչվում ե որդանական նյութ. նա յե կազմում վոսկը կենդանի մասը: Այդ նյութն ե, վոր թույլ չի տալիս վոսկը կոտրվել:

Մյժմ դառնանք մեր մյուս փորձին: Թթվի մեջ դրված վոսկն ամրող ժամանակն արտադրում եր պղպջակների ձևով մի ինչ վոր գազ և նույնապես իր հերթին փոխում եր հատկությունները: Հանելով նրան թթվից, կտեսնենք, վոր նա դարձել ե կրծկանման մի նյութ, նա ծովում ե հեղտությամբ, առանց կոտրվելու, կտրվում ե գանակով, բայց չունի այլևս իր առաջիկա ամրությունը: Մի խոսքով, թթվի մեջ դրված վոսկը մնացել ե միայն մի առաձգական որդառնական նյութ, իսկ այն նյութը, վոր հաղորդում եր վոսկին ամրություն, անհետացել ե բոլորվին: Բայց ո՞ւր ե գնացել այդ նյութը. նա այժմ գտնվում ե այն թթվի մեջ, վորտեղ դրված ե յեղել վոսկը, նա քիմիապես միացել ե թթվի հետ: Այդ նյութը քաջ ծանոթ ե քիմիկոսներին, դա մի մետաղ ե, վոր կոչվում ե կալցիում, հայերեն ասում ենք դրան կրածին, վորովհետև ի միջի այլոց գտնվում ե և կրի մեջ: Նշանակում ե, մեր վոսկորների մեջ կա մետաղ, բայց վոչ պղինձ կամ յերկաթ, այլ մի թեթև մետաղ, այն ե՝ կալցիում, վոր վոսկը մեջ սերտ կերպով միացած ե առաձգականությամբ ոժաված կենդանի որդանական նյութի հետ, և հենց այդ

ե պատճառը, վոր վոսկը միացնում ե իր մեջ մետաղային ամրությունը թեթևության և առաձգականության հետ:

Սակայն նպատակահարմար հատկությունների այդ բարենպաստ զուգորդությունն այնքան ել հեշտությամբ չի պահպանվում: Մանկական հասակում վոսկըները պարունակում են իրենց մեջ քիչ քանակությամբ կիր, դրա համար ել աչքի յեն ընկնում իրենց արտակարգ առաձգականությամբ: Յերբեմն կրի քանակությունը չափազանց քիչ ե լինում, այդ գեղքում վոսկըներն այլևս չեն կարողանում դիմանալ մարմնի ծանրության և ծովովում են: Այդպես ե լինում բախտիզմի (անգլիական հիվանդության) ժամանակ, վոր առաջանում ե անբավարար սննդից և ընակարանային վատ պայմաններից: Այդ հիվանդությունն ունեցող յերեխաների ատամները դուրս են գալիս դանդաղ և հիվանդագին կերպով, գլուխը մեծանում ե, անկյունավոր դառնում և վոռները ծովում: Լավ սննդի ժամանակ (շատ լավ ողնում և ձկան յուղը) յերեխաները կազդուրվում են, բայց վոսկերի ծոռությունը հաճախ մնում ե ամբողջ կյանքի ընթացքում: Այդ պակասությունը հետևանք է կացիումի (կրի) քչության:

Հակառակ ծայրահեղությունը նկատում ենք մենք ծերերի վրա: Սրանց վոսկըների մեջ որգանական նյութը հետզհետե սկսում ե քչանախ իսկ հանքայինը պահպանվում ե նոոյնը: Դրա հետևանքը լինում ե այն, վոր վոսկըների առաձգականությունը նվազում ե: Յեկ այդ ե պատճառը, վոր ծերերի վոսկըները հեշտությամբ կոտրվում են և բժշկության ժամանակ ել շատ դժվարությամբ են միանում: Պարզ ե, վոր մարդկային մեքենան հետզհետե մաշվում ե յերկարատե գործածությունից:

ՎՈՍԿՐՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ / ՅԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ


Սակայն վոսկըների ամենանշանավոր հատկությունները սերտ կերպով կատված են նրանց միայն կենդանիները, մասնաւոր մեջ այլ առաջարկավոր հատկությունները կատված են առաջարկավոր մասնաւոր մարմնին և համարական նյութի հետ:

Չորեկի վասակած մասերը, նորոգվել առանց վորեւե մեկվոնության: Վոսկըն աճում և մարմնի մյաւս մասերի հետ զուգընթաց: Յերբեք չի կարող պատահել, վոր վոսկըն աճի, իսկ միսն ու մաշկը մնան կանգնած: Մեր կմախքի այս հրաշալի հատկությունը (նոյնը կարելի յե ասել և բոլոր մյուս վողնաշարավոր կենդանիների¹ կմախքի մասին) ահագին ծառայություն ե արել մեր հեռավոր նախորդներին յերկրի վրա ապրող կենդանիների մեջ առանձին դիրք գրավելու գործում: Մեր աշքերի առաջ ունենք մի շատ կրթիչ որինականի, կենդանիները, վորոնք չափազանց ուժեղ են իրենց մեծության համեմատությամբ, չափազանց դիմացկուն ու աշխատասեր, ունին զարմանալի բնազդներ, միլիոնավոր տարիներից ի վեր կազմակերպում են հասարակական բարդ կյանք, բայց չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ գտնվում են յերկերս նվազողների մեջ յերկրորդական պլանում: Այդ կենդանիները միջատներն են (մըջունները, մեղուները, պիծակները և այլն): Նրանց մարմինը չափազանց փոքր է: Բայց ինչո՞ւ: Այն հասարակ պատճառով, վոր նրանց մարմինը կաշկանդված ե աճման ընդունակություն չունեցող արտաքին կմախքի մեջ, վորը արգելք ե համարականում ներքին մասերի աճման: Յեկ հենց այդ հանգամանքին պիտի վերագրել այն յերեսությը վոր այդ հետաքրքիր կենդանիները գոյության կովի մեջ չեն կարողացել հաջողություն ունենալ, մինչդեռ վողնաշարավորները վորոնց կմախքը աճում ե մարմնի հետ միասին և համարական նյութություն ե տալիս նրանց խոշոր ծավալ ընդունել, գոյության կովից գուրս են յեկել իրեւ հաղթանակողներ:

Վոսկըների մի այլ ուշագրավ հատկությունն ել այն ե, վոր նրանք ընդունակ են անընդհատ կերպով վերականգնել այն բոլոր մասերը, վորոնք կյանքի ընթացքում ան-

¹ Վողնաշարավոր կոչվում են այն կենդանիները, վորոնք ունեն մեջքի կամ վողնաշարային սյուն: Այդպիսի կենդանիները են՝ ձկները, յերկենցաղները (գորտերը, դողոսները), սողունները (կրիաները, ոձերը, մողենները, կոկորդիլոսները), թռչունները և գագանները:

խուսափելի կերպով քայլայման են յենթարկվում. այդ ընդունակությունը, սակայն, բացի վոսկըներից, ունեն մեր մարմնի նաև մյուս մասերը: Ուժեղ արյունհոսությունից հետո արյան քանակությունը հետզհետեւ վերականգնվում է. ծանր հիվանդությունից, որինակ, տիֆից հետո, վորի ժամանակ տառապում են մարմնի բոլոր մասերը, որդանիզմը ամբողջովին մի տեսակ նորոգման ե յենթարկվում: Քերթված մաշկի տեղը նոր մաշկ ե առաջանում. պոկված մազի



Նկ. 14.


փոխարեն նորն է դուրս դալիս: Մարմնի մասերի այդ վերանորոգումը կոչվում է վերաճումն (բեղմներացիա) և տարածվում ե ամբողջ կենդանական աշխարհում: Մեղնից ավելի պարզ կազմություն ունեցող կենդանիների մեջ վերանորոգումը են պոկված թաթերը, կտրված աչքերը, կոտրված պոչը (որինակ, մողեսը): Իսկ ավելի ստորին աստիճանի վրա կանգնած կենդանիների մեջ վերաճման յերևույթն արտահայտվում ե ել ավելի մեծ չափերով. կենդանուն կարելի

յե կիսել յերկարությամբ կամ լայնությամբ, և յուրաքանչյուր կեսից կառաջանա մի նոր կենդանի. կան կենդանիներ ել, վորոնց յեթե կտրաենք մի քանի մասերի, ամեն մի մասից դարձալ մի նոր կենդանի կառաջանա (Նկ. 14): Այդպիսի փորձեր շատ են կատարել մարդիկ և յեկել են այն յեղակացության, վոր վերաճման ընդունակությունը հանդիսանում է կյանքի ամենատարածված յերևույթներից մեկը: Մարդու մեջ այդ ընդունակությունը արտահայտվում է շատ փոքր չափով. մեր մարմնի մեջ շատ քիչ, այն և յերկրորդական նշանակություն ունեցող մասերն են միայն, վոր կարող են վնասվելուց հետո վերանորոգվել: Դործարանների մեծ մասը զուրկ ե այդ վերաճման ընդունակությունից: Հարց ե առաջանում, չի՞ կազմում արդյոք այդ ուշագրավ ընդունակությունը կենդանի մարմինների առանձնահատկությունը: Կարո՞ղ ենք արդյոք՝ ծանոթանալով այդ յերևույթի հետ՝ պնդել նորից, վոր մեր որդանիզմը նման է մեքենայի: Այդ հարցին պատասխան կարող են տալ ստորև հիշատակվող փաստերը:

ՄԵՐ ՎՈՍԿՐԵՐԸ ՅԵՎ ԱՆԿԵՆԴԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Բոլորդ ծանոթ եք բյուրեղներին: Ո՞վ չի հիացել լեռնային խրուտալի կանոնավոր ձև ունեցող բյուրեղների վրա. ո՞վ չի տեսել ձյան փաթիլների մեջ սառցի բյուրեղների նուրբ ու գեղեցիկ ձևերը: Մակայն շատ քչերը գիտեն անշուշտ, վոր բյուրեղները ևս ոժաված են իրենց կոտրած կամ կտրած մասերը վերաճելու ընդունակությամբ: Իսկ դա մի փաստ ե, վոր հաստատված ե բազմաթիվ դիտողություններով: Յեթե բյուրեղը գտնվում է այն հեղուկի մեջ, վորտեղ առաջացել ե, և ստանում ե իր վորեւ մասում կոտրվածք, ապա վորոշ ժամանակից հետո այդ կոտրված մասը աճում է և վերականգնում է բյուրեղի նախկին ձեւ ու մեծությունը: Վերաճման այդ յերևույթը շատ նման է որդանիզմների մեջ տեղի ունեցող վերաճման յերևույթին. նա


ևս պահանջում ե վորոշ պայմաններ և վերականգնում ե նախկին ձեր: Բացի բոլորին հայտնի ամուռ բյուրեղներից, կան մի տեսակ բյուրեղային նյութեր, վորոնք կոչվում են հեղուկ բյուրեղներ (նկ. 15): Այս նյութերը ավելի յեն նմանվում կենդանինյութին, նրանց յերբեմն նույնիսկ ասում են «կիսա-



Նկ. 15. Հեղուկ բյուրեղներ

կենդան մարմիններ», առաջ դրանց մեջ կատարվող վերածան յերեվույթը ել ավելի յե նման կենդանի աշխարհում կատարվող յերկույթին: Կենդանի բյուրեղները չունեն սուր և ուղղանկյուն ձևերը, վոր հատուկ ե սովորական բյուրեղներին, նրանց ծայրերն ու կողքերը կորացած են և դրանով ել ավելի յեն հիշեցնում կենդանի որգանիզմների հատկությունները (նկ. 15 և 16):

Նշանակում ե, ինչքան ել զարմանալի թվա մեր վոսկուների կազմությունն առաջն հայացքից, այնուամենայնիվ ուշադիր զննությունը ցույց ե տալիս, վոր նրանք չունեն այնպիսի մի բան, վորից միանգամայն զուրկ լիներ անկենդան աշխարհը: Յերևույթների հիմքը ամենուրեք նույնն ե: Միայն կենդանի աշխարհի մեջ այդ յերևույթներն արտահայտվում են շատ ավելի բարդ ու խճճված ձևով, քան անկենդան բնության մեջ: Սակայն, գիտության յուրաքանչյուր հաջողությունը, զեպի առաջ կատարած նրա յուրաքանչյուր խոշոր քայլը հետզհետե փոքրացնում ե այն անջրպետը, վոր գծում և պատրաստությունից զուրկ ուղեղը



Նկ. 16. Հեղուկ բյուրեղների բաժանումը
(Պետք ե զիսել աչից ձախ)

կենդանի և անկենդան աշխարհների միջև: Յեվ իրոք վոսկուների բոլոր հիմնական հատկությունները — ամրությունը, առածքականությունը, թեթևությունը, աճելու և վնասված մասերը վերականգնելու ընդունակությունը, բուլորը սերտ կերպով կապված են այն նյութի հետ, վորից բազկացած են նրանք, իսկ այդ նյութը վոչ այլ ինչ ե, բայց յեթե անկենդան մարմինների մեջ գտնվող մի շաբթ մարմինների մի չափազանց բարդ զուգորդությունը: Յեվ այդ զարմանալի չե բոլորովին, չե վոր այն նյութը, վորից կառուցվում ե մեր մարմինը, մի ժամանակ գտնվել ե ան-


կենդան մարմինների մեջ, միայն դրանց ընդունել ենք մենք բռնական և կամ կենդանական կերակրի ձեռվ, իսկ բռյալ կառուցել և այդ նյութը այն մարմիններից, վոր վերցրել և ողից ու հողից: Իսկ կենդանին: Նա կերակրվել ե բռյակերով, ուրեմն, նույնպես ստացել և այդ նյութը հողից և ողից:

ԿՄԱԽԻՔԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենքին հայտնի յե, վոր կմախքը մեր մարմնի ամենապինդ մասն ե: Յերբ մարմնի փափուկ մասերը փտում, հող են դառնում, կմախքը գեռ յերկար ժամանակ պահպանում և իր ամբողջությունը: Բացառիկ նպաստավոր պայմաններում կարող ենա պահպանվել տասնյակ, նույնիսկ հարյուր հազարավոր տարիններ: Խորը, շատ վազուց առաջացած յերկրի շերտերում գտնվում են այնպիսի կենդանիների կմախքներ, վորոնք ապրել են այն հեռավոր ժամանակներում, յերբ չե յեղել վոչ պետություն, վոչ մարդկային համայնք, յերբ մարդ իր կազմությամբ տարբերվում եր այժմյան մարդուց և հիշեցնում եր իր մերձավոր աղքասկիցներին՝ մարդանման կապիկներին: Այդ հին կենդանիները չկան այլևս, բայց նրանց կմախքները մեզ գաղափար են տալիս, թե մի ժամանակ ի՞նչպիսի հրեշներ են ապրելիս յեղել մեր յերկրի վրա: Նախնական մարդկանց, նրանց մարմնի կազմության, նրանց՝ մեզնից ունեցած տարբերությունների մասին մենք գաղափար ենք կազմում դարձյալ կմախքների շնորհիվ, վորոնք գտնվել են այն քարանձավներում, վոր ծառայել են նախնական մարդկանց համար իրեր բնակարաններ: Ահա թե ի՞նչպիսի ամրություն ունեն մարդու մարմնի վոսկըները և թե ի՞նչքան յերկար կարող են նրանք պահպանվել:

ՄԱՐԴՈՒ ՎԼՈՍԿՐՆԵՐԸ ՀԱՐՄԱՐՎԱԾ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Կմախքը տեսնելով՝ մարդիկ ակամայից հիշում են մահը, Պետք և ասել, վոր ամենահին ժամանակներից սկսած,



Նկ. 17. Մարդու կմախքը

Կմախքը կառել են մահվան գաղափարի հետ և մահը պատկերացրել են հաճախ կմախքի ձևով՝ գերանողին ձեռքին:

Բայց ով վոր ծանոթ և մարդկային մարմնի կազմության հետ, նրա մեջ կմախքը չի կարող զարթեցնել այդպիսի ժողով մտքեր, ընդհակառակից, նու առաջ կրերի մի կատարյալ հիմունքն մարդկային մարմնի, այդ բարդ մեքենայի նուրբ և աշխատանքին հրաշալի կերպով հարմարված կազմության վրա: Թողնելով մի կողմը մեր կյանքի վախճանի հետ կապված ապարդյուն դատողությունները՝ աշխատենք հանուն կյանքի և նրա պահանջների ուշադիր դիտողության նյութ դարձնել մարդկային մարմնի հոյակապ ճարտարապետությունը և ինչքան հսարավոր ե, խորը թափանցենք նրա գաղտնիքների մեջ:


ԿՄԱԽՔԻ ԱՌԱՆՑՔԸ ՎՈՂՆԱՇԱՐՆ Ե

Դիտելով կմախքը՝ մենք նկատում ենք, վոր նա բազկացած և բազմաթիվ վոսկըներից, վորոնք սակայն դասավոր ված են վորոշ կարգով: Բայց վո՞րտեղ և գտնվում նրա վոսկըների ու վոսկըների այն առանցքը, վոր կապում, միացնում և նրանց միմյանց հետ: Այդ առանցքը դժվար չե գտնել: Առաջին հայացքից իսկույն պարզ կերպով յերեվում ե, վոր նրա առանցքը մեջքի վողնաշարն ե: Ասե, վոր ներքեւից հենարան և հանդիսանում գլխին, վորը մարդ՝ հակառակ մնացած կենդանիներին՝ պահում և բարձր դերքի մեջ (նկ. 17):

ԳԼԽԻ ԿՄԱԽՔԸ

Գլուխը մարդկային մարմնի պսակն ե. ինչպես կտեսնենք հետո, այնակազմ կենտրոնացած մեր գիտակցությունը. նա մեր մարմնի հսկիչն ե, վոր աշակուրջ կերպով դիտելով մեր շրջապատը՝ զգուշացնում ե մեղ բոլոր սպառնացող վտանգներից: Այդտեղ են գտնվում մեր բոլոր կարևոր զգայաբանները, աչքերը, ականջները, քիթը: Յեթե մի բոլոր պատճերացները մեղ, թե ինչպես և ինչ հանդամանքներում են

ապրել մեր հեռավոր նախորդները՝ նախնական մարդիկ, ապա միանգամայն կպարզվի մեղ համար, թե ինչքան կարենոր և յեղել նրանց համար գլխի այդ դիրքը: Մարդ ապրում եր վայրի բնության մեջ, անտառում, ուր վլաստում եյին վայրի գաղաներ, և չուներ վոչ մի դեմք, բացի ձեռքերից: Յերկրագործության մասին նա գաղափար չուներ.



Նկ. 18. Մարդու գանգը


իր սնունդը վորսորդությամբ եր գտնում: Վորսորդության ժամանակ հետապնդելով վորեն կենդանուց՝ նա հաճախ ինքը վորս եր դառնում իրենից ավելի ուժեղ գիշատիչների: Ալրելով այդպիսի պայմանների մեջ՝ ստիպված եր նա շարունակ աշակուրջ կերպով հսկել իր վրա: Յեկ իսկապես, մինչդեռ նախնական վորսորդի սրատես աչք եր ը հետևում եյին փախչող կենդանուն և նա կարողանում եր իր

թեթև վոտների ձկուն թոփչքներով հետապնդել նրան, սուր լողությամբ ոժտված ական ջները՝ լսելով ամենաթեթև շրջուններն ու ձայները՝ զգուշացնում եյին նրան սպառնացող վտանգներից, և նա արագ կերպով թողնելով իր վորսը՝ յետ եր դառնում և մտածում իր գլուխն ազատելու մասին։ Նա ուներ իսկական կենդանական հոտառություններ, վորի միջոցով ևս կարողանում եր հեռվից իմանալ թե իր շուրջը, այս ու այն տեղ ինչպիսի կենդանիներ են գտնվում։

Կարո՞ղ եր արդյոք նա կատարել այդ բոլոր բարդ աշխատանքը առանց գլուխը բարձր պահելու և առանց նրան արագ կերպով զանազան կողմի վրա շրջելու։ Անպայման վոչ։ Նա այդ դեպքում վաղուց արդեն զոհ կդնար խոշոր գիշատիչներին, վորոնք կովի համար ավելի լավ զենքեր ունեյին։

Բայց այդ հարցին պատասխանելու համար կարիք չկադառնալու հեռավոր, մշուշապատ անցյալին. բավական ե, յեթե դուրս գանք մի մեծ քաղաքի մի մեծ հրապարակ և դիտենք մեր շուրջը։ Ի՞նչ շարժում, ի՞նչ իրարանցում ու շփոթ. ոլանում են կառքերը, հրապարակը զանազան ուղղությամբ կտրող սելսերի վրայով անցնում և տրամվայը, փափուկ, համարյա անլսելի կերպով գնում են ավառութիւները՝ փոխելով իրենց ուղղությունն այս ու այն կողմը. լավ ե, յեթե շոփերը սիդնալ ե տալիս, առա թե վոչ՝ չես ել նկատում, թե վորտեղից յեկան նրանք։ Ահա զնում ե և ծանր հսկայական բեռնակիր մեքենան՝ աղմկելով ու ցընցվելով։ Ի՞նչպես պաշտպանվել այդ ժխորի մեջ առանց գլուխը բարձրացնելու և դիտելու ամբողջ հրապարակը և առանց վիզը շրջելով աջ, ձախ և յետ մտիկ անելու. Փորձեցեք անցնել այդպիսի մի հրապարակով առանց գլուխներդ բարձրացնելու, աչքներդ գետնին դարձրած։ Յեվ ամենայն հավանականությամբ շուտով աչքներդ բաց կանեք մի հիվանդանոցում՝ վոտներդ կոտրված կամ ել ավելի վատթար դրության մեջ։ Բայց այդ բոլորից պաշտպանում ե մեզ մեր

հավատարիմ հսկիչը՝ գլուխը, մարդկային մեխանիզմի գագաթը։ Ճիշտ ե, նա բաղկացած ե բազմաթիվ վոտներից, բայց նրանք բոլորն ել ամուր ու անշարժ կերպով միացած են միմյանց հետ և կաղմում են մի ամուր վոտներից արկդ, վորի մեջ ապահով վիճակում գտնվում են ուղեղը և մեր կարենը զգայարանները՝ տեսողության, լողության և հոտառության գործարանները (նկ. 18)։



Նկ. 19. Պարանոցի վորները

Գլուխը հարմար ու թեթև կերպով այս ու այն կողմի վրա շրջելու համար մենք ունինք ծոծրակային հողավորությունն. սա ունի մի վերին աստիճանի պարզ ու սրամիս կաղմություն։ Լայն ծոծրակային անցքը սերտ կերպով նստած ե ողի նմանություն ունեցող պարանոցի առաջին վողի վրա (նկ. 19)։ Յերբեմն վերջինս այնպես պինդ կեր-

պով և կպչում ծոծրակի անցքի յեղբերին, վոր մահվանից հստո անգամ չի պոլվում գանգից: Այդ վոսկրային վողը նստած ե պարանոցի յերկրորդ վողի ատամնաձև բարձր հավելվածի վրա, վորի շուրջը, վորպես մի անշարժ առանցքի շուրջը, պտտվում ե գլուխը: Թե այդ ծոծրակային հողը ինչ պիսի կատարելությամբ ե գործում, ցույց ե տալիս այն հանգամանքը, վոր ծոծրակի անցքի մոտ, հենց այնտեղ, վորտեղ տեղի յեն ունենում գլխի շրջումները, գտնվում ե յերկայնաձիգ ուղեղը, վորի ամենասանսշան վնասումն անդամ կարող ե առաջ բերել վայրկենական մահ: Բայց չնայած դրան, բժշկականության հայտնի չեն դեռ գլխի անձարպիկ շրջումներից առաջացող մահվան դեպքեր: Այդ հողը գործում ե հրաշալի կերպով և մինչև խորը ծերությունը պահպանում ե իր ամրությունը:

ԲԱԶՈՒԿԻ ԳՈՏԻՆ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գլխից փոքր ինչ ցած, կմախքի առանցքին, այսինքն վողնաշարին միանում են ձեռքերի վոսկրները: Ձեռքերը հանդիսանում են աշխատանքի ամենակարևոր գործիքները, նրանք են, վոր ստեղծել են մեր ամբողջ տեխնիկան և գեղարվեստի խոշորագույն արտադրությունները: Մեր ձեռքերը մնացած կենդանիների առջևի վերջավորությունների նման դետնին չեն կպչում, նրանք չեն պահպանում իրենց վրա մարմնի ծանրությունը. նրանք աղատ են այդ աշխատանքից և կատարում են մի այլ ավելի կարևոր դորձ: Ձեռքերի վոսկրները անմիջապես չեն միանում վողնաշարին, նրանք միանում են այսպիս կոչվող բազուկի դոտուն, վոր բաղկացած ե մի զույգ թիսկներից և մի զույգ անրակներից: Այդ ձեկի միացումն ահապին ոգուտներ ե տալիս մեզ. շնորհիվ այդ ձեկի միացման ե, վոր մեր ձեռքերը կարողանում են կատարել բազմազան շարժումներ: Անրակներից զուրկ կենդանիների առջևի վերջավորություններն ավելի մոտ են գտնվում վողնաշարին, վրա համար ել չեն կարողանում վոչ

վեր բարձրանալ և վոչ ել շրջանաձև շարժումներ կատարել: Այսպիս, որինսակ, չենք կարող յերևակայել մի շուն, վոր կարողանա կատարել թեկուզ այնպիսի մի շարժում, ինչպիսին կատարում ենք մենք քարը նետելու ժամանակ: Նրա մարմնի կազմությունը յերևակ է հաճախ այդպիսի շարժման համար մի անհաղթահարելի խոչընդոտ: Բայց կան մի խումբ կենդանիներ, վորոնց առջևի վերջավորությունները միանում են բազուկի գոտուն (անրակներ և թիսկներ) մոտավորապես այնպես, ինչպես մարդու ձեռքերը: Այդ կենդանիները կապիկներն են, վորոնք, ինչպես հայտնի յե, կատարում են մի շարք այնպիսի շարժումներ, վոր միանգամայն անմատչելի յեն մյուս կենդանիների համար: Նրանք, որինակ իրենց առջևի վերջավորություններով գրկում են ծառի բունը կամ ճյուղերը, նետում են զանազան առարկաներ և այն: Այն կապիկները, վորոնք իրենց կազմությամբ նման են մեզ, կոչվում են մարդանման կապիկներ, որանք մյուս կենդանիների նման չորս վոտների վրա չեն ման գալիս, այլ յերկու վոտների վրա, բայց հենցվում են գետնին և իրենց առջևի թաթերով այնպես, ինչպես մենք ենք հենցվում յերբեմն ընթացուալերով: Նշանակում ե, նրանց ձեռքերը դեռ վորոշ չափով պահպանում են իրենց վրա մարմնի ծանրությունը և բավական յերկար են: Քար նետելու ժամանակ այդ կապիկները ոգտվում են միայն մի ձեռքից, մյուսն անպայման պետք ե հենված լինի գետնին. նրանք հազվագյուտ գեղքում են միայն ուղղվում այնքան, վոր ձեռքերը միանգամայն պոկվում են գետնից, և այդ դրության մեջ յերկար չեն կարողանում մնալ:


Հենց այս և պատճառը, վոր այդ կապիկները չեն ոգտագործում իրենց ձեռքերը և իրանց շարժումներն այնպես, ինչպես մենք: Այդպիս են կապիկները Մյուս կենդանիներն, ինարկե, ավելի վատ դրության մեջ են, նրանց մեջ նրանք, վոր կարողանում են պահպանվել յետերի վոտների վրա, ինչպես, որինակ, արջերը, ել ավելի անշորհք ու անվստահ կերպով են շարժում իրենց ձեռքերը: Այսուհետեւ վատ կլիներ

մեր վիճակը, յեթե չունենայինք մենք բազուկի գոտի: Նրա շնորհիվ մեր ձեռքերը դարձել են մի հրաշալի գործիք, վոր հարկը պահանջած ժամանակ յերեան և հանում անսովոր նրբություն ու զգուշավորություն, դրա հետ միասին նաև հսկայական աշխատանք կատարելու ույժ: Այժմ ել նույնիսկ մեջ մեջ նրանք, վորոնք ֆիզիքապես լավ չեն դարպացած, վորոնք ունեն ընկած ու նեղ կուրծք, ասել ե, ձեռքերը ավելի մոտ են գտնվում վողնաշարին, լավ աշխատավորներ չեն կարող լինել: Այդպես են ի ծնե թույլերը կամ նրանք, վորոնք մանկությունից ապրում են վատ պայմանների մեջ, գուրկ են բավարար սննդից, մաքուր ողից և կամ կատարում են իրենց ուժից վեր աշխատանք: Ամբակազմ տղամարդը, վոր ընդունակ և ֆիզիքական աշխատանքի, պետք ել լինի թիկնեղ, լայն կրծքով: Միայն այդ դեպքում ձեռքերը կարող են ազատ շարժումներ կատարել և հարմարվել աշխատանքին:

ԿՄԱԽՔԻ, ԿՐԾՔԻ ՅԵՎ ՓՈՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Կրծքի վանդակը սկսվում է զրեթե նույն բարձրությունից, ինչի վրա վոր գտնվում ե բազուկի գոտին: Այդ վանդակը մեր կմախքի ամենանշանավոր մասերից մեկն ե, այնտեղ են տեղավորվում թոքերը, դեպի ուր դրսից շարունակ կենդանի մեքենայի այրումը պահպանելու համար թարմ ող և ներս գնում, այնտեղ ե գտնվում և սիրտը, վոր արյունը մղում և դեպի մեր մարմնի զանազան մասերը և այդ արյան հետ մատակարարում մարմնի բոլոր մասերին անհրաժեշտ թթվածին: Մարդու կրծքի վանդակը կառուցված և շատ մեծ վարպետությամբ (նկ. 20): Այն ուրվագիծը, վոր ունեն կողերը և կրծոսկրը, վորի հետ միանում են կողերը առջեկ կողմից, թվում ե մեղ, ճիշտ ե, մի տեսակ անկանոն, տպեղ ու անկյունավոր, բայց պետք ե ասենք, վոր նրա յուրաքանչյուր կորությունը, նրա ձևի յուրաքանչյուր մանրամասնությունը ունի իր առանձին իմաստը: Այդ բո-

լորը ըմբռնելու համար պետք ե ծանոթանալ այն աշխատանքի հետ, վոր կատարում ե կրծքի վանդակը շնչառության ժամանակ: Յեվ յեթե ծանոթանանք այդ աշխատանքի հետ, կտեսնենք, վոր բնությունն այդտեղ ամենապարզ միջոցներով հասնում և ամենամեծ հետևանքների: Բայց այդ մասին կխոսենք այն ժամանակ, յերբ դիտողության նյութ կդարձնենք մարդու շնչառության գործողությունը:



Նկ. 20. Կրծքի վանդակը

Կրծքի վանդակը ներքեկից բաց ե, խոսք չկա, վոր այդ ևս ունի իր իմաստը: Կենդանի մարդու մեջ կրծքի վանդակի այդ կողմի վրա ձգված և մի հաստ գմբեթաձև մկան, վորի վրա վերևից հենվում են թոքերն ու սիրտը: Այդ մկանը բաժանում է կրծքի խոռոչը փորի խոռոչից, դրա համար ել կոչվում ե կրծքափորային միջնապատ. Նա ուրիշ կերպ կոչվում ե և ստոծանի: Նրա ներքեւում գտնվում է փորի խոռոչը, սա փոսկրներով չի պաշտպան-


ված վոչ առջևից և վոչ ել կողքերից, Բայց դրա համար չպետք ե ցավել: Յեվ իսկապես, ինչպես կարող ելինք մենք մեր գոտկատեղի մասը կորացնել, յեթե այլտեղ ևս վոսկը-ներ լինելին: Սակայն այն բոլորը, վոր գտնվում ե փորի խոռոչում (այսինքն աղինքները, լարդը, ստամոքսը, փայ-ձաղը և այլն), պահպանված ե ներքեւից մի առանձին ամուռ պատվանդանով՝ այն ե կոնքի լայն վոսկըներով: Վեր-ջիններիս հետ միացած են ներքեւի վերջավորությունները (վոտները), վորոնց մասին կխոսենք հետո:

ԱԶԱՏ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջավորությունների մեջ համեմատաբար ավելի աղատը ձեռքերն են, մարդու պարծանքը: Յեթի դիտենք նկ. 17 և 19-ի վրա նրանց կմախքը, կտեսնենք, թե նրանք ինչ մասերից են բաղկացած և թե այդ մասերից յուրաքանչյուրը ինչպես և հետզհետե զարգացնում իր շարժումների ազատությունը և բազմազանությունը: Բազուկի հոդից գնում և մի հատ յերկար վոսկը, փոր կոչվում ե բազուկի վոսկը (նկ. 17). սրա հետ միանում են ներքեում ձեռքի մյուս մասի յերկու վոսկըները՝ կանգունի վոսկըները: Ինչո՞ւ համար ձեռքի այդ մասը յերկու վոսկը ունի: Շատ պարզ պատճառով. այդտեղ տեղի յեն ունենում յերկու տեսակի շարժումներ. մենք կարողանում ենք ծալել մեր ձեռքը արժունի մասում և մոտեցնել կանգունը բազուկին, բայց կարողանում ենք շարժել ձեռքը և իր առանցքի շուրջը, վորի ժամանակ մեր կանգունի վոսկըներից մեկն իր ներքեկի ծայրով պատվում ե մյուսի շուրջը (նկ. 17): Այս վոսկը, փոր պտավում և, կոչվում ե ծղիկ. սա գնում ե բութ մատի ուղղությամբ, մյուսը, ավելի պակաս շարժաւ կանը, կոչվում ե արմունկի վոսկը, սա ել գնում ե ձկույթ մատի ուղղությամբ: Այս պտավող շարժումը արժեքավոր և դառնում շնորհիվ այն հանդամանքի, փոր կանգունի հետ միասին շարժվում ե նաև ձեռքի աշխատանքի

գործարանը՝ թաթը իր մատների հետ Թաթի և կանգունի
միջև գտնվում են մի շարք մասն վոսկըներ, զորոնք կոչ-
վում են դաստակի վոսկըներ (նկ. 17): Վերջապես
մատների վոսկըներն ունեն ամենամեծ շարժունությունը:
Բութ մատը առանձնացած է և կարող ե հեշտությամբ կլցել
բոլոր մյուս մատներին, սա մի հանգամանք է, զորի շնոր-
հիվ ձեռքը դառնում է բռնող մի գործարան:

Վասների կմախքը հարմարված է արդեն այլ նպատակ-ների: Այստեղ ևս տեսնում ենք, վոր վերջավորությունները միանում են վորդնաշարին գոտու միջոցով, վորը այստեղ կոչվում ե կոնքի գոտի: Կոնքը վորդնաշարին արդեն չի միանում այնպես թույլ ու շարժական ձևով, ինչպես թիակն



Նկ. 21. Մարդու նըլքանի և սեսառի նման կաղմությունը

ու անբակլը կոնքի գոտին ամուռ ու անշարժ կերպով միանում է վողների հետ. և այդ նրա համար, վոր կարողանապահանել իր վրա իրանի և գլխի ծանրությունը. չե՛ վոր կոնքից վեր գտնված մասերը հենված են նրա վրա (նկ. 17): Բայց ինչի՞ վրա յե՛ հենվում ինքը կոնքը: Ուշադրությամբ դիտեցեք կմախքի պատկերը, յեթե պատահի ձեզ տեսնել և իսկական կմախք, ապա չմոռանաք ուշադրություն դարձնել և նրա վրա: Կոնքը նստած ե ազդը ի վոսկըների վրա և այնպես, վոր հենվում ե նրանց վրա միայն յերկու կետում, այդ պատճառով ել չի կարող պահպանել իր հավասարապահությունը առանց առանձին հարմարությունների: Մենք կզուր առանց առանձին հարմարությունների: Մենք պահպանում ենք պահպանը և յերբեք ել չենք մտածում, թե այդ, իհարկե, չենք զգում և յերբեք ել չենք մտածում,

մենք անհաստատ ենք հենված մեր վուների վրա: Յերբ
դիտում ենք, թե ինչպիսի մեծ ճիգեր է գործադրում յե-
րեխան ուղիղ կանգնելու համար, մեզ ավելի շատ զարմա-
ցնում են նրա ճիգերը, քան նրա ունեցած արագ հառաջա-
դիմությունը ման գալու գործում: Մեր վուներն ամրողը-
վին հարմարված են մարմնի ուղիղ դիրքին: Այն սցուները
վորոնց վրա հենված ե կրնքը, այսինքն ազգի վոսկրները
ունին չափազանց ամուր կազմություն: Նրանցից ցած յու-
րաքանչյուր վոտի մեջ գտնվում են յերկու հատ վոսկրներ,
ճիշտ այնպես, ինչպիս այդ տեսանք ձեռքի մեջ. բայց այդ
վոսկրները չեն կարող պոտավիլ մեկը մյուսի շուրջը. նրան-
ցից մեկը մեծ ե, մյուսը փոքր. մեծը կոչվում ե մեծ
վոլոգ. մարմնի զիսավոր ծանրությունը ընկած ե այդ
վոսկրի վրա. փոքրը կոչվում ե փոքր վոլոգ, որա վրա
յեն ամրանում վոտի ուժեղ մկանները: Կերպարես վոտի
ներքելի մասը կոչվում ե թաթ. նրա կազմի մեջ մտնող
վոսկրիկները միացած են իրար հետ բազմաթիվ ջերով և
կազմում են մեր մարմնի համար ուստորի նման մի առածգա-
կան պատվանդան: Ման գալու և ցատկելու ժամանակ նրբանը
գործում ե ճիշտ այնպես, ինչպիս վագոնի ուստորը վորին
նման ե նա իր շինանյութերի զասավորությամբ (նկ. 21):

Բայց մեր մարմնի ծանրությունն իր վրա պահպանող
նրբանի նուրբ հարմարացումների մանրամասն նկարա-
գրությունը մեղնից շատ տեղ և ժամանակ կիլեր, այդ
պատճառով ել բավականանք այսքանով:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ՄԿԱՆՆԵՐԸ

Մեքենայի աշխատանքն արտահայտվում է միշտ շարժում-ներով։ Զբաղացի մեջ շարժվում են ջաղացաքարերը, շոգե-մեքենայի կամ արամվայի մեջ՝ անիվսերը, այլ մեքենաների մեջ՝ սղոցները, մուրճերը, ատամնավոր անիվսերը, անվերջ փոկերը և այլն։ Մեր մարմնի աշխատանքն ես արտահայտ-վում և շարժումներով։ Նույնիսկ մտավոր աշխատանքը


կապվում ե սովորաբար այս կամ այն շարժման հետ, թե
կուզ մատների շարժման, վոր տեղի յեւ ունենում գրելու, և
կամ աչքերի՝ կարդալու ժամանակ: Նշանակում ե, մեր
մարմնի մեջ ամենից շատ աշխատող մասն այն մասն ե, վոր
շարժում և կատարում: Այդ մասը մեր միան ե, մեր մկան-
ները: Միայն սրանց միջոցով ենք շարժում մեր մարմինը
տարածության մեջ և կամ այս ու այն առարկան մոտե-
ցնում մեղ: Բայց ի՞նչ են ներկայացնում մկանները և ի՞նչ
պես են նրանք շարժվում:

Դրեցեք ձեր ձախ ձեռքը աջ ձեռքի բաղուկի հոդից փոքր
ինչ ցած գտնվող մկանի վրա և շոշափեցեք այդ մկանը՝ աջ
ձեռքը կախ դցած վիճակում. դուք կզգաք ձեր մատների
տակ յերկար և վոչ այնքան լայն մի մկան։ Այժմ ծալեցեք
ուժեղ կերպով ձեր աջ ձեռքը՝ շարունակելով շոշափել նույն
մկանը. ձեր մատների տակ կզգաք մի կլոր ուռուցք. դա
վոչ այլ ինչ ե, բայց յեթե նույն մկանը՝ կարճացած և հաս-
տացած; Մերկացրած ձեռքի վրա հեշտ կերպով կարելի յե
ղիտել այդ մկանի խաղը. ծալեցեք ձեռքը. նա կկորանա
և կուռչի, բաց թողեցեք, նորից կծփի՛ նշանակում ե, աշ-
խատանքի ժամանակ մկանը կարճանում ու հաստանում ե:
Այդ գործողությանը ասում են մկանի կծկումն:
Յեթե ձեռքի վրայից վերցված լիներ մաշկը, ապա գուք
մերկացրած մկանի վրա կտեսնելիք, գոր. ձեռքը ծալող
մկանը իր յերկու ծայրերում ել վերջանում ե ջերով, փո-
րոնք կալչում են վոսկրներին։ Վերեռում այդ մկանը վեր-
ջանում ե յերկու ջլով, վորովհեակ այդ մասում մկանը ինքը
բաժանվում է յերկու գլխիկի՛: Վերեռում յերկու գլխիկ ունե-
նալու պատճառով այդ մկանը կոչվում է յերկողիսանի մկան
(լատիներեն՝ «բիցելաս»): Վերեսի ջերը միանում են թիակի
հետ, իսկ ներքեմի ջլը՝ կանգունի ծղիկ վոսկրի հետ։ Իսկ
դրանից ահա թե ինչ ե զուրս գալիս: Յերբ մկանը կծկում
ե, նրա յերկու ծայրերը մոտենում են իրար և ձգում են
այն վոսկրները, վորոնց կպած են ջերը: Թիակն այդ ժա-
մանակը, ինտրկե, իր տեղից չի շարժվում. նա հաստատուն

կերպով մնում ե իր տեղը, մեջքի վրա, իսկ կանգունի վոս-
կրները բարձրանում են դեպի բազուկը, վորի հետևանքով
և ձեռքը ծալվում ե արմունկի հողում: Այսպիսով յերկողը-
խանի մկանը ծալում է ձեռքը: Ծալված ձեռքը կրկին բաց
անելու համար աշխատում է մի այլ մկան, վոր տեղափոր-
ված ե բաղուկի վոսկը յետեի կողմում: Այդ մկանը կոչ-
վում է յեռվիխանի, վորովհետեւ. վերևում բաժանվում է
յերեք մասի, վորոնցից յուրաքանչյուրը վերջանում է մի
առանձին ջուր: Նրա ջերեց մեկը կպած ե թիակին, իսկ
մյուս յերկուսը՝ բաղուկի վոսկը: Այդ մկանի ներքեկ
ծայրը կպչում է արմունկի վոսկը: Վրա համար ել յերը
կծկում ե, բացում և ձեռքի արմունկի հողում: Նույն-
պիսի պարզ կազմություն նկատում ենք մենք մեր մարմին
և մյուս մկանների վրա:

Այն յեղանակը, վորով մկանները շարժում են վոսկը ները,
չափազանց պարզ ե. դա նույն այն յեղանակն ե, վոր շա-
րունակ գործադրվում ե զանազան մեքենաների մեջ և կոչ-
վում ե լծակի յեղանակ: Յերբ պետք ե լինում բարձրացնել
վորեւ մեծ ծանրություն, մացնում են նրա տակը մի փայտի,
նիզի և կամ տախտակի մի ծայրը և ապա, մյուս ծայրից
բարձրացնում: Այս միջոցով նույնիսկ թույլ մարդիկ կա-
րողանում են բարձրացնել տախտակը կիլոգրամներ: Այն
փայտը, վորի միջոցով բարձրացնում են ծանրությունը,
կոչվում ե լծակ: Սրանով շահում են շատ մեծ ույժ, դրա հա-
մար ել հյուսները փայտաշեն տները նրա միջոցով են բար-
ձրացնում, յերբ պետք ե լինում փոխել նրանց ներքեկի
փերանները: Վորպեսզի լծակը /գործի, պետք ե
ունենա մի անշարժ հենակետ, վորի շուրջը շարժվի: Մեր
ձեռքը ներկայացնող լծակի անշարժ հենակետը գտնվում
է արմունկի հողում: Իսկ ներգործող ուժերից մեկը յերկ-
ովիսանի մկանն ե, վոր ձգում է ձեռքը գեպի վեր, իսկ
մյուսը, ձեռքի ծանրությունը կամ ծանրոցը, վոր քաշում ե
գեպը, յերբ ծանրությունը կամ ծանրոցը վոր քաշում ե

ծանրոցի ուժին: Իսկ ի՞նչ ենք տեսնում մյուս հողավորու-
թյուններում: Դարձյալ նույնպիսի լծակներ, միայն յեր-
բեմն ուրիշ տեսակի: Վերցնենք հենց ծնոտը (նկ. 22): Յեթե
մարդու ատամները առողջ են, մարմնի այդ մեքենան կա-
րողանում է նրաշալի կերպով ջարդել կաղին և վշրել շա-
քարի մեծ կտորները: Գիշատիչ կենդանիների ծնոտային
այդ գործիքի ույժը ուղղակի զարմանալի յե: Առյօնձը՝ սղմե-
լով իր ծնոտները՝ կարող ե կտրել յեղան վիզը: Բայց ի՞նչ
կազմություն ունի ծնոտային հողը: Նկ. 22-ի վրա պարզ
կերպով յերեսում ե նրա կազմությունը: Կծելու ժամանակ



Նկ. 22. Մարդու ներքեկի ծնոտը և ատամները

վերեկի ծնոտը մնում է անշարժ, իսկ ներքեկն բարձրա-
նում ու ցածրանում ե՝ շուռ գալով ծնոտի հողի մեջ: Վեր-
ջնս այդ գործողության համար ունի նրաշալի հարմարու-
թյուններ: Դիտեցեք ներքեկի ծնոտի հոդային զլիսիկը: Նա
ունի այնպիսի կանոնավոր ձև, վոր կարծես պատրաստված
ունի այնպիսի վաղաճակ վրա: Իսկ դա զեր կմախքի վրա յե-
կենդանի վոսկը վերեց ծածկված է մի հարթ և միանդա-
մայն վողորկ կրծկային շերտով, վորին կազմարաններն
առում են ապականման կրծիկ, նրա մակերևույթը հոկված
է այնպես, վոր միանդամայն հրաշալի կերպով տեղափոր-

վում և գանգի այն հողախորշի մեջ, վորի մեջ դրված գլխիկը: Հողախորչի մակերեսույթը ևս իր հերթին պատահ է նույնպիսի ապականման կրծիկով. իսկ վորպեսզի այս կրծիկները իրար հետ շփվելու ժամանակ չմաշվեն (չե՛ վոր նրանք շփվում են իրար հետ մեր ամբողջ կյանքի ընթացքում) հողի ներսից, հողապարկի պատերից դուրս և գալիքի առանձին յուղանման հեղուկ, վոր ոծում և նրանց մակերեսույթը:

Մի խոսքով, ինչպես տեսնում եք, ծնոտի հողը շինված մեքենաշինության արվեստի բոլոր կանոնների համաձայն Բացի դրանից, պետք է ասենք, վոր նա շինված և մի այն պիսի նյութից, վոր տասնյակ տարիների ընթացքում չ մաշվում և չի փչանում նկատելի ձևով, չնայած իր ամենորյա աշխատանքին: Իսկ նրանք աշխատում են վոչ միայն ծած մելու, այլ և խոսելու ժամանակ. կան մարդիկ, վորոն որվա մեջ ութ ժամից ավելի յեն աշխատում լեզվով ծնոտներով. և այնուամենայնիվ նրանց ծնոտի հողը նաշվում:


Այժմ տեսնենք, թե ինչպես են շարժվում ծնոտները: Պետք է ասենք, վոր ծնոտների շարժման գործում գլխավոր գեր կատարում են յերկու խումբ մկաններ. նրանցից մի խումբ իջեցնում և ներքեւ ծնոտը, իսկ մյուսը՝ ընդհակառակը, բարձրացնում և այդ ծնոտը: Դրանցից վո՞ր խմբի մկանները պետք է ավելի ուժեղ լինեն: Պարզ ե, այն խմբի մկանները վոր սեղմում և ներքեւ ծնոտը վերեկի ծնոտին և առաջ բերում խածումն: Յեկ իսկապես, այդպես ել ե: Այդ մկանները կոչվում են ծամող մկաններ. սրանք իրենց մի ծայրու կպած են ներքեւ ծնոտի անկյունին, իսկ մյուսով՝ դանգի:

Նրանց կծկումն առաջ և բերում շատ մեծ ույժ: Այժմ անցնենք ծնոտը ցածրացնող մկանների խմբին: Այս մկանները կազմում են բերանի խոռոչի հատակը. սրանք կծկելով ցածրացնում են ներքեւ ծնոտը: Այդ շարժման համար, իհարկե, առանձին ույժ չի պահանջվում. չե՛ վոր ներքեւ ծնոտը կարող է ցածրանալ ու կախվել և իր

վական ծանրության տակ: Որինակ, այդ նկատելի յեղիների վրա, յերբ վերջինների մեջ ծամող մկանները կորցնում են իրենց լարումը: Ներքեկի ծնոտը սովորաբար բարձրացված և լինում շնորհիվ այն հանգամանքի, վոր ծամող մկանները գտնվում են շարունակ թեթև կերպով կըծկված վիճակում (գիտնականները մկանների այդ թեթև կծկումը անվանում են մկանային տոնուս): Սակայն յերբեմն վորևէ ուժեղ նյարդային գրգռման, որինակ, զարգացման ժամանակ այդ տոնուսը թուլանում է, վորից ներքեւ ծնոտը կախվում է և մարդ մնում և բերանը բաց:

Մարդու մարմնի այլ մասերում ևս տեսնում ենք նույնպիսի կազմություն: Ամենուրեք հոգերի մեջ վորկրները հրաշալի կերպով մոտեցած են իրար և ունին այնպիսի ձև, վոր ամենից շատ և հարմարում նրանց կատարած շարժումներին: Այսպես, որինակ, բազուկի վոսկը իր վերին ծայրում ունի գնդական հող, իսկ ստորին ծայրում, վորաեղ բազուկի վոսկը հոգավորվում և կանգունի արմունկի վոսկի հետ ճախարականման հոգ: Հոգերի ձեռքի մեջ յեղած այս տարբեր սությունը հասկանալի յեղ գառնում,

Նկ. 23. Ծնկի հողը




յերբ մենք ի նկատի յենք առնում այն շարժումները, վոր պետք է կատարի ամբողջ ձեռքը և նրա միայն մի մասը՝ կանգուցը: Մարդկային ձեռքն ընդունակ է կատարել ամեն կողմի վրա ամենալայն շարժումներ: Յեկ հողը նրա այդ շարժումների հարուցում և վոչ մի խոչընդուռ, նրա գնդաձեռքյունը տալիս ե նրան շարժումների համար ամենալայն պատություն (նկ. 23): Այլ և կանգունը: Սա կարող է ծալվել բազուկի նկատմամբ միայն մի կողմի վրա: Ծատ վատ կլիներ, յեթե սա ևս ունենար շարժումների մեջ ազա-

տություն։ Միթե կարող եք ձեռքը այդ դեպքում փայտի դեր կատարել։ Նա միշտ արմունկի տեղում յետ ծալվելու վատանգի մեջ պետք է լիներ։ Յեվ այդ ե պատճառը, վոր այդ մասում մենք տեսնում ենք այնպիսի հողավորում, վոր թույլ չի տալիս կանգունին շարժվել դեպի կողքերը, նա ունի և մի առանձին հարմարություն, վոր արգելում ե կանգունին արմունկի մասում ծալվել դեպի յետ։

Զարմանալի կերպով ամուր ու լավ են շինված մեր վոտի հողերը։ Ման գալը վազելը ցատկելը, նույնիսկ պարզ կանգնելը պահանջում են բազմաթիվ մկանների մի համաձայնեցրած ու ներդաշնակ աշխատանք։ Վերցնենք հենց յերկու վոաների վրա կանգնելը։ Թվում ե, թե դա մի շատ հասարակ բան ե։ Բայց փոր ձեցեք կանգնեցնել դիակը և կտեսնենք, վոր այդ միանգամայն անհնարին եւ նույնիսկ դժվար ե ծեփել մարդու արձանն այնպիս, վոր նա կանգնի վոտների վրա, առանց պատվանդանի։ Բայց լնչու։ Շատ պարզ պատճառով։ Վոաների վրա կանգնելու ժամանակ բազմաթիվ մկաններ անընդհատ մրցության մեջ են դտընվում այն ուժի դեմ, վորի ազդեցության տակ մարմինը ձգտում է վայր ընկնել։ Կանգնած ժամանակ մարմինը՝ ձգտում է շարունակ վայր ընկնել, իսկ մկանները շարունակ խանգարում են և առաջ են բերում մի հանդարտ անշարժություն։ Այսպես որինակ, մեր գլուխը կկտիլիք, յեթե պարանոցային մկանները չպահպանեյին նրան (նկ. 24)։ Յեվ իրոք, հենց վոր այդ մկանները թուլանում են, գլուխն իսկույն կախ ե ընկնում, որինակ, ննջող մարդը, վոր շարունակ «գլխով ե անում»։ ծանր վիշտ ունեցող մարդը ևս գնում է գլուխը ցած ցցած։ Յեթե մենք գլուխը բարձր պահենք և նա մեր իրանի հետ մի ամբողջություն կազմի, դրանով դեռ ամեն վտանգ չի վերանում, այդ ժամանակ կարող ե մարմինը ծալվել ազդրերի մասում, յեթե այստեղ ևս չաշխատեցին համապատասխան մկաններ։ Սակայն մկաններն աշալուրջ կերպով աշխատում են և այդտեղ, նրանք մարմինը ձգում են դեպի յետ և ստեղծում են մի հաստատուն


սիստեմ մինչև ծնկները։ Բայց ծալվելու վտանգ կա և այդտեղ։ Այդ վտանգին հակազդում են ծալված վոտը բաց անող մկանները, վորոնք գտնվում են վոտի առջևի կողմում։ Կա և մի, ավելի պատասխանատու հոդ, այդ կրնկի հոդն ե, սա կարող ե ծալվել դեպի առաջ և այն ժամանակ մեր մարմինն իր ծանրության ազդեցության տակ իսկույն ցած կգլուրփի։ Սակայն սրունքի մկաններն իրենց զորեղ (Աքիլեսյան) զերով խանգարում են այդ հոդի ծոռումը։ Ահա հենց այդ մկաններն են, վորոնցով խիստ կերպով տարբերվում ե կապկայինից։ Մեր ազգակից կապիկների սրունքի մկանները չափազանց թույլ են և չեն կարողա-



Նկ. 24.

նում մարմինը պահել ուղղահայաց վիճակում։ Յեվ այդ ե պատճառը, վոր կապկիները ուղիղ կանգնելու ժամանակ սովորաբար հենվում են նաև ձեռքերի վրա։ առանց վերջինների ոգնության նրանք յերկար ժամանակ չեն կարող չինների ոգնության նրանք յերկար ժամանակ չեն կարող շինների ուղիղ գիրքը (նկ. 24)։ Վոչ միայն սրունքահպանել իրենց ուղիղ գիրքը (նկ. 25), վորքի մկանները, այլ գլխի անհարմար գիրքը (նկ. 25), վորքի մկանները, կենդանու մարմինը քաշում են դեպի շատ առաջ և ընկած, կենդանու մարմինը քաշում են դեպի ցած։ Միայն մարդն ե, վորի բոլոր մկանները աշխատելով ցած։ Սակայն մարդն ե, վորի բոլոր մկանները աշխատելով միասին կարողանում են պահել նրա մարմինի հավասարացիանը կարողանում ուղիղ գիրքի մեջ։

Կանգնելու ժամանակ մկաններն ամբողջ ժամանակը, ինչու պես տեսանք, մաքառում են այն ուժի դեմ, վորի աղղեցության տակ մարմինը ձգտում է վայր ընկնել, այդ մաքառումն ել ավելի ցայտուն կերպով յերեսում և ման գալու ժամանակ: Տեսնենք, թե ինչպես ե տեղի ունենում ման



Նկ. 25. Պորիլա (մարդանմտն կապիկ)

գալու գործողությունը: Նա սկսվում է այսպես. մենք նախ ամուր կերպով կանգնում ենք մի վոտի, որինակ, աջ վոտի վրա, իսկ ձախը առաջ ենք տանում. դա սկիզբն է: Այնուհետև նրանք ուժեղ շարժումով կանգնում ենք աջ վոտի մատերի վրա և մարմինը մղում դեպի առաջ:

70


հետեւ ձախ վոտն առաջ է ձգված, զրա համար ել մարմինը թեքվում է դեպի առաջ և վայր կընկներ անշուշտ, յեթե ձախ վոտն այդ ժամանակ չհենվել գետնին: Մի վայրկյան մենք կանգնում ենք մեր յերկու վոտների վրա. բայց իսկույն մարմնի ծանրությունը ճնշում է ձախ վոտի վրա և աջ վոտը պոկվելով գետնից նոր մղում և տալիս մարմին: Վերջինիս աղղեցության տակ մարմինը նորից թեքվում է դեպի առաջ և պատրաստվում է ցած ընկնել, բայց դրան իսկույն սկսում է խանգարել աջ վոտը, վոր առաջ շարժվելով՝ ընդունում է իր վրա մարմնի ծանրությունը: Այնուհետև մարմնին հրում է դեպի առաջ ձախ վոտը և այդպես շարունակ: Վորպեսզի այս բոլորը կատարվի կանոնավոր կերպով, պահանջվում է բազմաթիվ մկանների մի ներդաշնակ գործնեություն. ման գալու ժամանակ մարմնի հավասարակշռության պահպանման գործում մասնակցում են նաև ձեռքերի մկանները, սրանք նույնպես աշխատում են: Ահա այդպես է տեղի ունենում մեր շարժումը ման գալու ժամանակ:

Ինչքան ել մանրամասն քննելու լինենք զանազան մկանների աշխատանքը ման գալու, վազելու, մաղցելու, սողալու, լողալու ժամանակ, այնուամենայնիվ նա կշռափի յեւու, լողալու ժամանակ, այնուամենայնիվ նա կշռափի յեւույթների միայն արտաքին կողմը: Բայց հետաքրքրական է թափանցել այդ կծկվող մկանների խորքը և ծանրութանալ այն փոփոխությունների հետ, վոր տեղի յեւ ունենում նրանց մեջ աշխատանքի ժամանակ: Ի՞նչն է պատճառը մկանների կծկման: արդյոք այդ պատճառը պետք է վորունել հենց իրենց մկանների մեջ, թե գուրսը:

Գիտնականներն ասում են, վոր մկանը կծկվում է դրա ուի աղղեցության տակ: Յեվ իսկապես, հանելով մկանը կենաց դանու մարմնից և գրգռելով կարող ենք հարկադրել նրան կծկվել: Գրգռել կարող ենք զանազան միջոցներով, որից կծկվել: Գրգռել կարող ենք զանազան միջոցներով, որից կծկվել: Կարող ենք ասեղով ծակել, թթու քսելով մկանի մատերի, կարող ենք ասեղով ծակել, կամ յենթարկել կերեւութին, կարող ենք տաքացնել և կամ յենթարկել կերեւութին, կարող ենք աղղեցության: Ավելի հաճախ իբրև ելեքտրական հոսանքի աղղեցության:

գրգռիչ միջոց գործ են ածում ելքտրական հոսանքը։ Սակայն ինչ միջոցով ել գրգռելու լինենք մկանը, նա միայն մի պատասխան է տալիս, այն է կծկվում և Հարց և առաջանում, ինչն է հապա գրգռում մկանը կենդանի մարմնի մեջ։

Ցերը հետազոտում են մկանները, սովորաբար նկատում են, վոր դեպի մկանները գալիս են նյարդեր, վորոնք իրենց ծայրերով գրկում են մկանների վորոշ մասերը. ավելի լայն տարածություն գրկելու համար այդ նյարդերի ծայրերը մկանների մոտ ճյուղավորվում են յեղջերվի յեղջյուրների նման։ Ահա այդ հանգամանքը առիթ ե տվել յենթաղըելու,



Նկ. 26. Նյարդի ծայրը կազմում և մկանին կամելքտրական հոսանքով։ Յեկ նկատել են, վոր բոլոր տեղերում մկանը կծկվում է նշանակում և, նյարդի իր ստացած գրգիռը հաղորդում է մկանին։ Ել ավելի համոզեցուցիչ են այն փորձերը, վոր կատարել են դիտականները մարդու և կենդանիների դիակների վրա։ Որինակ, բաց են արել դիտակի մեջ վորեն նյարդ և գըրգուել զանազան միջոցներով և հետեանքը յեղել և այն վոր այդ նյարդի հետ կապված մկանները սկսել են կծկվել դիտակը սկսել և շարժումներ կատարել։ Ինարկե, դա կենդանացած նշան չպետք է համարել. դա միայն մահվանից հետո մկանի մեջ մնացած եներգիայի մնացորդի ոգտագործում է, ուրիշ վրչին։ Յեկ իսկապես, հենց վոր այդ եներ-

գիայի մնացորդը ծախսվում, վերջանում է, մկանն այլ ևս չի կծկվում, ինչքան ել մենք նրան գրգռում ենք զանազան ուժեղ գրգիռներով։

Մկանի կծկվումը տեղի յե ունենում արագ, հանկարծակի կարծեք նրա մեջ առաջանում է մի պայմանուն, վոր ցնցում ենրան և հարկադրում սեղմվել։ Պայմանն է մկանի կծկման մեջ նմանությունը մեծ է։ Ինչպես վոր պայման ժամանակ առաջանում են ջերմություն ու շարժում, այնպես ել կծկման ժամանակ մկանը տաքանում է և շարժվում։ Մկանի մեջ կուտակված քիմիական եներգիան փոխարկվում է ջերմության և շարժման, այսինքն տեղի յե ունենում ճիշանույն յերեսությը, ինչ վոր շոգեմեքենայի մեջ։ Տարբերությունը միայն նրա մեջ է, վոր շոգեմեքենայի մեջ քիմիական եներգիայի մի չնչին մասն է փոխարկվում շարժման, ընդամենը 10—12%-ը, մնացածը փոխարկվում է ջերմության, իսկ մկանի մեջ տեղի չի ունենում եներգիայի այդպիսի անոգություն։ Նրա քիմիական լարման մոտ մի յերրորդը (33%) փոխարկվում է ոգտակար աշխատանքի, այսինքն շարժման, և միայն 67%-ը ջերմության։ Բացի դրանից, այդ ջերմությունը իզուր չի կորչում, ինչպես այդ տեղի յե ունենում շոգեմեքենայի մեջ։ Նա տաքացնում է մեզ, հնարակորություն և տալիս մեր բջիջներին ապրել լավ պայմանների մեջ և պահպանում է մեր այն հաստատուն բարեխառնությունը, վոր բացի մեզնից ունեն նաև բոլոր տաքարյուն կենդանիները։ Այսինքն կաթնասունները և թռչունները։

ԹԵ ՎՈՐՏԵՂ Ե ԱՅՐՎՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԿՐԱԿԸ

Մեր մարմնի կյանքը շատ բարդ է ու խճճված։ Մեր մեջ աշխատում են բազմաթիվ մեծ ու փոքր մասեր, վորոնցից յուրաքանչյուրը տանում է իր ուրույն գործը, կատարում է իր հատուկ պաշտոնը։ Այդեղ կատարվում է այն, ինչ վոր տեսնում ենք մի մեծ գործարանում, այստեղ աշխատում

են հարյուրավոր բանվորներ, վորոնցից յուրաքանչյուրը կատարում է յուր առանձին գործը, բայց այդ չի խանգարում, վոր նրանք բոլորը միասին առաջ տանեն գործարանի ընդհանուր արդյունաբերությունը։ Մենք այստեղ, ինարկե, չպետք է զբաղվենք մեր մեջ կատարվող աշխատանքի բոլոր մանրամասնություններով այլ կանգ պիտի առնենք միայն նրա ամենախողոր յերեւյթների վրա։

Մենք տեսանք արդեն, վոր մեր մեջ կատարվելիք աշխատանքի համար անհրաժեշտ ե, վոր զբուից ույժ ստացվի։ Տեսանք նաև, վոր այդ ուժի աղբյուր և հանգիստանում կերակուրը և վոր ույժի առաջացման համար անհրաժեշտ ե, վոր յուրացրած կերակրի մասնիկները (նույնպես և մեր մարմնի) այրվին թթվածնի շնորհիվ։ Այդ բոլորը, ինարկե, շատ պարզ ե, բայց առաջանում է մի հարց։ Վո՞րտեղ և տեղի ունենում ամենամեծ ծախտումը վո՞րտեղ և նյութը այրվում ամենամեծ չափով։ Մենք գիտենք, վոր այդ տեղի յեւ ունենում մարմնի աշխատող մասերում, այսպես, որինակ փոստատարի վոտներում, խմոր հունցողի ձեռքերում և մեջքում, գիտնականի ուղեղում։ Բայց չե՞ն վոր կերակուրը մենք ընդունում ենք բերանով, վորտեղից գնում ե նա։ ստամոքսը և ապա աղիքները իսկ թթվածինը դրսից ներս և մտնում մեր թոքերը։ Ի՞նչպես են հապա հանդիպում նրանք միմյանց մարմնի այս կամ այն մասում, որինակ, ձեռքերում, վոտներում, մի խոսքով այնտեղ, վորտեղ պահանջե զգացվում։ Առաջանում ե և մի այլ հարց։ Յերբ աշխատանքի ժամանակ այդ նյութերը ոդտագործվում են, նրանց փոխարեն առաջանում են նոր նյութեր՝ ջուր, ածխաթթու գաղ, մեղ, քրտինք, վորոնք ինչքան կարելի յե պետք և շուր հեռացվեն մարմնից, վորովհետև այլաղես կարող են վնասել նրան։ Ո՞վ ե հապա հոդ տանում նրանց հեռացման մասին։ Յեկանականից դուրս ե գաղ, մարմնից վարդում և մեղ առաջանակ նախանակ առաջանում է ապա աղիքների շնորհությունների կայանը։

ԹԵ ԻՆՉՊԵՍ Ե ՏԱՐԱԾՎՈՒՄ ԹԹՎԱԾԻՆԸ ՄԱՐՄՆԻ ՄԵԶ

Արյունը, այդ կենդանատար հեղուկը վոչ մի բոսկ հանդիսաւ չունի։ Նա հոսում է մեծ արագությամբ անթիվ ու անհամար խողովակների (արյունատար անոթների) միջով, վոր ցանցի պես տարածված են մեր մարմնի բոլոր մասերում և տանելով իր հետ սննդանյութեր ու թթվածին՝ տալիս ե ամեն մի գործարանի այն, ինչի վոր նա պետք ե զգում։ Մկանը վողողող արյունը տալիս ե նրան ույժ ու ամրություն—ղեպի մաշկը յեկող արյան առատ հոսանքը կարմրեցնում ե մեր այտերը և մաշկին տալիս թարմություն ու ճկունություն, նա յե հաղորդում մեր աչքերին փայլ և մեր ուղեղին՝ գիտակցության պարզություն։ Իզուր չե, վոր մարմնի խնամքի լավագույն միջոցներից մեկը համարվում ե մասսամբ, մի միջոց, վոր արագացնում ե արյան հոսանքը։ Կյանքի այդ ամենակարեւը յերեւյթը՝ արյան շարժումը մարմնի մեջ, տեղի յե ունենում շնորհիվ սրտի։ Այս ժողովում մարմնի մեջ, տեղի յե ունենում շնորհիվ սրտի անխօնջ աշխատավորը մի կողմից շարունակ արյան նորանոր հոսանք և մղում գեպի մարմնի զանազան մասերը մյուս կողմից ել հավաքում ե իր մեջ արդեն մարմնի կողմից ոդտագործված արյունը։ Ով վոր պարզ կերպով պատկերացնում ե սրտի այդ հիմնական պաշտոնը, նա կհասկանալու մարդիկ շարունակ սրտի մեջ են վորոնում ամենաուժեղ զգացմունքների և ցանկությունների կայանը։

Միթե մեր սիրտը, այդ թփրացող և տաք արյունով լեցուն գործարանը մի հասարակ գործիք ե, մի փոքր մելքնակ գործարանը մարմնի բարդ մեխանիզմի մի մասը, մարդկային մարմնի բարդ մեխանիզմի մի մասը։ Սկզբից և յեթ այդ միտքը թվում ե մեղ անհավանական ու հրեշտական պատճեն։ Սիրտը, վոր այնքան զգայուն ե գեպի մեր ապահանակությունները, վոր այնքան ուրախ ու բուժներն ու տրամադրությունները, վոր այնքան ուրախ անպետք ու վնասակար նյութերի հեռացումը տեղի յե ունենակ արյան միջոցով։

Լսել «սիրտս կոտրվեց», «սիրտս ձաքեց», «սիրտս կանգնեց» և այլ արտահայտությունները, վոր համապատասխանում են մեր հոգեկան զանազան ապրումներին,


Յեվ չնայած այդ բոլորին, սիրտը մի պարզ գործիք է, վոր աշխատում ե ճիշտ և ճիշտ նույն կանոններով ու որենքներով, ինչ վոր մի հասարակ ջրմուղ։ Միայն սիրտը մղում ե վոչ թե ջուր, այլ արյուն։ նա մղում է ճնշման ուժով և նրա մղած արյունը նույն կողմից յետ չի դառնում, շնորհիվ այնպիսի փականների, վորոնք կան ջրմուղների մեջ։

Դիտենք սիրտը գիտնական հետազոտողի աչքերով և աշխատենք պարզել մեզ նրա աշխատանքի բնույթը։ Բայց դրա համար ամենից առաջ պետք է ծանոթանանք նրա կաղմության հետ։

ՍՐԾԻ ԿՐԿՆԱԿԻ ԴԵՐԸ

Սիրտը, ինչպես ասեցինք, մի հեղուկամուղ է, նրա պատերը բաղկացած են մսից, այսինքն մկաններից (նկ. 27)։ Նրա ներսում գտնվում են չորս խոռոչներ, գասավորված յերկու հարկի մեջ։ Վերևի հարկում գտնվում է յերկու «սենյակ», բաժանված միմյանցից մի միջնապատով։ այդ «սենյակները» կոչվում են նախախորշեր՝ աջը՝ աջ, ձախը՝ ձախ նախախորշ։ Նրանց պատերը այնքան ել հաստ չեն և ընդունակ են արագ կերպով սեղմակելու և իրենց մեջի արյունը դուրս մղելու։ Ներքեմի հարկում նույնպես կա յերկու սենյակ։ սրանք կոչվում են աջ և ձախ սրտախորշեր, այս սրտախորշերը հաղորդակցություն չունեն միմյանց հետ և բաժանված են միմյանցից մի հաստ մկանային պատով։ Սրտախորշերի մյուս պատերը ևս, մանավանդ ձախերը, շատ մսու են, հաստ ու ուժեղ։ Յեվ այն և պատճառը, վոր սրտախորշերը (մանավանդ ձախը) կարող են սեղմել չափազանց մեծ ուժով։ Յուրաքանչյուր սրտախորշը ունի մի յերկու անցք. մեկը նրանցից բացվում է դեպի նախախորշը, իսկ

մյուսը՝ դեպի մի հաստ խողովակ, վոր կոչվում է զարկեցյուղը դեպի մի հաստ խողովակ, վոր կոչվում է զարկեցյուղը։ Դիտեցեք ուշադրությամբ նկար 27-ը, վոր բակ (արտերիա)։



նկ. 27. Սիրտը, ձախ կողմում՝ արտաքին տեսքը, աջ կողմում՝ սրտի կարվաճքը, վերևում՝ սրտը հանգստյան ժամանակին, միջին՝ նախախորշերը կծկված, ներքեւում՝ սրտախորշը կծկված։

ներկայացնում է մարդու սրտի յերկայնությամբ կտրվածքը և աշխատեցեք իմանալ, թե ուր կարող ե գնալ արյունը, և աշխատեցեք իմանալ, արյունը կարող է գնալ արյունը,

յերք սեղմվեն նախախորշերը կամ սրտախորշերը: Սկսենք վերջիններից: Արյունով լցված սրտախորշերը արտագությամբ սեղմվում են ուժով և աղմուկով*: Նրանց դուրս մղված արյունը գնում է դեպի այն կողմը, վորտեղ նրա առաջ ձանապարհ ե բացվում: Կարելի յե կարծել, վոր սրտախորշի մեջ ձնշված արյունը կդնա յերկու ձանապարհով, այն եւ դեպի նախախորշը և դեպի զարկերակը: Բայց այդպես չի լինում իրականության մեջ, սրտախորշը սեղմվելու ժամանակ դեպի նախախորշը տանող ձանապարհը փոխվում են անմիջապես: Դրա համար կան փականներ, վորոնք արյան ձնշման տակ անմիջապես ծածկում են նախախորշը տանող անցքը: Այդ փականները նման են այնպիսի դռների, վորոնք բացվում են միայն մի կողմի վրա, այն ե դեպի սրտախորշերը, դեպի նախախորշերը նրանք բացվել չեն կարող, վորովհետեւ բազմաթիվ ջերով միացած, կապված են սրտախորշի ներքին պատերի հետ: Ինչքան արյունը մեծ ուժով և ճնշում այդ փականների վրա, այնքան նրանք ավելի պինդ են փակում դեպի նախախորշը տանող անցքը: Նշանակում ե, այստեղ գտնվում են նույնպիսի փականներ, ինչպիսի փականներ վոր կան ամեն մի հրդեհաշեջ ջըռ-մուղի մեջ: Դրանք հեղուկը բաց են թողնում միայն մի ուղղությամբ և թույլ չեն տալիս, վոր նա նորից յետ դա: Այդ ե պատճառը, վոր սրտի ձնշված արյունը գնում է միայն մի ճանապարհով, այն ե դեպի զարկերակը. և գնում է մեծ արագությամբ: Սակայն արյունն այստեղ հանդիպում է մի խոչընդոտի, զարկերակներն լցված են արյունով, վոր քիչ առաջ սիրտը մղել ե այնտեղ, ասել ե, այդտեղ նոր արյան համար տեղ չկա: Դրա համար ել նոր արյունը հենց վոր հանդիպում է հնին, հետ ե դառնում և աշշ խառում է նորից մտնել սրտախորշը, բայց այստեղ այլ փականներ փակում են նրա ճանապարհը: Այդ փականները

* Սրտի առաջ բերած ձաները հեշտությամբ կարող ենք լսել, յեթե ականջներս դնենք սրտի գիմաց, կը ծքի միջի գծից դեպի ձախ և հայտն կողերի արանքում գտնվող տարածության վրա:

կոչվում են զարկերակային և նման են իսկական գրավան-ների: Սրանց բաց բերանները դարձած են գեղի գարկ-երակը, իսկ կտրված յեղբերը՝ դեպի սրտախորշը: Վրա համար ել, յերբ արյունը հոսում է սրտախորշից, ճնշում և այդ փականները և նրանց պատերը հրում ե դեպի զարկ-երակի պատերը, գրանից անցքը բացվում է և արյունը մտնում է զարկերակի մեջ, իսկ յետ դառնալու ժամանակ, ընդհակառակը, գրպանանման փականները լցվում են ար-յունով և գրպանների յեղբերը հանդիպելով իրար՝ փակում են անցքը: Այդ փականները յուրաքանչյուր զարկերակի անցքի մոտ յերեք հատ են, գրա համար ել բոլորովին փա-կում են անցքը, բայց յեթե արյունը չի կարողանում վե-րադառնալ սրտախորշը, ո՞ւր ե գնում հապա նա. չե՞ վոր զարկերակի մեջ նրա համար տեղ չկա: Հարցը վճռվում ե շատ հեշտությամբ, զարկերակի պատերը առաձգական են, չդգորդ, ուեղինի պես, գրա համար ել արյան ձնշման աղդե-ձգորդ, ուեղինի պես, այստեղ գտնվում են և տեղափորում ար-ցության տակ ձգվում, լայնանում են և տեղափորում ար-ցուն իրենց մեջ, զարկերակը դրանից լայնանում, հաս-տանում ե:

ԱՐՅՈՒՆԱՏԱՐ ԱՆՌԵՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ


Այնուհետև, քանի արյունն զարկերակներով առաջ գնա-լով թափվում և նրանց ճյուղավորությունները ներկայա-ցնող անոթների մեջ սկզբնական զարկերակի պատերը սեղմվում են և աստիճանաբար ընդունում երենց նախկին ծավալը. այդ գործողության ժամանակ նրանք իրենց միջի ծավալը. այդ գործողության մեջում: Այսպիսով այն ուժեղ արյունը շարունակ առաջ մղում: Այսպիսով այն ուժեղ մղումը, վոր ստացել ե արյունը սրտախորշի սեղմումից, վոր ստացել ե արյունը սրտախորշի աղդեցության տակ հետզհետեւ փո-զարկերակային պատերի աղդեցության տակ հետզհետեւ փո-խարկվում է մի մեղմ և համահար առաջամդման: Այդ փո-խարկվում է մի մեղմ և համահար առաջամդման: Այդ փո-խարկումը տեղի յե ունենում շնորհիվ զարկերակի պատերի կարկումը տեղի լս ունենում է դառնության կամականության: Ինչպես տեսնում եք, այստեղ ևս չ'առաջամդման կարմակային պարմականի բան, վոր հատուկ լինի միայն կենդանի

մաբնին: Զե վոր մենք ոստվում ենք ամեն դեպքում մարմինների առածգականությունից, յերբ պետք ե լինում ուժեղ հարվածները փոխարկել սահուն շարժման: Ինչքան ուժեղ կերպով ցնցում ե հասարակ կառքը, փուրդոնը, բայց ինչքան մեղմ և հաճելի ճոճման ե վերածած այդ ցնցումները ուստորներ ունեցող ֆայտոնը և կամ փշած սեղինի շիներ ունեցող ավտոմոբիլը: Մարդատար վարդոնների առածգական ուստորները առաջ են բերում սահուն յերթ իսկ ապրանքային վագոնները, վորտեղ ուստորները շատ վատ են, անտանելի ցնցումներ են առաջացնում շարժման ժամանակ: Նույնն ենք նկատում և արյան շարժման մեջ. քանի անոթներն առողջ են և նրանց պատերը առածգական, արցուն հոսում ե նրանց միջով հարթ ու մեղմ հոսանքներով: Իսկ անոթների հիվանդության ժամանակ, յերբ նրանց պատերի մեջ կիր և կուտակվում (այդ հիվանդությունը կոչվում է արտերիոսակերոզ, այսինքն զարկերակների պլնդացումը, վորունենում են ծերերը, հարրեցողները և այլն), արյունը սկսում ե հոսել հարվածներով: Այդ ժամանակ արյան զարկը լինում ե խիստ ու ուժգին, իսկ սովորական պայմաններում թույլ ու մեղմ: Զարկերակների առածգականությունը շատ կարևոր ե, վորովհետեւ նա յե, վոր սրտի կծկումների շնորհիվ առաջացող արյան շարժումը վեր և ածում համաշափ և մեղմ հոսանքի:

Այժմ տեսնենք, թե սրտից արյունը ուր ե գնում: Հետենք նրա ճանապարհին՝ սկսելով սրտի ձախ սրտախորշից: Այսաեղից, ինչպես տեսանք, արյունը մտնում ե մի հաստ զարկերակային խողովակի մեջ: Այդ խողովակը կոչվում ե մայր զարկերակ կամ առբատ: Սա սրտից փոքր ինչ հեռանալով՝ տալիս ե իրենից մի շարք ճյուղեր, վորոնք նրանց մի մասը արյունը տանում ե դեպի գլուխը մյուս մերկի ձեռքերը, յերրորդ մասը՝ դեպի ստամոքսը, աղիքները, վոռները և այլն: Զարկերակի այդ բոլոր ճյուղերներին նորից ճյուղեր են արձակում իրենցից, ինչքան մեղմ և առաջացնում ե արյան շարժումը:

Վորոնցից յուրաքանչյուրը դարձյալ ճյուղեր ե տալիս և այդպես շարունակ, վերջը ստացվում են այնպիսի բարակ ուժեղ ճյուղեր, վոր հասարակոր և տեսնել միայն մանրաւում ճյուղեր, վոր հասարակոր և տակ: Այդ բարակ անոթները կոչվում են մազային անոթներ, սրանք մեր մարմնի բոլոր մասերում կազմում են խիտ ցանցեր: Յերբ մեր մարմնի վորևե մասը ծակում կամ կտրառում ենք, արյուն և գուրս գալիս, դրա պատճառն այն ե, վոր ծակելու կամ կտրելու գալիս, դրա պատճառն այս են այդ մազային անոթները, վորից ժամանակակից միջուն արյան հոսանքը դանդաղ ե, գուր համար ել արյան և մարմնի բջիջների մեջ առաջանում ե սերտ հաղորդակցություն: Արյունը տալիս է առաջանում ե սերտ հաղորդակցությունը և ստանում ե նրանցից բջիջներին սնունդ և թթվածին և ստանում ե նրանց ածխաթթու գաղ, ջուր և այլ նյութեր: Ծնորհիվ այդ հանգամանքի, արյան կազմությունը փոխվում ե, նա ընդունում ե այլ գույն: Նրա բաց-կարմիր գույնը դառնում է կապտավուն: Այս վիճակում արյունը մազային անոթներով ածխաթթու միջուն է այդ անոթները սնունդ են առաջ և գնում է, բայց շուտով այդ անոթները մեծանում ու միանալ միմյանց հետ: հետզհետև անոթները մեծանում ե աստանում են, առաջանում են այն կապույտ խողովակ-հաստանում են, առաջանում են այն կապույտ խողովակի հերը, վոր հաճախ յերեսում են մեր մաշկի տակ, ձեռքի, նաև վոր հաճախ յերեսում են յերկու մաշկի վրա: Այդ անոթները կոչվունքի և մարմնի այլ մասերի վրա: Այդ անոթները կոչվունքի յերակներ (վենաներ). նրանցով արյունը վերափում են յերակները, միադաշտ անոթից դեպի սիրաը (նկ. 28): Յերակները, միադաշտ անոթում ե նորից դեպի սիրաը յերկու մեծ յերակներ, նալով միմյանց հետ, կազմում են յերկու մեծ յերակներ, Սրտից վորոնք և թափվում են սրտի աջ նախախորշը: Սրտից դուրս յեկած արյունը վերադառնում ե նորից սիրաը, բայց դուրս յեկած արյունը վերադառնում է այլ գույն ունեցող զարկերափոխած վիճակում: բաց կարմիր գույն ունեցող զարկերափոխած վիճակում է այժմ կապտավուն գույնի յերակային արյունը դարձել ե այժմ կապտավուն գույնի յերա-

կային արյունը նա պարունակում ե իր մեջ բջիջների ոքսիդացումից առաջացող նյութեր և չափազանց աղքատ ե թթվածնի ու սննդանյութերի կողմից: Մի խոսքով, նա իր գերը կատարել վերջացրել ե, և նորից ոգտակար լինելու համար պետք ե յենթարկվի մեծ փոփոխության: Այդպեսել լինում է: Բայց շարունակենք հետեւել նրա ընթացքին: Յերբ արյունը թափվում ե աջնախախորշը շուտով սեղմակում են նրա պատերը և արյունը այնտեղից մղում աջ սրտախորշը Այն փականները, վորոնք դրանքում են նախախորշից դեպի սրտախորշը տանող անցքի վրա, ինչպես տեսանք, այդշարժմանը չեն խանգարում: Արյունը լցովում ե աջ սրտախորշը: Յերբ սեղմակում ե և սրտախորշը, արյունը մղվում ե դեպի այն զարկերակը, վոր գնում ե դեպի թոքերը: Աջ սրտախորշը և ունի նույն հարմարությունները, ինչ վոր ունի ձախը: Տարբերությունը միայն նրա մեջ ե, վոր աջ սրտախորշի պատերը բա-



Նկ. 28. Արյան շրջանառության սքեման և ունի նույն հարմարությունները, ինչ վոր ունի ձախը: Տարբերությունը միայն նրա մեջ ե, վոր աջ սրտախորշի պատերը բա-

րակ են, որու համար նրա առաջ բերած մղումը ավելի թույլ ե, քան ձախինը: Յեկ ի՞նչ կարէք կա ուժեղ մղման: Այն ձախապարհը, վոր պետք ե անցնի ձախ սրտախորշի արյունը, չափազանց մեծ ե, նա պիտի անցնի մարմնի բոլոր մասերում ցրված մազային անոթների միջով: Իսկ այն ճանապարհը, վոր գնում ե դեպի թոքերը և կրկին վերադառնում սիրտը անհամեմատ ավելի կարծ ե, որա համար ել արյունն այդ ճանապարհն անցնելու համար ուժեղ մղման կարիք չունի: Յերբ արյան շիթը աջ սրտախորչից հասնում ե թոքերը, սկսում է հետզհետե ձյուղեր տալ և վերածվել թոքերի բոլոր մասերում մանր մազային անոթների: Այս մազային անոթների մեջ տեղի յե ունենում գաղերի փոխանակություն, արյունից հեռանում են ջրային գոլորշին և ածխաթթու գաղը, իսկ դրաից ներս ե մտնում թթվածինը: Ենորհիվ այդ գաղերի փոխանակության՝ արյունը ստանում ե իր նախկին բացկարմիր գույնը: Այնուհետև արյունը մազային անոթներից հավաքվում ե թոքային յերակների մեջ և նրանցով վերադառնում սիրտը: Դեպի սիրտը յեկող այդ արյունը թափվում է ձախ նախախորշը, վորտեղից անցնում է ձախ սրտախորշը, և նորից կրկնվում է արյան նույն շրջանառությունը:

Այս հոյակապ աշխատանքը կատարում է սիրտը, վոր վոչ այլ ինչ ե, բայց յեթե մի պարզ հեղուկամուլ գործիք: Արյան հաղորդած նրա ույժը ճնշման ույժ ե: Այդ ույժի մի մասը արյունը գործ է դնում իր ճանապարհի վրա յեղածիունուները հաղթահարելու համար, իսկ մյուսը փոխարկությունները պարկերակների պատերի մեջ և տալիս ե ինչպես տեսանք, զարկերակների պատերի մեջ և տալիս ե արյան հոսանքին սահուն ընթացքը: Թե այդ աշխատանքը ինչքան կարելոր ե մեր կյանքի կանոնավոր ընթացքի տեսակետից, հասկանալի յե միանգամայն և կարիք չունի վորեւ բացատրության: Թե մեր ամբողջ մարմնի և թե նրա վորեւ բացատրության: Մարմնի աշխատանքին գործարանների աշխատությունը կախված է արյան մատակարարման յեղանակից: Մարմնի աշխատող

մասերը միշտ ավելի շատ արյուն են ստանում, վորովհետեւ ամեն մի աշխատանք ուժեղացնում է սրաի գործնեյությունը: Յեթե սիրտը առողջ է, դիմանում է այդպիսի ուժեղ գործնեյության, իսկ յեթե թույլ է, հիվանդ է, ապա ուժից վեր աշխատանքը կապվում է մեծ վտանգների հետ:

Նկատված է առնասարակ, վոր սրտի մեծությունը համապատասխանում է մարդու ֆիզիքական ուժին. սկանոտ մարդկանց սիրտը մեծ է լինում, իսկ վտիտ ու թույլ մարդկանց սիրտը՝ փոքր: Նա մոտավորապես ունի մի բոռունցքի մեծություն: Փոքր սիրտ ունեցող մարդկանց մարմին զանազան մասերի արյան մատակարարումը թույլ է կատարվում, դրա համար ել այդպիսի մարդկանց թափը թույլ է լինում:

ՅԵ ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ՇՆՋԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑՐԱԺԵՇՏ Ե

Մարմինի մեջ սնունդ և թթվածին ման ածող արյունը աշխատում է անընդհատ կերպով մեր ամբողջ կյանքի ընթացքում: Բավական է, վոր նա դադարի աշխատելուց և մարդ կմեռնի, կանդ կառնի կյանքի մեքենան: Ի՞նչու: Ի՞նչ է պակսում մարմնի բջիջներին իրենց աշխատանքը շարունակելու համար: Սնձնուդ թե թթվածին: Բանից գուրս և գալիս, վոր նրանք չեն կարող գոյություն ունենալ առանց թարմ թթվածնի, այդ տեսակետից զգայուն են մանավանդ նյարդային բջիջները, վոր գտնվում են մեր ուղեղի մեջ: Թթվածնից զրկվելու դեպքում նրանք մի բոռելից հետո ընդարձանում են բառիս իսկական մաքով և դադարում են դեկավարել իրենց յենթակա գործարանները, և ամենից առաջ շնչառության գործարանները, կանդ և առնում շնչառության գործողությունը, և մահը վրա յենանում: Հազարվոր որինակներ ցույց են տալիս, թե ինչքան զգայուն են բջիջները դեպի թթվածնի պակասությունը: Ամենքը փորձած կլինեն անշոշատ, թե ինչքան ծանր և շնչել բարձարդ սենյակներում, ուր ողը փչացած է: Այդպիսի վայ-


ընթառմ թույլերը, որինակ, կանայք ու յերեխաները, սովորաբ ուշագնաց են լինում, վորովհետեւ նրանց գլխուղեղի բջիջները թթվածնի պակասության պատճառով այլևս չեն կարողանում զեկավարել իրանի և վոտների մկանները, այսինքն այն մկանները, վորոնք աշխատում են մարդու կանգնած ժամանակը: Նկատված յերեսութեա, վոր աշխատական մարդը խեղղուկ ողի մեջ շատ շուտ և հոգնում: Պատճառուը պարզ է միանգամայն: աշխատող մարդը թթվածին ավելի շատ և գործ ածում, քան հանգիստ վիճակում գտնվողը: Շատ վնասակար և ողի պակասությունը մանավանդ արհեստանոցներում, գործարաններում, դպրոցներում, ընդհանուր ննջարաններում և այլն: Այն յերկներում, ուր բնակչությունը սովորել է մեծ հոգ տանել իր առողջության վրա, որինակ, Անգլիայում, աշխատում են շարունակ պատճանաները բաց պահել: Այնտեղ մարդիկ միջանցուկ քարակայությունը չեն կրում: Այս բոլորը ցույց են միներից այնպես յերկյուղ չեն կրում: Վաղ բոլորը ցույց են տալիս, վոր մարդկային մեքենայի աշխատանքի համար թարմ թթվածինը ավելի մեծ կարենություն ունի, քան վասելանյութը սնունդը: Յեկ այդ միանգամայն հասկանալի պատճառով: Բջիջը կարող է սննդի պաշար տեսնել մի վորոշ ժամանակի համար, և յեթե այդ պաշարն ել սպառվի, կարող ճիշտ ե, կնիքարի, բայց չել զրկվի կյանքից: Այլ բան ե ճիշտ ե, կարող է առաջ թթվածնի պաշար չես կարող հավասարացներ թթվածնի թթվածնից: Թթվածնի պաշար համար հարմարություններ չունի: Նույնական մարմինը դրա համար հարմարություններ են բարդացնելու արդի առաջնական մասնակի նաև բացկարմիր ծին: Թոքերի միջով անցնելու ժամանակ նաև բացկարմիր գույն ե ընդունում, վորովհետեւ հագենում և թթվածնով, գույն և ընդունում, վորովհետեւ հագենում և թթվածնով, բայց բավական է մի անգամ անցնի մազային անթիների բջիջը բավական է մի անգամ անցնի բջիջների միջով և մերձակող հաղորդակցության մեջ մտնի բջիջների մարմինը կարող է անցնել անցնելու մեջ և հարկադրված հետ, վոր զրկվի իր թթվածնի պաշարից և հարկադրված հետ, վոր զրկվի իր թթվածնի պաշարից և հարկադրված հետ, վոր զրկվի իր թթվածնի պաշարից և հարկադրված հետ, վոր արտահայտվում և թոքերի գալիս շնչառությունը, վոր արտահայտվում և թոքերի

Ընդարձակումով և սեղմումով: Բայց ի՞նչպես ե կատարվուայդ գործողությունը: Ծնչառական շարժումների մեխանիկան հասկանալու համար անհրաժեշտ ե համառոտ կերպով ծանոթանալ թոքերի կազմության հետ:

ԹԵ ԻՆՉՐԵՍ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԹՈՔԵՐԸ

Մարդու կրծքի վանդակը ծածկված ե կողքերից կողերով և կողամիջան մկաններով, իսկ ներքեւից՝ մի առանձին գմբեթաձև մկանով, վոր կոչվում ե ստոծանի կամ կրծքափորային միջնապատճեն կրծքի վանդակի: Մեջ տեղափորված են թոքերն ու սիրտը: Թոքերը նման են քսակների և բաղկացած են մի վերին աստիճանի նուրբ ու քնքույշ նյութից, վոր սեղինի պես կարող ե ուժեղ կերպով ձգվել, լայնանալ: Դրաից գեղի թոքերը դնում ե մի լայն խողովակ, վոր կոչվում ե շնչափող (արախսեյա). սա թոքերի մեջ բաժանվում ե բազմաթիվ մանր ու բարակ խողովակների, վոր կազմում են բրոնխները: Գլխավորը, վորի վրա մենք առանձին ուշադրություն պիտի դարձնենք, այդ այն ե, վոր թոքերը սերտ կերպով նստած են ստոծանու և կրծքի վանդակի պատերի վրա, նրանց մեջ արանքներ չեն դոյցանում, և զրոխ ողը չի կարող այդ մասերից մուտք գործել թոքերը: Այժմ տեսնենք թե ինչպես են տեղի ունենում թոքերի ընդարձակումն ու սեղմվելը, վոր կանոնավոր կերպով հաջորդում են իրար: Թոքերն իրենք իրենց յերեք չեն կարող շարժվել, գրա համար չունեն նրանք և վոչ մի հարմարություն, կարող են հեշտությամբ ընդարձակվել: Ծնչառական շարժումների պատճանն ու բնույթը կարելի յե պարզել մի շատ հասարակ գործիքի վրա: Վեցընենք մի մեծ ապակյա բանկա, վորպիսին տեսնում ենք նկ. 29-ի մեջ, կապենք նրա հատակին մի սեղինե թաղանթ, վորի ուղիղ մեջտեղից կպցըրած ե մի փոքրիկ ձեռնակ, և դնենք այդ բանկայի բերանին մի խցան, վորի միջով անց ե կացըրած մի ապակյա խողովակ, իսկ սրա ծայրին ել կապած ե ամուր

կերպով մի սեղինե փամփուշտիկ: Լցնենք բանկայի ներսը, փամփուշտիկի շուրջը ջրով: Այս գրության մեջ այդ բանի հիշեցնում ե մեր կրծքի վանդակը: Բանկայի սեղինե հատակը այդտեղ նման է ստոծանուն, բանկան ինքը՝ նման ե կրծքի վանդակին, ապակյա խողովակը՝ շնչափողին, իսկ փամփուշտիկը՝ թոքերին: Զենքը կարող արդյոք ստիպել վոր թոքեր ներկայացնող մեր փամփուշտիկը ընդարձակվի ու սեղմվի: Իհարկե, կարող ենք և շատ մեծ հեշտությամբ: Բավական ե բանկայի հատակը ճնշենք դեպի ներս, ինչ-



Նկ. 29.


պես այդ ցույց ե տրված նկարի մեջ, վոր ջուրը ճնշում գործ դնի փամփուշտիկի վրա. այդ ճնշման ազդեցության տակ նրա ծավալը կփոքրանա և միջի ողի մի մասը զուրս կգա: Իսկ յեթե կատարենք հակասակ գործողությունը, այսինքն սեղինե թաղանթը ցած քաշենք նկարի մեջ ցույց տված յեղանակով, այն ժամանակ փամփուշտիկի ծավալը զգալի կերպով կընդարձակվի և զրոխ ողը ներս կդնա: Կըրկնելով սեղինե թաղանթը մերթ ներս մտցնելու և մերթ ել դուրս քաշելու այդ գործողությունը, մենք կստիպենք փամփուշտիկին սեղմվել ու ընդարձակվել, և զրա հետ միա-

սին դրսի ողն ել մերթ դուրս կգա փամփուշտիկեց և մերթ ել կմտնի նրա մեջ։ Ինչպես տեսնում ենք, մեր շնչառական շարժումները բոլորովին նման են այդ փորձի ժամանակ տեղի ունեցող գործողություններին։ Թաղանթի ներս ճընշելը և փափուշտիկի սեղմվելը համապատասխանում ե մեր արտաշնչման, վորի ժամանակ թոքերի ծավալը փոքրանում ե և նրանց միջի ողի մի մասը դուրս ե դալիս, իսկ ոեղինե թաղանթի ցածրացնելը և փամփուշտիկի ծավալի ընդարձակումը համապատասխանում ե մեր ներշնչման, վորի ժամանակ դրսի ողը ներս ե մտնում մեր ընդարձակված թոքերը։ Ավելի մեծ նմանություն ստեղծելու համար յերբեմն այդ փորձի ժամանակ ոեղինե փամփուշտիկի փոխարեն դործ են ածում իսկական թոքեր, վոր վերցնում են վորեն կենդանուց, իսկ ապակյա խողովակի փոխարեն՝ իսկական շնչափող։ Այդ դեպքում ոեղինե թաղանթը ներս մտցնելու կամ դուրս քաշելու ժամանակ ընդարձակվում ու սեղմվում են արդեն իսկական թոքերը։

Այս փորձը ցույց ե տալիս, վոր փոփոխելով կրծքի վանդակի ծավալը՝ կարելի յե հարկադրել թոքերին աշխատել։ Նրանք ընդարձակվում են վոչ թե իրենք իրենց, այլ ձզդում, լայնանում են, վորովհետեւ ընդարձակվում ե ինքը կրծքի վանդակը։ Նշանակում ե շնչառության պատճառը պետք ե վորոնել կրծքի վանդակի մեջ։ Բայց ինչպես ե փոխվում կրծքի վանդակի ծավալը։ Ամենքը գիտեն, վոր շնչառության ժամանակ կուրծքը բարձրանում ու ցածրանում ե, դիտեն նաև, վոր այդ շարժումների ժամանակ մասնակցություն ե ունենում նաև փորի կամ վորովայնի պատը։ Բայց թե ինչո՞ւ այդ ժամանակ կրծքի վանդակի ծավալը մեծանում ե, այդ պետք ե արդեն բացարել։

Այստեղ ամեն բան կախված ե կողերի ձեկց և դասավորությունից։ Դիտելով նկ. 20-ը, մենք նկատում ենք իսկույն, վոր կողերի առջեկի ծայրերն ալելի ցածր են, քան հետեւնները։ Շնչառության ժամանակ մի շարք մկաններ ձգում և վեր են բարձրացնում կողերը և նրանց հետ միա-


սին կրծքի վոսկը։ Իսկ ի՞նչ ե առաջանում դրանից։ Իհարկե, այն, վոր կողերն ու կրծքի վոսկը այդ ժամանակ անխուսափելի կերպով առաջ են շարժվում և հեռանում վողնաշարից։ Դրանից կրծքի վանդակը ընդարձակվում ե յետեկց դեպի առաջ յեկող ուղղությամբ։ Բայց այդ դեռ բավական չե։ յերբ կողերը բարձրանում են, միմյանցից հեռանում են և նրանց կողքերի ծայրերը, վոր համար ել կրծքի վանդակը ընդարձակվում ե և լայնությամբ։ Յեթե դիտենք չնչող մարդուն կողքից, կտեսնենք, վոր ներշնչման ժամանակ փորի պատը բարձրանում ե, իսկ արտաշնչման ժամանակ՝ իջնում։



Նկ. 30. Կողերի և ստոծանու շարժումները շնչառության ժամանակ

Այդ առաջանում ե նրանից, վոր կրծքափորային միջնապատը (ստոծանին) նույնպես մասնակցում ե շնչառական շարժումներին (նկ. 30)։ Յերբ նա իջնում ե, ձնշում ե գործ գնում իր տակը գտնվող լյարդի և ստամոքսի վրա, սրանք ել իրենց հերթին ձնշում են վորովայնի մյուս գործարանների վրա և նրանց առաջ մղում, վորից և փորը դուրս ե ընկնում (նկ. 31)։ Յերբ կրծքի վանդակն այդպես ընդարձակվում ե ամեն ուղղությամբ, ի՞նչ պետք ե անեն հապաթոքերը, վոր տեղավորված են նրա մեջ։ Պետք ե տրդյոք նրանք ևս ընդարձակվեն կրծքի վանդակի հետ միասին,

թե՞ պետք ե պահպանեն իրենց նախկին ծավալը։ Յեթե հիշենք մի հանգամանք, ամեն բան կարդավի մեղ համար։ թոքերի ու կրծքի վանդակի պատերի միջն բաց տարածություն չկա։ Նշանակում ե, յեթե թոքերը կրծքի վանդակի հետ միասին չընդարձակվելին, այն ժամանակ նրանց արանքում պիտի գոյանար դատարկ տարածություն։ Սակայն արտաքին ողը, վոր աղատ մուտք ունի դեպի թոքերը



Նկ. 31. Շնչառության ախպեր, ձախ կողմում՝ կրծքային, աջ կողմում՝ փոքային։

և զտնվում ե իրենից վեր գտնվող հսկայական հաստություն ունեցող ողային շերտի ձնշման տակ, յերբեք չի թողնի, վոր այստեղ դատարկություն առաջանա. նա իր ձնշումով կծի թոքերի առածքական հյուսվածքը, և կաղմի թոքերը կրծքի վանդակի պատերին։ Արտաշնչման ժամանակ տեղի յե ունենում դրա հակառակ գործողությունը և իջնում, նստում և վորովայնի պատը։ Ստոծնուու ցած իջնելու ժամանակ ուժեղ կերպով ընդարձակվում ե կրծքի վանդակի

ծավալը վերևից դեպի ցած ուղղությամբ, ճիշտ այնպես, ինչպես այդ տեսանք մեր վորձի ժամանակ։ Պետք ե ասենք, վոր բոլոր մարդկանց վրա լավ չի նկատվում վորովայնի պատի բարձրանալն ու ցածրանալը։ Վոմանք շնչում են գլխավորապես ստոծնուու (փոքային տիպ), վոմանք ել՝ կրծքի վանդակի միջոցով (կրծքային տիպ). բայց ինչ ձեռվ ել մարդ շնչելու լինի, միևնույն ե, ներշնչման ժամանակ պիտք ե նրա կրծքի վանդակը ընդարձակվի, իսկ արտաշնչման ժամանակ՝ փոքրանա։ Յեվ կրծքի վանդակի այդ շարժումներին ակամայից, միանգամայն պասսիվ կերպով հետևում են և թոքերը. և յերբ սրանք ընդարձակվում են, զրսից ող ե մտնում նրանց մեջ, իսկ յերբ սեղմվում են, ընդհակառակը, ողի մի մասը դուրս ե գալիս նրանցից։ Ահա այդպես ե կատարվում մեր թոքային հողմանարությունը, վոր շարունակ մատակարարում ե մեր մարմնին թարմ ողի նորանոր քանակություններու ինչպես տեսնում եք, չափազանց պարզ կազմություն ունի մարդ-մեքենայի փուլքսը։

ԹԵ Ի՞ՆՉՆ Ե ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԹՈՔԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Թոքերի աշխատանքը, ճիշտ ե, պարզ ե, բայց այդ աշխատանքի վերաբերյալ կան մի շարք հարցեր, վորոնց պետք ե պատասխանենք։ Այսպես, որինակ, ինչու շնչառական մկանները մեկ բարձրացնում են, մեկ ել իջեցնում են կրծքի վանդակը. ով ե հսկում նրանց աշխատանքի կանոնավոր ընթացքի վրա, ով ե, վոր հարկը պահանջած ժամանակ ուժեղացնում ե շնչառական շարժումները, ինչպես այդ տեսնում ենք ֆիզիքական աշխատանքի կամ արագ քայլելու ժամանակ, և ընդհակառակը, թուլացնում ե, յերբ արագ շնչառության կարիք չկա։ Ահա յերբ պատասխանենք ե այս հարցերին, այն ժամանակ շնչառության մեխանիզմը բոլորովին կպարզվի մեղ համար։

Այս հարցերը հետաքրքրել են և գիտնականներին, և Նրանք, բազմաթիվ փորձեր կատարելով, շատ բան են պարզել: Մենք, իհարկե, միայն համառոտ կերպով պետք է ծանոթացնենք ձեզ այդ հարցերի նկատմամբ գիտնականների կատարած աշխատանքների արդյունքների հետ:

Մեր մարմնի բոլոր գործարանները կապված են միմյանց հետ: Նրանք բոլորը ապնում են մի ընդհանուր կյանքով. ինչպես ասում են, աջ ձեռքը գիտե միշտ, թե ձախը ինչ ե անում, Բայց ի՞նչն ե, վոր կապում ե նրանց բոլորին միմյանց հետ: Գիտնականները գեռ վաղուց են իմացել, վոր նրանց միմյանց հետ կապողը նյարդերն են: Անթիվ անհամար թելերով ցրված են նրանք մեր ամբողջ մարմնի մեջ և միանում են ամեն մի մկանի, ամեն մի գեղձի և մաշկի ամեն մի մասնիկի հետ: Իսկ այդ նյարդերը դուրս են գալիս գլխի և մեջքի ուղեղներից: Նշանակում ե, գլխի և մեջքի ուղեղները նյարդերի միջոցով միացած են մեր մարմնի բոլոր մասերի հետ, ճիշտ այնպես, ինչպես պետության մայրաքաղաքը հեռագրաթելերի ցանցի միջոցով միացած ե պետության բոլոր ծայրամասերի հետ: Այսպես, որինակ, յերբ չանդում ենք մեր ձեռքը, մենք անմիջապես ցավ ենք զգում: Ինչու Պատճառը պարզ ե, այն նյարդը, վոր վերջանում ե մաշկի չանգաված մասում, իսկույն կատարված դեպքի մասին տեղեկություն ե տալիս կենարոնին, գլխի ուղեղին, վորը և ցավ և զգում չանցուված տեղում: Յուրաքանչյուր նյարդ իր առանձին տեղն ունի ուղեղում, վորին և ժամանակ առ ժամանակ «տեղեկություններ» ե տալիս նյարդային գրգիռների ձևով: Նյարդային գրգիռները կարող են հաղորդվել ուղեղի մի մասից մյուսին, բայց կարող են և առանձին նյարդերի միջոցով հաղորդվել ուղեղից մարմնի այս կամ այն աշխատող մասին: Նյարդերի բերած գրգիռները կարող են մարմնի այս կամ այն մասին կամ հարկադրել աշխատել, կամ կանգնեցնել նրանց աշխատանքը և կամ ունենալ նրանց վրա վորեն այլ աղղեցություն: Ուղեղի այն մասերը, վորտեղից դուրս են գալիս այս կամ


այն գործարանի աշխատանքը զեկավարող նյարդերը, կոչվում են այդ աշխատանքը զեկավարող նյարդային կենտրոններ. որինակ, ուղեղի այն մասը, վոր հարկադրում է մեր կրծքի վանդակին կատարել շնչառական շարժումներ, կոչվում ե շնչառական կենտրոն:

Նախ և առաջ անհրաժեշտ է իմանալ թե վարտեղ են գտնվում շնչառական շարժումները զեկավարող նյարդային կենտրոնները, և ապա պետք է պարզել, թե ինչպես են կատարում այդ կենտրոնները իրենց վրա դրված պարտականությունները: Առաջին նարզը, իհարկե, համեմատաբար ավելի հեշտ է լուծել: Դրա համար գիտնականները կատարել են մի շարք փորձեր կենդանիների վրա. Նրանք, որինակ, կարել են կենդանիների ուղեղի զանազան մասերը և դիտել, թե ինչ փոփոխությունների յեն յենթարկվում նրանք: Յեվ առա այդպիսի փորձերով պարզվել ե, վոր յերբ կտրում են կենդանու յերկայնաձիգ ուղեղն այնպես, վոր կտրվում է այդ ուղեղի և թոքերի միջև յեղած կապը, անմիջապես խանգարվում են շնչառական շարժումները, իսկ յերբ կտրում են այնպես, վոր այդ կապը չի խախտվում, ապա շնչառությունը շարունակվում է կանոնավոր կերպով: Վողնուղեղն իր վերին մասում լայնանում է: Նրա այն մասը, վոր մտնում ե գանգի մեջ և միանում անմիջապես գլխի ուղեղի հետ, կոչվում է յերկայնաձիգ ուղեղ: Մեր նյարդային կարենը կենարոններից շատերը գտնվում են այդ ուղեղամասի մեջ: Նշանակում ե, շնչառական շարժումների կենարոնը գտնվում է յերկայնաձիգ ուղեղի մեջ: Այդ կարելի յեր, իհարկե, իմանալ և առանց այդ փորձերի գեռեա վաղուց հայտնի յելեղել, վոր այդ ուղեղի վասումից կամ նրա վորոշ մասը ծակելուց, անմիջապես կանգ և առնում շնչառությունը և առաջանում է մաս: Շատ տեղերում այդպիս են սպանում սպանդանոցներում կենդանիներին. այդպիս են վարգում և ցլամարտի դուրս յեկողները. նրանք աշխատում են սրով զարկել ցուլի յերկայնաձիգ ուղեղին, և այդպիսով վայրկենապես զլորում են կենդանուն անշնչացած վիճակում:

Բայց ինչպես և կատարում այդ կենտրոնը իր աշխատանքը:
 Նրանից շարունակ շնչառական նյարդերի միջոցով գրգիռուներ են գնում դեպի այն մկանները, վորոնք բարձրացնում են կողերը. գրգիռներ գնում են նաև դեպի ստոծանին: Այդ գրգիռները գնում են վոչ թե մի անընդհատ հոսանքով, այլ ժամանակ առ ժամանակ. միջին տարիքի նորմալ մարդը հանգիստ վիճակում մի ըովելյում շնչում ե 16 անգամ: Իսկ յերբ նրան հանկարծ ավելի շատ թթվածին ե լինում պետք, որինակ, յերբ մարդ վազում ե կամ կատարում ե վորեւ ծանր աշխատանք, այն ժամանակ յերկայնաձիգ ուղեղի շնչառական կենտրոնը, ընդառաջ գնալով մարմնի պահանջին, սկսում ե ավելի շուռ - շուռ և ավելի ուժեղ գրգիռներ ուղարկել շնչառությունն առաջ բերող մկաններին: Բայց ինչպես և կատարվում այդ: Շնչառական կենտրոնը գտնվում ե յերկայնաձիգ ուղեղում, այսինքն մարդու պարանոցի վերեկի մասում, իսկ աշխատանքը կատարում են վոտները: Ո՞վ ե այդ աշխատանքի մասին տեղեկացնում նրան: Իհարկե, նյարդերը. սրանք վոտի ամեն մի փոփոխության մասին տեղեկացնում են ուղեղին: Նրանց միջոցով ե, վոր գլխի ուղեղը իմանում ե վոտի վրա կատարված բոլոր գործերը: Յեթե այսպես ե, ինչու պետք ե նրանք տեղեկություն չտան և թթվածնի կարիքի մասին: Բայց փաստերը գալիս են դրա հակառակը ապացուցելու: Կտրեցեք այն նյարդը՝ վոր կապում ե վոտը ուղեղի հետ, և կտեսնեք, վոր վոտն այլևս վոչինչ չի գումար. ազատ կերպով կարող եք ծակել, դաղել կարել, և նա վոչինչ չի իմանա: Բայց հենց վոր ելեքտրական հոսանքի միջոցով սկսեք ուժեղ շարժման մեջ դնել այդ վոտը, կտեսնեք, վոր շնչառությունն արագանում ե, նշանակում ե, շնչառության կենտրոնը շարունակում է հեշտ տեղեկություններ ստանալ թթվածնի կարիքի մասին և առանց նյարդի: Հարց ե առաջանում, ինչպես: Բացի նյարդից, ուղեղն իւլ ինչի միջոցով ե տեղեկություններ ստանում: Կարելի յե յենթադրել, վոր այդ դերն իր վրա յե վերցնում արյունը: Բայց յենթադրելը բավական չե. հարկավոր ե յեն-

թաղբությունը հաստատել փորձերով: Գիտնականները այդ ուղղությամբ ահագին աշխատանք են կատարել և բազմաթիվ փորձերը հաստատել են անհերքելի կերպով, վոր շնչառական կենտրոնը գրգիռներ ե ուղարկում այն ժամանակ, յերբ ինքը գրգուղում ե ածխաթթու գաղով հարուստ արյունից: Այդ փորձերից մեկը մենք նկարագրենք այստեղ:

Վերցնում են յերկու հատ միանման ձագար և այնպես են անում, վոր նրանցից յուրաքանչյուրի ուղեղը վողողվի մյուսի արյունով (նկ. 32): Դրա համար կտրում են նրանցից յուրաքանչյուրի պարանոցի այն զարկերակը, վոր թարմ արյուն



Նկ. 32. Ֆրեգերիկի փորձը

և տանում սրտից դեպի գլուխը: Այնուհետև մոտեցնում են ձագարները իրար և ապակյա ու սեղինե խողովակների միջոցով մի ձագարի զարկերակային (թարմ) արյունը հասցնում են դեպի մյուսի գլուխը: Դրա հետևանքը լինում է, իհարկե, այն, վոր ձագարներից ամեն մեկի գլուխը (հետևապես և յերկայնաձիգ ուղեղը) արյուն է ստանում մյուսից: Այնուհետև սկսում են դժվարացնել առաջին ձագարի շնչառությունը: Յեկ ահա թե ինչ են նկատում: Ճագարը ցույց չե տալիս շնչարգելության և վոչ մի նշան. նա կարծես չի զգում նույնիսկ, թե ինչ են կատարվում իրեն հետ: Յեկ համարկանալի յե թե ինչու: Զե՞ վոր նրա շնչառական կենտրոնը

վոչ մի տեղեկություն չի ստանում այն մասին, վոր արյան մեջ կուտակվել ե մեծ քանակությամբ ածխաթթու գագ. այդ կենտրոնը վողողող արյունը թարմ է, նա գալիս ե մյուս ճագարի զարկերակից: Նրա սեփական արյունը, վոր ողի պահապության պատճառով թունավորվել ե ածխաթթու գագով, այլև մուտք չի գործում նրա յերկայնաձիգ ուղեղը, դրա համար ել առաջին ճագարը մնում ե միանդամայն հանգիստ վիճակում: Իսկ ինչ և լինում այդ ժամանակ յերկրորդ ճագարը: Սրան թեպետ և ձեռք չեն տալիս և վոչ մի բանով չեն խանդարում շնչառությունը, այնուամենայնիվ նա յերևան ե հանում շնչարգելության նշաններ: Նա սկսում ե շնչել արագ արագ, և այդ այն պատճառով, վոր նրա յերկայնաձիգ ուղեղն այժմ վողողվում ե վոչ թե թարմ, այլ փչացած ու կեղուս արյունով, վոր գալիս ե առաջին ճագարից. Նրա շնչառական կենտրոնը կարծեք թե մի տեսակ խարվում ե այդ արյունից: Այսպիսով միանդամայն պարզվում ե, վոր արյան մեջ կուտակվող ածխաթթուն ե հանդիսանում այդ պատճառը վոր գրգռում ե նյարդային շնչառական կենտրոնը: Նա յե առաջ բերում շնչառական շարժումները և նա յե, վոր միանդամայն ավտոմատիկ (մեքենայորեն) արագացնում ու խորացնում ե շնչառական շարժումները: Շատանում ե ածխաթթուն արյան մեջ — արագանում ե շնչառությունը, քշանում ե նրա քանակությունը — դանդաղում ե շնչառությունը: Այստեղ մենք տեսնում ենք ինքնակառավարման մեխանիզմի մի որինակ, ինչպիսին շատ հաճախ կարելի յե հանդիպել և մեքենաների մեջ:

Այս բոլորը, ինչպես և շնչառական գործիքի այստեղ չնկարագրված մի շարք այլ հարմարությունները, անհրաժեշտ են նրա համար, վոր նա կարողանա համաձայնեցնել իր աշխատանքը մյուս գործարանների հետ և կարողանա շարունակ անհրաժեշտ չափով թթվածին մատակարարել նրանց և ազատել նրանց ֆլասակար ածխաթթու գագից: Յեկ այդ ե պատճառը, վոր շնչառական գործարանի ամեն մի խանդարում աղետաբեր աղղեցություն ե ունենում ամբողջ որդանիզմի

վրա: Դրանով ե բացատրվում, վոր թոքային հիվանդությունները այնքան սարսափելի յեն համարվում: Իսկ այդ հիվանդությունները շատ տարածված են քաղաքային բնակչության մեջ, վոր շնչում ե փոշոտ ու թունավոր ոդ և աշխատում ե ժամեր շարունակ խեղողով և վատ հողմահարվող ոդ ունեցող բնակարաններում՝ գրասեղանի կամ դազդահի վրա կորացած վիճակում: Կան մի շարք արդյունաբերական ճյուղեր, վորոնք առանձնապես ինասակար են թոքերի համար. զրանք այն ճյուղերն են, վորտեղ աշխատանքի ժամանակ բարձրանում ե արձնի, փայտի, ածխի և այլն փոշի ուժը չե հայտնի, թե ինչպես արագ կերպով կորցնում են իրենց առողջությունը զբաշարները: Նրանք շնչում են թռքելը քայլքայող արձնի փոշի: Յեկ զարմանալի չե, վոր նրանք միշն հաշվով ապրում են 40—45 տարի: Մի հասակ, յերբ մարդ գանվում ե դեռ ուժերի ծաղկման շրջանում: Իսկ ապակու գործարանի բանվորները, իսկ քարտաշները, հանքափորները: Նրանց թոքերի հյուսվածքը վերքոտված ե ապակու փոշու այն մանրիկ մասնիկներով, վոր առաջանում են ապակին հղիկերու ժամանակ, կամ վերքոտված ե այն քարե կամ ածխե մասնիկներով, վոր ներս են խուժում այդ բանվորների թոքերը փոշու և ծիփ հետ միասին: Իսկ ինչքան ֆլասակար գաղերից ե բաղկացած այդ ծուխը: Այս, այդ գաղերը հետապնդում են բանվորներին ամենուրենք. թե հանգաներում, թե տուններներում, թե ելեքտրական կայաններում և թե մետաղագործարաններում: Սրճին ու անդիկը, որինակ, միշտ թունավորում են բանվորներին. ալյումինիումը նույնպես, նույնիսկ մի քանի տեսակի փայտաքաղաքի վրա:

Միթե հնարավոր չե մաքառել այդ թշնամիների դեմ, վորոնք կամ դանդաղ կերպով են թունավորում և կամ ուղղակի սպառնում են մարդկանց կյանքին, ինչպես այդ լինում ե հանգերում, ուր կուտակվում են մեծ քանակությամբ պայթուցիկ գաղեր: Միթե չկան միջոցներ այդ նյութունը են ունենում ամբողջ որդանիզմի

անվասս դարձնելու համար: Իհարկե, կան: Որինակ, կան մի տեսակ ծծող խողովակներ, վորոնք ապակու փոշին տանում են գեպի փողոցը, հարկավոր և դնել մի քանի այդպիսի խողովածներ այստեղ, վորտեղ առաջանում և այդ փոշին, և բանվորներն այլեւ չեն յենթարկվի նրա վասակար ազգեցության: Կան և այլ միջոցներ, վորոնք ամենայն հաջողությամբ հեռացնում են գործարաններից վասակար գաղերը, ծուխը, փոշին: Բայց կապիտալիստական յերկրներում միայն միջոցներ ունենալը բավական չե: Զե վոր նրանք բոլորը փող արժեն, իսկ նրանց տված ոգուածը միայն բանվորի առողջությունը պահպանելն ե: Մի ոգուած, վորի համար զործարանատերը սովորաբար փող չի ծախսում: Բանվորներ շատ կան. մեկը կմեռնի, իսկույն սովը մի ուրիշին կհրի գեպի դործարան: Յեկ այդ և պատճառը, վոր այնտեղ, վորտեղ հնարել են բանվորի առողջությունը պահպանող զանազան միջոցներ, ամեն որ միլիոնավոր բանվորներ դեռ շարունակում են թունավորվել թունավոր ծխից, փոշուց ու գաղերից: Ամեն որ փչանում են անթիվ անհամար մարդկային որդանիզմ ներկայացնող հրաշալի մեքենաներ: Կեղաստվում և վերջուածում են նրանց թոքերը: Իսկ այդ հանգամանքը ահա թե ինչպես և ազդում մարմնին թթվածին մատակարարող շնչառական գործարանի վրա: Վասաված թոքերը, մի բոպեյում 16 անգամ շնչառական շարժում կատարելով, ինչպես այդ տեղի յե ունենում կանոնավոր առողջ շնչառության ժամանակ, այլև չեն կարողանում մատակարարել մարմնի բջիջներին անհրաժեշտ քանա ությամբ թթվածին: Դրա համար ել, վորպեսզի կատարած լինեն իրենց վրա դրված պարտականությունը, հիվանդ թոքերը սկսում են ավելի արագ ու ուժեղ կերպով աշխատել: (Այժմ գիտենք մենք, թե ինչպես և առաջանում այդ նպատակահարմարությունը, արշան մեջ հավաքվում ե ավելի շատ ածխաթթու գաղ, վորը և ավելի հաճախ ու ավելի ուժեղ կերպով ե գրգռում շնչառական կենտրոնը և սա յել իր հերթին ավելի շուտ-շուտ ե գրգիռներ հասցնում գեպի շնչառական մկանները): Թոքերի

շարժումների թիվը մի բոպեյում հասնում է 30—40-ի, փոխանակ 16-ի: Յերեկի ամենքդ լսած կլինեք, թե ինչպես ուժեղ ու արագ են շնչում թռքախտավորները: Գուցե և շատերդ ականջ եք գրել ձեր հարազատների այդ ձեմի փոթորկալի շնչառությանը:

Սակայն ինչքան ել հիվանդ թռքերը լարում են իրենց ուժերը, ինչքան ել արագացնում են նրանք իրենց շարժումները, այնուամենայնիվ չեն կարողանում բավարարել մարմնի պահանջներին: Մարմնին մատակարարած նրանց թթվածնի քանակությունը քանի զնում, այնքան ավելի և ավելի նվազում ե: Յեկ թթվածնի ծախսն ամենից առաջ ազդում ե ուղեղի բջիջների վրա: Գիտակցությունը սկսում և աղոտանալ: Հեղողությունը թուլանում ե: Հոգեկան կյանքը սկսում ե մարել ճիշտ այնպես, ինչպիս ճրադը՝ առանց ողի: Նրա գործնեյությունը դադարելուց հետո կանգ և առնում և մարմնական կյանքը: Այնուհետև մարմնի բջիջները՝ աղիքների, մաշկի և այլն, գեռ մի վորոշ ժամանակ շարունակում են ապրել: Մազերն ու յեղունդները աճում են: Բայց փչացած ու քայքայված մասնիկները այլևս չեն նորոգվում, և քայքայումը քանի զնում ավելի արագանում ե:

ՍՆՈՒՆԴԸ ԻԲՐԵՎ ԵՆԵՐԳԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐ

Սնունդը մարդկային եներգիայի աղբյուրն ե: Մեր մարմինը, նման մի շարք մեքենաների, կարող ե եներգիան կուտակել իր մեջ և պահել իրը պաշտպան կարիքի գեղգում գործադրելու համար: Յերբ լարում ենք ժամացույցը, մենք հաղորդում ենք նրա զսպանակին մեր սեփական եներգիայից մի վորոշ պաշտպան, վոր զսպանակը այնուհետև ծախսում ե դանդաղ ու համաչափ կերպով ժամացույցի մեխանիզմը շարժման մեջ պահելու վրա: Մի այլ որինակ. ելեքտրական կայանում կան ակկումուլյատորներ, վորոնք ցերեկներն ու կես գիշերներից հետո հավաքում, կուտակում են իրենց մեջ ելեքտրական եներգիա և յերեկոները բաց թողնում այդ

Եներգիան տներն ու փողոցները լուսավորելու համար: Նշանակում ե, ժամացույցի մեջ եներգիայի պաշարը մնում է զսպանակի լարման, այսինքն առաձգականության ձևով, իսկ ալլումուցատորների մեջ քիմիական եներգիայի ձևով: Մարդու մեջ եներգիան պահպում է բջիջներում և պահպում է ճարպի, մկանների, արյան և մարմնի զանազան մասերը կազմող այլ նյութերի, այսինքն քիմիական նյութերի ձևով: Որգանիզմի աշխատանքի ժամանակ անընդհատ ծախսվում են այդ նյութերը, դրա համար ել նըանց պակասը ժամանակ առ ժամանակ լրացվում է սննդի միջոցով:


Յերբ ասում են, թե այսինչ կերակուրը ավելի սննդարար ե, դրանով ուղում են ասել վոր այդ կերակուրը պարունակում ե իր մեջ եներգիայի ավելի մեծ պաշար, վոր կարող է մեր մարմինը ոգտագործել: Բայց վորպեսզի մեր մարմինը կարողանա ոգտագործել կերակրի մեջ յեղած եներգիան, պետք է չափազանց մեծ աշխատանք գործ դնի: Չե վոր ծառերի եներգիայից ևս շոգենեքնան իսկույն չի կարողանում ոգտվել: Ծառերը պետք ե նախ կտրել կոտրածել, ցախ շինել չորացնել և ապա, այրելով, նրանց մեջ յեղած քիմիական լարումը փոխարկել ջերմության: Մի խոսքով եներգիան ոգտագործելու համար անհրաժեշտ ե նյութը յենթարկել նախնական մշակման: Սնունդը ևս պահանջում և նման մշակումն: Սկզբում բերանում մենք սնունդը փշորում, մանրում ենք, թացացնում թքով և ապա ուղարկում սաամոքսը և աղիքները, վորտեղ նա յենթարկվում ե արդեն քիմիական ուժեղ մշակման: Ի՞նչ կարիք կա այդ բոլորը անելու և ահագին ույժ ու ժամանակ գործ դնելու: Պատճառը պարզ է: անունդը հարկավոր է ոգտագործել աշխատանքի համար միայն այն դեպքում, յերբ նա փոխարկվել է արդեն մեր մարմինը կազմող նյութերի: ուրիշ կերպ ասած, նա այրվում է միայն այն ժամանակ, յերբ դառնում է մարդու մասնիկ:

ՍՆՈՒՆԴՆ ԻԲՐԵՎ ՆՅՈՒԹ՝ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ Յենթադրենք թե մենք խոզի միս ենք ուտում: Այս մսից պետք ե նախ պատրաստվի մարդկային միս, այսինքն մկանները, վորպեսզի հետո հնարավոր լինի շարժել այդ մկանները՝ ոքսիդացնելով նրանց մեջ գտնված նյութերը: Իսկ խոզի միսը (կամ վորեե այլ սնունդ) մարդկային միս դարձնելու համար անհրաժեշտ ե նախապես վերածել նրան ավելի պարզ քիմիական միացությունների, վորպեսզի հետո այդ պարզ նյութերից կառուցվեն մարմնի համար պետքական նյութերը: Բացի դրանից, շինանյութը աղիքներից պետք ե տեղափոխել կառուցման վայրը, այսինքն մկանները, ուղեղը, լյարդը, սիրտը և այլ գործարանները: Իսկ դրա համար անհրաժեշտ ե, ինարկե, վոր աղիքներում մարսված մնունդը դուրս գտա աղիքների պատերից և մանի արյան մեջ: Այս բոլորը ցույց ե տալիս, թե ինչքան բարդ ե այն աշխատանքը, վոր պիտի կատարի մարսողական խողովակը: Նրա մեջ սնունդը ամենից առաջ պետք ե ընդունի այնպիսի մի ձե, վոր կարողանա ծծվել աղիքի պատերի միջով, ուրիշ կերպ ասած, նա պետք ե զառնա հեղուկ, պետք ե մտնի լուծված վիճակի մեջ: Բայց հեղուկի փոխարկվելը դեռ բավական չե: Նա պետք ե փոխվի քիմիապես: Նա պետք ե վերածվի ավելի պարզ մարմինների, վորոնցից հետո հնարավոր ե նոր կառուցումներ կատարել: Սնունդի այդ բարդ մշակումը տեղի յե ունենում մեր մարսողական գործարանների զանազան մասերում, այն ևս առանձին մարսողական նյութերի ազդեցության տակ, վորոնք արտադրվում են թե մարսողական խողովակի պատերից և թե առանձին գեղձերից: Այսպես, որինակ, մեր բերանում սննդի հետ խառնվում ե առաջին մարսողական նյութը, վոր կոչվում է թուք և վորը կերակրի վորոշ մասերը թեթև փոփոխության ե յենթարկում: Մենք այսպես մանրամասն չենք նկարագրելու, թե ինչպես ե կատարվում մարսողությունը մարդու մեջ, այլ կերպատակնենք միայն նրա ամենակարևոր մոմենտները:

ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Քանի զեռ սնունդը գտնվում է ստամոքսում, մենք զեռ դիտելով կարող ենք ասել, թե մարդ ինչ կերակուր և կերել. Բայց յերբ դուրս ե գալիս ստամոքսից և ակսում դանդաղուն շարժվել աղիքների բաղմաթիվ գալարների միջով, յենթարկվում ե այնքան մեծ փոփոխությունների, վոր այլևս հնարավոր չե վորոշել նրա կազմությունը. Այդ փոփոխություններից հետո նա բոլորովին կորցնում ե իր նախկին տեսքը և դառնում ե մի հեղանյութ շփոթ, վոր կարող ե ծծվել աղիքների պատերի միջով արյան մեջ: Բայց նվ ե այն հմուտ խոհարարուհին, վոր յեփում ու մարսում ե սնունդը մարսողական գործարանների մեջ: Մենք ասել ենք արդեն, վոր այդ գործով զբաղվում են մարսողական գեղձերը, վորոնք արտադրում են իրենցից առանձին տեսակի հյութեր: Այդ հյութերը խառնվում են մեր ներս ընդունած կերակրի հետ, և հենց նրանք են հանդիսանում այն ույժը, վորի ազդեցության տակ սնունդը յենթարկվում է փոփոխությունների: Բայց ինչ ույժ ե նա. Նման է արդյոք նա մեր մարմնից դուրս յեղած ուժերի, թե նա մի առանձին «կենսական» ույժ է, վոր հրաշագործ փոփոխություններ և առաջ բերում միայն որգանիզմի մեջ և սրանից դուրս գոյություն չունի: Հնչակես տեսնում եք, հարցը շատ կարևոր և մարսողության եյությունը ըմբռնելու տեսակետից: Բայց հաճույքով պետք ե ասենք, վոր գիտնականները կարողացել են վոչ միայն պատասխանել այդ հարցին, այլ և կարողացել են յենթարկել իրենց այդ ույժը և հարկադրել նրան աշխատել այնպես, ինչպես այդ ոգտակար և կյանքի համար: Յեվ այդ ահա թե ինչպես են կատարել. Ամենից առաջ նրանք կարողացել են ստանալ մարսողական հյութերը մաքուր վիճակում: Դա պահանջել է գիտնականներից, իհարկե, հոկայական աշխատանք: Ակզեռում գիտնականները այդ հյութերը ստանալու համար գործադրել են չափազանց միամիտ միջոցներ: Որինակ, մի գիտնական այսպես և արել. հարկադրել ե քաղցած

կենդանիններին կլանել թելով կապած սպունգի կտորներ, և կլանելուց հետո դուրս ե քաշել ստամոքսից և հյութը քամել: Այդ ձեռք ստացվել ե վորոշ քանակությամբ ստամոքսային հյութ: Բայց այդ հյութը մաքուր չեր և բացի գրանից նրա հավաքելը կապված եր շատ մեծ դժվարությունների հետ: Անհրաժեշտ եր գանել մի ավելի հարմար միջոց: Յերկար վորոնումներից հետո՝ վերջապես ոռւս ականավոր գիտնական Պավլովին հաջողվում է գանել այդ միջոցը: Նա նկատում է, վոր շան ստամոքսում ստամոքսային հյութը սկսվում է հա-



Նկ. 33. Կեղծ կերակրում

վագվել այն ժամանակ, յերբ շունը զեռ նոր և տեսնում, նոր և հոտուում կերակրու. այսինքն յերբ նա չի կերել կերակրուը: Յեվ ահա Պավլովը. ոգտվելով այդ հանգամանքից, մտածում է ստանալ այդ հյութը մաքուր վիճակում: Նա վերցնում է շանը և բաց և անում նրա ստամոքսի վրա մի անցք և վերջինիս միջով մտցնում է ստամոքսի մեջ մի ապակյա (կամ արծաթյա) խողովակ, վորի բերանը ծածկած և խցանով (նկ. 33): Յերբ հանում է այդ խցանը հյութը ստամոքսից թափվում և խողովակի միջով տակը գրված բա-

ժակի մեջ: Բայց այդտեղ հանդիպում են առ մի մեծ դժվարության: Յերբ արգելում են շանը ուտել, անմիջապես դադարում են հյութի արտադրյունը, իսկ յերբ թողնում են, վոր նա ուտի, այն ժամանակ հյութի հետ խառնվում են կերակուրը և թուքը, և հյութը կորցնում են իր մաքրությունը: Ի՞նչ անել հապա: Պալովը գտնում են ձանազարիք: Նա կտրում են շան պարանոցը այնքան, վոր հասնում են կերակուրին, կտրում են վերջինս և նրա յերկու ծայրերը կարում են պարանոցի պատերի վրա՝ իրար կողք-կողք (նկ. 33), այնպես վոր ստացվում են այնտեղ յերկու անցք: Այդ ժամանակ շան կլանած կերակուրը զնում են վոչ թե ստամոքսը, այլ, անցնելով կերակրավողով, դուրս են գալիս պարանոցի վրա գտնված անցքից: Շունը այդ կերակուրը նորից են կլանում, բայց նա դարձյալ նույն ճանապարհով դուրս են գալիս: Այս ձեր՝ «կեղծ կերակրումը» շարունակվում են բավական յերկար: Յեկ այդ ժամանակ ստամոքսի գեղձերը սկսում են աշխատել, նրանք արտադրում են ստամոքսային հյութ, վոր մաքուր վիճակի մեջ խողովակի միջով թափվում են բաժակի մեջ: Ահա այսպիսի ճարպիկ միջոցներով հնարավոր են յեղնել հավաքել վոչ միայն ստամոքսային, այլ և մյուս մարսողական հյութերը: Ստանալով այս հյութերը մաքուր վիճակում, սկսել են ուսումնասիրել կերակրի վրա ունեցած նրանց ազդեցությունը: Յեկ ահա թե ինչ են պարզվել: Պարզվել են, վոր այդ հյութերը մարսում են կերակուրը և մարմնից դուրս, սովորական ապահյա անոթի մեջ, միայն անհրաժեշտ են, վոր այդ անոթի շուրջը լինի այնպիսի ջերմություն, ինչպիսին լինում են շարունակ մեր մարսողական գործարաններում: Այսպիսով հնարավոր են դարձել մարսողության ամբողջ գործողությունը առաջ բերել մի բաժակի մեջ, վորի մեջ գտնված կերակրահյութի վրա հարկավոր են միայն ներգործել այն հյութերով, վոր գտնվում են մարսողական գործարանների մեջ և այն կարգով, ինչ կարգով վոր ներգործում են այդ հյութերը կենդանի մարմնի մեջ: Այդ դեռ բավական չեն, Այդ մարսողական հյութերի առանձնահատկությունները են կոր-


ցրել են իրենց հանելուկային բնույթը: Անկենդան բնույթյան մեջ ևս գտնվել են բավական շատ մարմիններ, վորոնք նույնպես ոժոված են նույնպիսի հատկություններով, ինչ վոր այդ հյութերը: Բայց մենք այստեղ չենք կարող մտնել այդ հետաքրքրական հարցերի մանրամասնությունների մեջ: այսքանն ել բավական և ցույց տալու համար, վոր մարսողությունը ևս բացառություն չի կազմում և վոր մյուս կենսական յերեսույթների նման նա ևս յենթակա յե բնույթյան այն որենքներին ու կանոններին, վորոնց հանդիպում ենք մենք անկենդան մարմինների աշխարհում:

Մարսողության մասին մեր ասելիքը վերջացնելուց առաջ պետք են ասենք և այն, վոր մարսված սննդի ծծումը աղիք-ների պատերից կատարվում է շնորհիվ այն անթիվ անհամար փոքրիկ հեղուկամուղների, վորոնք խավի ձևով գտնվում են աղիքների ներսի մակերեսույթի վրա: Դրանց միջով ծծված կերակրահյութերը մտնում են այսուհետեւ արյան մեջ, վոր սոստորեն վողողում են խավի հյուսվացքը և ապա արյան շրջանառության շնորհիվ տարվում դեպի մարմնի բոլոր մասերը:

ԲԵ ԽՆՉԹԵՍ ԵՆ ՀԵՌԱՑՎՈՒՄ ՄԱՐՄՆԻՑ ԱՆՊԵՏՔ ՆՅՈՒԹԵՐԸ

Ամեն մի տնտեսության և ամեն մի արդյունաբերական ձեռնարկության մեջ ստացվում են միշտ ի միջի այլոց և վորոշ նյութեր, վորոնք անպետք են, սոստորաժեք, տնտեսության համար յերեսն նույնիսկ վնասակար: Գործարաններում այսպիսի նյութերը մասսամբ ծխի և գագերի ձևով հեռանում են և խառնվում ողի հետ, մասսամբ հեղուկների ձևով հոսում, թափվում են գետերը և մասսամբ ել ամուր վիճակում հավաքում են մարդիկ գործարանների բակում և այնտեղից դուրս տանում: Մարդկային մեքենայի աշխատանքի ժամանակ մամանակ ևս առաջանում են այսպիսի նյութեր: Նրանց մի մասը՝ ածխաթթուն և ջուրը՝ դուրս են գալիս

մեր մարմնից թոքերի միջոցով. այդ նյութերն, ինչպես գիտենք, խառնված են լինում մեր արտանչած ողի հետ: Մյուս ավելորդ նյութերը ամուր և կամ կիսանեղուկ վիճակում գուրս են գալիս մեր աղիքներից արտաթորելու ժամանակ: Յերրորդ տեսակի նյութերը քրանքի ձևով գուրս են գալիս մեր մաշկից գեղի մարմնի մակերևույթը անթիվ, անհամար քրտնային գեղձերի միջոցով, վորոնք փոքրիկ կծիկների ձևով գտնվում են մեր մաշկի մեջ (նկ. 2): Բայց այդ գեռ բոլորը չեն: Արյան մեջ կուտակվում են շարունակ և այնպիսի նյութեր, վորոնք չեն կարող հեռանալ նրանից վոչ աղիքների և վոչ եւ թոքերի միջոցով:



Նկ. 34, Յերիկամունքները (1) և միզափամփուշտը (3):

են զանազան տեսակի «այրման արդյունքներ», վորոնք վերջը մտնում են արյան մեջ: Նրանց մեջ կան այնպիսի ուժեղ թունավոր նյութեր, վոր կարող են մեր մարմնը թունավորել մի յերկու որվա ընթացքում: Պարզ է, ուրեմն, վոր այդ նյութերը ևս պետք է հեռանան մեր մարմնից և ինչքան կարելի յե շուտ: Ահա բջիջային տնտեսության այդ զանազան ավելորդ նյութերը մարմնից հեռացնելու պաշտոնը կատարում են մեր յերիկամունքները (նկ. 34): Թէ

նրանց աշխատանքը ինչքան կարենոր և մարմնի համար, պարզ կերպով յերկում և այն փորձերից, վոր կատարել են գիտակալանները կենդանիների վրա: Յերը հեռացրել են կենդանու մարմնից նրա յերկու յերիկամունքները, կենդանին, յերեան հանելով թունավորման նշաններ, մեռել ե յերկու յերեք որից հետո Յերիկամունքների մի քանի հիվանդությունների ժամանակ թունավորվում ե և մարդու մարմինը, վորից և առաջանում ե մահ: Դրա համար ել զարմանալի չեն, վոր մարդու մեզը սրսկելով վորեն կենդանու արյան մեջ կարող ենք թունավորել նրան: Նշանակում ե, յերիկամունքների միջոցով մեզի հետ միասին հեռանանում են մարմնից նրա մեջ առաջացած զանազան տեսակի թունավոր նյութերը:

Բայց ի՞նչ կազմություն ունեն յերիկամունքները և ի՞նչպես են աշխատում նրանք: Հավանորեն ամենքու գիտեք, վոր մարդ ունի յերկու հատ յերիկամունք և վոր նրանք դանդում են մեր վորովայնի խոռոչի խորքում վողնաշարի գոտիկատեղի մասի յերկու կողմերում: Դեպի պմեն մի յերիկամունք գալիս և մի հատ չափազանց հաստ (յերիկամունքի մեծության համեմատությամբ) արյունատար անոթ, վոր կոչվում է յերիկամունքային զարկերակ: Սա, յերիկամունքային նյութի մեջ ճյուղավորվելով, տալիս ե բազմաթիվ փոքրիկ վոլորուն անոթիկներ, վորոնցով շրջապատված են յերիկամունքի մեջ գտնված առանձին կծիկները և անցքերը: Առանց մանրամասնությունների մեջ մտնելու կասենք միայն, վոր յերիկամունքների միջով հօսող արյունից անշատվում են ջուրը և զանազան նյութերը, վորոնք այնուհետև միզի ձևով դուրս են գալիս յերիկամունքներից և միզափար խողովակներով զնում, թափվում միզափամփուղտը: Սա վոչ այլ ինչ է, բայց յեթե մկանային պատեր ունեցող մի պարկ: Նկ. 34-ի վրա պարզ կերպով յերեսում են յերիկամունքները, զարկերակները, վենաները կամ յերակները, միզափար խողովակները և միզափամփուղտը: Միզափար խողովակներով մեզը շատ բարակ շիթով շարունակ թափվում

և միզափամփուշաց: Յերբ վերջինս լցվում ե միզով, այն ժամանակ մասսամբ մեր կամքով, մասսամբ ել անկախ մեր կամքից, սեղմվում են նրա պատերը, և մեզը դուրս ե զալիս մարմնից: Ահա այդ ճանապարհով ե ազատվում մեր մարմինը իր մեջ առաջացող զանազան վնասակար ու թունավոր նյութերից:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՄԱՆ ԱՇԽԱՏՈՒՄ Ե ՌԻԹՄԻԿ ԿԵՐՊՈՎ

Մարդկային ամեն մի աշխատանք հանդիսանում ե մի վորուե գործողության կրկնությունը. դիտեցեք կար անողի, հող քանդողի, փայտ սղոցողի, մեքենայով գրողի աշխատանքը, և ամեն դեպքում կնկատեք, վոր մարդկային ձեռքերի միենույն շարժումները շատ ու շատ անդամ կըրկնվում են աշխատանքի ժամանակ: Շարժումների այդ կրկնությունը ստեղծում ե մի տեսակ չափ, աշխատանքի համաչափություն, վոր և հեղտացնում ե աշխատանքը:

Սյդպես ե և մեքենաների աշխատանքը. վերցրեք շոգեմեքենան, ելեքտրական շարժիչը, խտառի դադարիչը, ավտոմոբիլը, և ամեն տեղ կտեսնեք միենույն գործողությունների համաշափ կրկնությունը: Աշխատանքն ու չափը անխպեկէ կերպով կապված են միմյանց հետ:

Իսկ թուչ ենք տեսնում մենք մեր մարմնի մեջ: Յենթարկված են արդյոք նրա մասերը մեքենաների աշխատանքի մեջ տիրապետող այդ չափի որենքին թե վոչ: Բավական ե վոր մենք ականջ դնենք մեր սրտի բարախումին, մեր շնչառական շարժումներին, վոր անմիջապես դրական պատասխան տանք այդ հարցին: Մեր գործարանները աշխատում են վորոշ չափով: Քանի դեռ չեր հնարված ժամացույցը, մարդիկ փոքրիկ ժամանակամիջոցները չափում եյին սեփական արյան զարկերով: Յեվ մենք գիտենք այժմ, վոր քանի մարմինը նորմալ վիճակի մեջ ե, զարկերի չափը փոփոխության


չի յենթարկվում: Բայց միայն սիրտն ու թոքերը չեն, վոր այդպես չափով են աշխատում: Մարսողական գործարանների գործնեյությունը, հյութերի արտադրությունը այդ գործարանների գեղձերից, աղիքների շարժումները, բոլորը կատարվում են չափով: Նույնիսկ մարդկային կյանքի կարգավորությունը՝ քնի և արթուն վիճակի, աշխատանքի և հանգստյան իրար հաջորդումը՝ յենթակա յե վորոշ և կանոնավոր չափության մեջ ես աշխատանքի և հանգստյան ժամանակները կանոնավոր կերպով հաջորդում են իրար նույնիսկ մեր մարմնի բարեխառնությունը յենթակա յե ութմիկ տատանման: Վաղ առավոտվանից սկսում ե նա բարձրանալ, ցերեկվա ժամը 4—5 հասնում ե Ցելսիուսի 37° -ի և ապա սկսում ե դանդաղ կերպով իջնել, գիշերը, ժամը 4—5-ին հասնում ե արդեն 36° -ի: Յեվ այդ կրկնվում ե ամեն որ, ամեն տարի: Նույնիսկ մեր հասակը վոր թվում ե թե անփոփոխ և մնում, նույնպես յենթակա յե շարունակ վորոշ կանոնավոր փոփոխությունների. առավոտը, գիշերվա հանգստից հետո, նա 1—2 սանտիմետրով ավելի բարձր և լինում, քան յերեկոյան, աշխատանքից հետո: Յերեկվա ընթացքում հասակը աստիճանաբար կարճանում ե, իսկ գիշերը՝ յերկարում: Յերկար ժամանակ վոտքի վրա կանգնող մարդը վոչ միայն չի յերկարում, այլ ընդհակառակը, կարճանում ե: Այսպես, ուրեմն, մարդկային մարմնի մեջ ևս տիրապետում ե չափի որենքը ճիշտ այնպես, ինչպես տիրապետում ե աշխատանքի աշխատանքի մեջ:

ՈՒՂԵՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մարդու ուղեղը բաղկացած ե յերկու մասից՝ գլխի ուղեղից (նկ. 35) և վողնուղեղից: Գլխի ուղեղը գտնվում է գանգի մեջ, վողնուղեղը՝ վողնաշարի ներսում: Մտավոր աշխատանքի տեսակետից կարևոր գործարան ե հանդիսանում, իհարկե, գլխի ուղեղը: Մարդու այդ ուղեղա-

մասը չափաղանց մեծ չափերի յև հասնում և կշռում ե միջին հաշվով 1.300 գրամ, կազմելով մարմնի ամբողջ ծանրության մեկ քառասունենինգերորդ մասը:

Գլխի ուղեղի մի մասի վերաբերյալ արգեն խոսել ենք, այդ մասը կազմում է վողնուղեղի անմիջական շարունակությունը և կոչվում է յերկայնաձիգ ուղեղ: Ինչպես տեսանք, նրա մեջ ե գտնվում ջնշառական կենտրոնը: Բացի գրանից, այդ ուղեղամասում են գտնվում և մի շարք այլ կարեռը նյարդային կենտրոններ, այն ե՝ ծամելու, կլանելու, փսխելու,




Նկ. 35. Մարդու ուղեղը կողքից նայած

քրտինք արտադրելու և այլ կենտրոնները: Յերկայնաձիգ ուղեղից են սկիզբ առնում և մի շարք կարեռը նյարդեր:

Յերկայնաձիգ ուղեղը շարունակությունը կազմում է մի ջին ուղեղը. սրա զանազան մասերում նույնպես զլատնվում են կարեռը կենսական կենտրոններ: Որինակ, փոքր ուղեղի մեջ ե գտնվում այն կենտրոնը, վոր հսկում և մեր շարժումների կանոնավորության վրա և զեկավարում ե մարմնի հավասարակշռությունը: Միջին ուղեղի այլ մասերում գտնվում են մեր զգացմունքների արտահայտության կենտրոնները («միմիկայի», լացի, ծիծաղի և այլն):

Վերջապես գլխի ուղեղի կիսագնդերը պարունակում են իրենց մեջ բազմաթիվ նյարդային կենտրոններ, վորոնք զեկավարում են մեր ամբողջ հոգեկան կյանքը:

Հնարավորություն չունենալով այստեղ գլխողության նյութ գարձնել այդ կարեռը գործարանը, մենք բավականանալու յենք միայն նրա մի քանի հիմնական մոմենտների:




Նկ. 36. Գլխատակած գրանը կատարում ե սեֆլեքսային գործողություններ:

մասին հիշատակությունն անելով: Ամենից առաջ պետք ե պարզենք թե ինչ ե սեֆլեքսը:

Յերեակայեցեք, թե ձեր առաջ գտնվում է մի գորտ, վորի գլուխը կտրել եք փոքր ինչ առաջ (Նկ. 36): Նա վոչ տեսնում է, վոչ լսում և վոչ ել ցավ ե զգում: Բայց նա վողջ եւ Այդ գեռ բավական չե: Նա նստած ե այնպես, ինչպես նորմալ վիճակում գտնվող մի գորտ, և յեթե ձեռք տաք նրան, նա կգործե մի կամ յերկու ցատկում: Տեսնենք այժմ,

թե այդ գլխատված գորտը կարմղ և կատարել վորես «իմեցացի» գործողություն թե վոչ: Կաթեցնենք նրա թաթի վրա մի կաթիլ թթու: Դորան անմիջապես կբարձրացնի իր մյուս թաթը, և մոտեցնելով թթվի կաթեցրած տեղին, կսկսի սրբել և հեռացնել մաշկի վրայից ուտիչ հեղուկը, վոր գրբդում և նրան: Գորտի կատարած այս գործողությունը կոչվում է ռեֆլեքս: Բացատրենք այդ յերեսչթը Յերբ թթուն կաթեցնում ենք նրա թաթի վրա, դրանով գրգռում ենք գորտի մաշկի մեջ գրտնվող նյարդային վերջավորությունները: Այդ գրգիռը, անցնելով նյարդի միջով վորոշ արագությամբ (գիտնականները չափել են այդ արագությունը), գնում է դեպի մեջքի ուղեղը: Դրանով գործը չի վերջանում (նկ. 37): Մեջքի ուղեղի բջիջները, կատարելով վորոշ աշխատանք, հաղորդում են այդ գրգիռը միմյանց. Վերջը գրգիռը հասնում է այն բջիջներին, վորոնցից յերկար թելեր են ձգվում դեպի մյուս թաթի մկանները: Այսուհետև գրգիռը, գնալով այդ



Նկ. 37. Ռեֆլեքսի աղեղը

թելերով դեպի մկանները, հարկադրում է նրանց կծկվել: Կծկումների հետևանքը լինում է այն, վոր թաթը կատարում է նպատակահարմար շարժումներ: Զորուանաք, վոր այդ բոլորը կատարում են գլխատված գորտը, վորից հեռացված են գլխի ուղեղը՝ գիտակցության գործարանը: Դորտի որդանիզմը կատարում է զուտ մեքենայական մի գործողություն: Ահա կենդանի որդանիզմի այդպիսի մեքենայական գործողությունն է, վոր կազմում է ռեֆլեքս: Մեղ կարող են ասել. «Գորտը մարդու

համար չի կարող որինակի ծառայել. յերբ մենք շարժվում ենք կամ յերբ մի ձեռքով քորում ենք մյուս ձեռքը, մենք կատարում ենք գործողությունը, պարզ գիտակցելով նրա իմաստը, և վոչ թե մեքենայորեն»: Այս ձեկի առարկությունը վոչինչ չի ասում, վորովհետեւ, նախ մարդիկ կատարում են շարունակական գիտակցելու (որինակ, քնի ժամանակ քորում են գրգռվող մասը), և ատա՝ մարդկանց վրա յել կատարել են այնպիսի փորձեր, ինչպիսի փորձեր վոր կատարել են գորտերի վրա: Պատերազմի մամանակ ավստրիական բանակում զինվորներին մահապատճի եյխն յենթարկում գլխատման միջոցով: Մի քանի գիտնականների թույլատրվել են փորձեր կատարել գլխատված դիակների վրա: Յեվ ահա այդ փորձերի ժամանակ նկատել են, վոր յերբ դիակի վոտի վրա թթու յեն կաթեցնում, դիակն իսկույն հետ ե քաշում վոտը և ձեռքով քորում գրգռված տեղը, մի խոսքով կատարում են ույն գործողությունը, ինչ վոր գլխատված գորտը: Նշանակում է, այնպիսի մի բարդ գործողություն, ինչպիսին ման գալն է, վորի ժամանակ տասնյակ մկաններ են մասնակցում, կարող են կատարվել անգիտակից կերպով, մեքենայորեն, ռեֆլեքսի միջոցով: Հայտնի յեւ, վոր յերբեմն զինվորները յերկար ու հոգնեցուցիչ ճանապարհ կտրելու ժամանակ քայլում են քնած վիճակում: Այս դեպքում արդեն կենդանի մարդիկ են կատարում քայլելու գործողությունը մեքենայորեն, ռեֆլեքսի միջոցով:

Մարդ հաճախ անգիտակից և ուրիշ նյութի մասին մտածելով, կարող ե վոչ միայն ման գալ այլ և վաղել: Վաղելու ժամանակ մարդկային մեքենայի մեջ բազմաթիվ ռեֆլեքսներ են աշխատում համերաշխ և արագ կերպով: Ահա մեր առաջ գտնվում է մի վազող մարդ: Նրա աչքերն առանձին նյարդի միջոցով աղջանշաններ են հազորդում ուղեղն այն բոլոր խոչընդոտների մասին, վոր գտնվում են նրա ճանապարհին և վորոնց վրայից պետք ե անցնի նա: Ուղեղից այնուհետև համապատասխան գրգիռ-

Ներ են գնում դեպի վոտների ու ձեռների մկանները և հար-
կադրում նրանց մի մասին մերթ կծկվել ու մերթ թուլա-
նալ, իսկ մյուս մասին՝ մնալ շարունակ լարված վիճակում:
(Մեր նկարի մեջ վազողի ձեռքը բուռնցք ե կազմել, վոր
նույնպես տեղի յե ունենում նյարդի միջոցով՝ ուղեղից
ստացված գրգիռի ազդեցության տակ):

Այժմ հարց ե առաջանում, արդյոք ոեֆլեքսը չ՞ մարդու
գլխի ուղեղում կատարվող գիտակցական մտավոր գործնե-
յության հիմքը: Մի քանի ականավոր գիտանականներ
իրենց կատարած աշխատանքների հիման վրա այդ հարցին
տվել են գրական պատասխան: Այդ գիտնականների մեջ նշա-
նավոր տեղ են գրավում հետազոտողներ՝ պրոֆեսոր Մե-
չենովը, վոր Վախճանվել և 1905 թվին, և ակադեմիկոս
Պավլովը, վոր այժմ ել շարունակում է իր արդյունավետ
աշխատանքները: Գիտության այդ ամենագժաման բնագա-
վառի վրա պայծառ լույս են սփռել մանավանդ Պավլովի
աշխատանքները: Ի՞նչ գլխավոր արդյունքներ են տվել նրա
աշխատանքները:

Պավլովը, ուսումնասիրելով մարսողության գործողություն-
ները, հայտնագործել ե մի վերին աստիճանի հետաքրքրական
յերևույթ, այն՝ վոր կենդանիների մեջ կարելի յե առաջ
բերել նոր ոեֆլեքսներ, վորոնք մինչեւ այդ գոյություն չեն
ունեցել: Որինակով պարզենք մեր ասածը: Մենք արդեն
գիտենք, վոր Պավլովը մաքուր ստամոքսային հյութ ստա-
նալու համար դիմում եր «կեղծ կերակրման» միջոցին: Յերբ
շունը մսի կտորը բերանն ե առնում, նրա ճաշակելիքի
նյարդերը, վորոնք վերջանում են լեզվի մեջ, զրդովում են,
գրգիռն այդտեղից նյարդերի միջոցով հաղորդվում ե ուղե-
ղին, իսկ այստեղից ել այլ նյարդերի միջոցով անցնում ե
ստամոքսի գեղձերին, վորոնք և սկսում են իրենցից հյութ
արտադրել: Այսպիսի ոեֆլեքսը Պավլովն անվանում է «պայ-
մանագուրկ» ոեֆլեքս, վորովհետեւ դա ընդածին ե կենդա-
նու մեջ և յերեան ե գալիս առանց ուսուցման: Բայց յեթե
շանը կերակրելու ժամանակ զանգահարենք և այդ դործու-

դությունը կատարենք իրար յետեից մի քանի անգամ, այն
ժամանակ կարելի յե առաջ բերել զանգահարման վերաբեր-
մամբ մի նոր ոեֆլեքս: և իսկապես, այնուհետև հենց վոր
հնչե զանգի ձայնը, շան ստամոքսից կսկսի արտազրվել
ստամոքսային հյութը, յեթե նույնիսկ չկերակրենք շանը:
Ի՞նչ ե առաջանում այդտեղ: Գրգիռը (զանգի ձայնը) լո-
ղության նյարդերով հաղորդվում ե ուղեղին, և այստեղից
նոր գրգիռը ուղղվում ե դեպի ստամոքսի գեղձերը և հար-
կադրում նրանց աշխատել:

Զանգի ձայնի հետ կապված այդ ոեֆլեքսը առաջ գոյու-
թյուն չի ունեցել: Նա առաջացել ե միայն իրար յետեից
մի քանի անգամ կրկնված փորձերի հետևանքով: Բայց
նա կայուն չե, յեթե մենք մի քանի որ շարունակ զանգա-
հարենք և այդ ձեռվ առաջ բերենք ստամոքսային հյութ՝
առանց շանը միաժամանակ կերակրելու, ապա զանգի ձայնի
և հյութ արտադրելու աղղեցությունը հետզհետեւ կթուլանա
և վերջը ոեֆլեքսը բոլորովին կդադարի գոյություն ունե-
նալուց: Նշանակում ե, այդ ոեֆլեքսը յերեան ե գալիս միայն
վորոշ պայմաններում, դրա համար ել Պավլովը անվանել ե
նրան «պայմանական»: Կենդանիների ձեռք բերած պայմա-
նական ոեֆլեքսներն վոչ այլ ինչ են, բայց յեթե նրանց
կյանքի փորձը նրանց հոգեկան գլխավոր բովանդակու-
թյունը: Սակայն այդ ոեֆլեքսը ևս ընթանում ե նույն
պլանով, ինչ վոր պայմանագուրկը: Այստեղ ևս պատճառ ե
հանդիսանում արտաքին գրգիռը վոր գրմից հաղորդում ե մի
վորոշ եներգիա: Այդ եներգիան կարծեք թե ապատում ե
մի այլ եներգիա, վոր կուտակված վիճակում գտնվում
ե զգայարանների մեջ, ստացվում ե նյարդային մի հոսանք
գեղձի ուղեղը: Այստեղ եներգիան հաղորդվում ե մի բջիջից
մյուսին, վերջը նյարդային գրգիռի ձեռվ ուղղվում ե դեպի
գեղձը և հարկադրում նրան աշխատել: Եներգիայի այս նույն
ճանապարհն ենք նկատում թե պայմանական և թե պայմանա-
գուրկ ոեֆլեքսների ժամանակ. ինչպես տեսնում եք, վոր
մի տեղ չենք նկատում այնպիսի մի ույժ, վոր գոյություն

Հունենար մեղ շրջապատող բնության մեջ, չենք նկատում այսպես ասված «կենասկան ույժը», «հոգին», «հոգեկան սկզբունքը» կամ մի այլ սկզբունք, այդ բոլորը յերեան են հանում միայն այն մարդկանց տղիսությունը, վորոնք, անկարող լինելով բացատրել և ուսումնասիրել ուղեղի գործնեցության բարդ յերեսութիւնները, ստիլված են յեղել զիմել այդպիսի մտածածին ու շինծու «սկզբունքների» ոգնության:

ԹԵ ԻՆՉՊԵՍ Ե ՀԱՄԱԶԱՅՆԵՑՎՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԶԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մենք տեսանք արգեն, վոր այդ համաձայնեցումը տեղի յի ունենում նյարդերի միջոցով: Սակայն, վոչ միշտ: Ահա ձեզ մի որինակ: Յերբ կինը հղիանում է, նրա կրծքի գեղձերը սկսում են հետզհետե փոփոխության յենթարկվել: աճում, ուռչում են, նրանց մեջ սկսում է կաթ առաջանալ: Ի՞նչպես ե այդ տեղի ունենում, ի՞նչն ե պատճառ հանդիսանում նրանց այդ նոր գործնեյության:

Մի շատ հասարակ փորձ ցույց է տվել գիտնականներին, վոր նյարդերն այդտեղ դեր չեն կատարում: Փորձը կատարել են այսպես. վեցըրել են ծովային խողովկը, կտրել են նրա կաթնային գեղձերից մեկը և պատվաստել մարմնի, մի այլ մասի վրա: Պարզ է, վոր այդ անդամահատության ժամանակ կտրել են գեղպի գեղձը գնացը նյարդը, և իր նոր տեղում այդ գեղձը կապված չե յեղել մնացած մարմնի հետ նյարդերով: Այսուհետեւ այդ ծովային խողովկը հղիանում է. նրա կաթնային գեղձերը սկսում են ուռչել, և մյուսների հետ միասին ուռչում ենակ այն գեղձը, վոր կտրված և պատվաստել յեղել նաև գնացը նյարդը գնացը նյարդը, և նոր տեղում այդ գեղձը առաջանանաւ: Յերբ վահանաձև գեղձը թույլ է աշխատում մանկության հասակում, ապա յերեխայի աճումն ու զարգացումը չափազանց յետ է մնաւ, և մեծանալուց հետո դառնում է նա ապօչ կամ կրեաին:

Գիտնականները ջանասիրությամբ սկսել են վորոնել այդ կապը և գտել են, վոր այդ կապը կարող է լինել միայն արյունը: Զի՞ վոր արյունն է, վոր շրջում է մեր ամբողջ մարմինը, նա յե, վոր վողողում է այն գործարանները, վորտեղ աճում է սաղմը և, միայն նա կարող է ընդունել իր մեջ մարմնի վորեւ մասում արտադրված նյութերը և տանել մարմնի այն մասը, վորտեղ կարող են նրանք ներգործություն ունենալ:

Ստուգության համար կատարել են բազմաթիվ փորձեր, և բոլոր փորձերը հաստատել են միանգամայն այդ միտքը: Պարզվել է, վոր մեր մարմնի մեջ կան մի շարք գործարաններ՝ «արյունային գեղձեր», վորոնք պատրաստում և արտադրում են արյան մեջ նյութեր, վորոնք գրգռում են մարմնի այս կամ այն մասերին և հարկադրում նրանց ցույց տալ ուժեղ գործնեյություն: Որինակի համար մենք կհիշենք այսուեղ այդ արյունային գեղձերից միայն յերկուսը: Մեկը դրանցից գտնվում է մեր պարանոցի վրա, կոկորդի առջևի մասում և կոչվում է վահանաձև գեղձ: Յերբ նա լավ չի զարգանում կամ անբավարար գործնեյություն է ցույց տալիս, մի շարք գործարաններ սկսում են աշխատել անկանոն կերպով, և մարդու ամբողջ կերպարանքը փոխվում է: Նրա գեմքը ուռչում է, աչքերը կիսափակ դրության մեջ են մնում, մաշկը խորշումներ ե տալիս, մտավոր ընդունակությունները թուլանում են: Յերբ վահանաձև գեղձը թույլ է աշխատում մանկության հասակում, ապա յերեխայի աճումն ու զարգացումը չափազանց յետ է մնաւ, և մեծանալուց հետո դառնում է նա ապօչ կամ կրեաին:

Բայց յերբ այդպիսի յերեխային կերակրում են հորթի և կամ այծի վահանաձև գեղձի կտրոներով, նա ուղղվում է և սկսում աճել կանոնավոր ձևով:

Այս գեղձն ունենում է և այլ հիվանդություններ: Յերբեմն աճում է նա շատ ավելի, քան պետք է, այդ գեղձը պատվաստ մարդ շատ գրգռված, նյարդային վիճակի մեջ է ընկնում, կորցնում է իր հանգիստ քունը, շարունակ քրտնում է, շատ

և ուստում, բայց նիհարում ե, աչքերն ուռչում, դուրս են ընկնում և այլն։ Այդպիսիներին բուժելու համար հեռացնում են վահանաձև գեղձի մի մասը և այդպիսով թուլացնում նրա գործնեյությունը։

Մյուս արյունային գեղձը գտնվում է մեր ուղեղի տակ, և յերբ յերեխայի այդ գեղձն ուժեղ կերպով ե աշխատում, այսինքն ավելի, քան սկիաք ե, այն ժամանակ յերեխան արագ աճում, մեծանում ե և դառնում հսկա։ Իսկ յերբ թույլ ե գործում, մարդու աճումը յետ ե մնում և մարդ կարող ե մնալ թզուկ։ Նշանակում ե, այդ գեղձը ղեկավարում է մեր մարմնի աճումը։

Տեղի սղության պատճառով մենք չենք կարող խոսել այս-
տեղ և այլ արյունային գեղձերի մասին, վոր գտնվում են
մեր մարմնի մեջ։ Բայց կասենք միայն, վոր նրանք բոլորն
ել իրենցից արտադրում են դեպի արյունը չափազանց կարեոր
նյութեր, առանց վորոնց մեր մարմնի կանոնավոր կյանքը
կիսախտվեր միանդամայն։

ԱՄՓՈՓՈՒՄՆ

Կարդալով այս գրքույկը, ընթերցողը տեսնում է պարզ կերպով, թե ինչպես մարդու և մեքենայի համեմատությունը հնարավոր ե դարձնում ըմբռնել մեր սեփական կյանքը և թափանցիկ այն խորհրդավոր յերևույթների խորքը, վոր կատարվում են մեր մարմնի մեջ։

Այդ համեմատության գլխավոր արդյունքները համառոտ ձևով արտահայտելու համար կբերենք մի աղյուսակ, վորաեղ մարդու և մեքենայի կատարած գործերը դրված են իրար կողք-կողքի։

Մեքենաների գլխավոր առանձնահատկությունները

1. Յուրաքանչյուրը մեքե-
նա ունի իր առանձնահատ-
կությունը կազմությունը, իր կա-
ռուցման վորոշ սիստեմը։

2. Մեքենան շարժման մեջ
ե դրվում շնորհիվ վրսից
ստացվող եներգիայի և կանոն
և առնում, հենց վոր դա-
դարում ե այդ եներգիան։
Իր աշխատանքը ընթացքում
մեքենան յենթարկվում է
եներգիայի պահպանության
որենքին։

3. Մեքենայի աշխատանքը
կախված ե նրա կազմու-
թյունից, տարրեր սիստեմի
մեքենաները յերեան են հա-
նում տարրեր ձեի աշխա-
տանք։

4. Մեքենան կարող է ոժ-
տված լինել իր աշխատանքի
ընթացքը կանոնավորելու
հատկությամբ։

Մարդու մարմնի գլխավոր
առանձնահատկությունները

1. Մագլայշին մարմինն ունի
իր առանձնահատուկ և չափա-
գանց բարդ կազմությունը, վոր
ժառանգականության միջոցով
նույնությամբ փոխանցվում ե
ծնողներից ղավակներին։

2. Մարդկային մարմինը ապ-
րում ե ի հաշիվ այն եներգի-
այի, վոր ստացվում է դրսից՝
սննդի հետ միասին։ Առանց
սննդի (եներգիայի) նա ապ-
րել չի կարող։ Իր կյանքի ըն-
թացքում մեր մարմինը կատա-
րելապես յենթակա յե եներ-
գիայի պահպանության որեն-
քին։

3. Կատարված աշխատանքի
վորակը կախված է մարդկային
մարմնի կազմության առանձ-
նահատկություններից։ Ամբա-
կազմ մարդը այլ աշխատանք ե
յերեան հանում, թուլակազմը՝
այլ։

4. Մարդկային մարմինը ոժ-
տված է ինքնականոնավորման
շատ մեծ ընդունակությամբ։
Բավական ե հիշել թեկուզ
շնչառական շարժումները, վո-
րոնք շատ նուրբ կերպով հար-
մարվում են յուրաքանչյուր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

վայրկյանում մարմնի ունեցած
թթվածնի պահանջներին:

**5. Մեքենայի մեջ կարող ե
հավաքվել ու կուտակվել
եներգիայի պաշար, վոր այ-
նուհետև հետզհետեւ ազատ-
վելով, գործի մեջ կդնի մե-
քենան:**

**5. Մեր մարմինը սննդից
պատրաստում ե եներգիայի
պաշար, վոր պահպանվում ե
մարմնի մեջ բավական յերկար
ժամանակ: Այդ եներգիայի
պաշարը ծախսվում ե այն ժա-
մանակ, յերբ զգացվում է նրա
կարիքը, և այնքան, ինչքան
անհրաժեշտ ե:**

**6. Մեր մարմնի կյանքի ըն-
թացքը կախված է մարմնի կաղ-
մությունից և ընդհանուր առ-
մամբ կախումն չունի ար-
տաքին պայմանների այս
կամ այն փոփոխություններից
(որինակ, թե տաք յեղանակին,
թե սառնամանիքին մարմնի
ջերմաստիճանը լինում է մո-
տավորապես 37° 8ելիուսի):
Սակայն դրսից մեր մեջ մուտք
գործած եներգիան կարող ե
զգալի կերպով փոխել մեր
կյանքի յերևույթների ուղ-
ղությունը:**

Այս համեմատությունը պարզ կերպով ցույց է տալիս այն
նմանությունը, վոր կա մարդու մարմնի և մեքենայի մեջ
բոլոր ելական առանձնահատկությունների տեսակետից:



Մարզը — մերկնա	b2
Թե ինչ ույժ է աշխատում մերենաների մեջ	3
Մարզը աշխատելու ժամանակ՝ ծախսում է իր մորթնիք մի մասը	5
Մարզը և աշխատանք աշխատանքի ժամանակ իրենցից արագութեամբ	11
և ջրային գուրգը .	14
Այրումից տարանում է մեր մարմինը .	14
Մեր այրում ենք բոյակերի հաշին .	16
Նորթերի ըրջանառությունը բոյ թյան մեջ .	18
Մարմնի և նրա մասերի լրացքը .	20
Թե ինչ և բաց անում մեր տաշ ժիկուսկորոր .	22
Մարդկային մերենանի կմախքը .	24
Մարդկային մերենան ուղիղ և աշխատում .	38
Մարդկային վասկրեսի մասերիալը .	40
Դումբինի կազմությունը .	41
Դումբինի աճումը և մերանորոգումը .	42
Մեր վասկրեսի և անկենդան մարմինները .	44
Կմախքի աճում թյանը .	47
Մարդու վասկրեսի հարմարված են աշխատանքի հմախքի առանցքը վազնաշարն և .	50
Գլխի կմախքը .	51
Բազուկի գոտին և նրա նշանակությունը .	52
Կմախքի, կրծքի և փոքր սաժմները .	56
Ազատ վերջավարությունները .	58
Թե ինչպես են աշխատում մկանները .	60
Թե փառակ և արցում կլոնը և կլակը .	62
Թե ինչպես և արածում թթվուժնը մարմնի մեջ .	73
Մրտի կրկնակի գերը .	75
Մրցնասար անօթների աշխատանքը .	76
Թե ինչու համար նշառությունը անհրաժեշտ է .	79
Թե ինչպես են աշխատում թթվերը .	84
Թե ինչպես և գեղագրությունները .	86
Սնունդն իբրև եներգիայի ազդյուր .	91
Սնունդն իբրև այօթի մարմնի կառուցման համար .	99
Մարսովական պրօտարանների աշխատանքը .	101
Թե ինչպես են նույզիում մարմնից անպետք .	102
Մարդկային մարմինը մերենաների նման աշխատանքը .	103
Պողոսի աշխատանքը .	104
Թե ինչպես և համաձայնեցվում մարդկային մասերի աշխատանքը .	105



1531

45 4.

Н. П.



М. Гремяцкий
**Человек -
Машина**

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10.